

Ջերմանց միախառնություն

Ա

Հալաբուսի համառոտ եւ պատմությունը նախագիտության եւ ստածումը բժշկության վասն երեք ազգ ջերմերոյն միայն ասացեալ:

Պարտ է ամենայն մարդոյ որ զբժշկական արուեստս 'ի հոգս է առել, եւ ունիցի փոյթ բժշկության գիտարեալն, որ քննէ աղէկ եւ իմանայ վասն ամենայն ցեղ ջերմանցն գիտութեան: Եւ զայն պատճառսն որ զօտար ջերմն ընծայեն՝ 'ի մարմնոյն 'ի զատ պահէ. եւ իւր ջանսն առաւել 'ի ջերմերոյն բժշկութեանս առնէ, քան վասն այլ ազգ հիւանդութեանցն: Եւ ոչ մի փոքր 'ի հիւանդութեանցն դիպելոց. զի սակաւ հիւանդութիւնն, յորժամ անփոյթ լինի եւ յամէ, զօրացեալ բազմանայ եւ յարթէ մարմնոյն:

Արդ վասն ջերմանցն գիտութեան առաւել պետ առնել արժան է յաղագս երից պատճառանաց: Իսկ առաջին պատճառն այն է՝ որ ջերմն քան զամենայն ցեղ հիւանդութիւն 'ի մարդիկ շատ հասնի. եւ այլ ինքն լինի պատճառ բազում եւ այլ ցեղ հիւանդութեանց: Եւ երկրորդ պատճառն այն է՝ որ ամենայն ցեղ հիւանդութիւն 'ի յանդամ մի լինի կամ 'ի յերկուս, կամ 'ի սակաւ մասունս մարմնոյն գործեն զցաւն. իսկ ջերմն բովանդակ ընդ ամենայն մասունս մարմնոյն լինի: Իսկ երկրորդ պատճառն այն է՝ որ ջերմանն սկիզբն 'ի սրտէն լինի, եւ 'ի սրտէն սփռի 'ի ձեռն շնչաւոր երակացն բովանդակ ընդ ամենայն մարմինն: Ապա պարտ է բժշկաց քննել եւ իմանալ աղէկ, եւ 'ի միտ առնուլ վասն երեք ազգ ջերմերոյն նախագիտութեան. նոյնպէս եւ զիւրեանց ստածումն եւ զբժշկութիւնն իմանալ, եւ անսղալ ստածել եւ բժշկել:

Բ

Վասն թէ զի՞նչ է ջերմն եւ զի՞նչ է սահման նորա, եւ ո՞րպէս լինի ջերմն եւ ուստի՞ց ընծայի:

Պարտ է գիտենալ որ ջերմն օտար տաքութիւն է զատ 'ի բնութենէն, խառնեալ ընդ բնաւորական տաքութիւնն՝ որ 'ի սիրտն: Առնէ սկիզբն 'ի սրտէն, եւ սփռի 'ի ձեռն շնչաւոր երակացն ընդ ամենայն մարմինն, որպէս այլ յառաջն ասացաք, եւ խափանէ զբնութեան գործերն: Եւ են բնութեան գործերն այսոքիկ. ցանկութիւն կերակրոյն եւ ըմպելոյն, կանգնելն եւ գնալն եւ արթնութիւնն, յառնելն եւ նստելն եւ մերձաւորութիւնն, եւ այլ ամենայն բնութեան գործն որ 'ի մեզ են: Թեպէտ եւ ասացաք զբնութեան գործերն՝ որ խափանին 'ի ջերմերոյն եւ 'ի յայլ ամենայն ցեղ հիւանդութենէ, սակայն ոչ կատարեալ խափանումն, այլ մասնական ինչ. զի մահուամբ միայն խափանին բնութեան գործերն կատարեալ:

Այժմ պատմեմք զորպիսութիւն ջերմանն եւ զիւր գիտութիւնն, որ երեք ազգ են: Եւ ասացին իմաստասէրքն թէ վասն այնորիկ եղեն երեք ազգ, որ բովանդակ յամենայն մարմնոյն սկսանի. եւ մարմինք մարդկան ընդ երեք բաժանին: Առաջին բաժինն երեք շունչ են, զոր երեք հոգի անուանեն, որ են հոգի բնութեան, իւր տեղի եւ բնակարան

լերդն է. եւ հոգի կենդանութեան, իւր տեղի եւ բնակարան սիրտն է. եւ հոգի զգայութեան, իւր տեղի եւ բնակարան գլխոյն առաջի փորոքն է:

Եւ երկրորդ բաժինն գիշութենէն, զոր հոռոմն իլն անուանէ, եւ տաճիկն խլթ, որ թարգմանի չորս նիւթ կամ չորս ենթակայ, որ են արիւն եւ մաղձն, պալղամն եւ սավտայն:

Իսկ երրորդ բաժինն չոր եւ պիւտ անդամուքն են, որք եւ ոսկերքն եւ ջիւքն, կապքն եւ լարքն, կակուղ եւ խոճտամն ոսկերքն, զերդ զքիճին գլուխն, եւ կողերուն ծայրքն, եւ խոչակին հլունքն, եւ այլ զոր նման է սոցա:

Իսկ այն ազգ ջերմն, որ պատճառն յերեք հոգիքն լինի, միօրեայ ասեն. զի իւր թուականն մի օր է: Եւ զչորս ժամանակսն հիւանդութեանցն, որ են սկիզբն, եւ յաւելուլն, եւ կատարելն 'ի վման որ դադարի միացեալ, եւ պակասելն օր ըստ օրէ, եւ զիւր բուրհանն՝ 'ի նոյն օրն ամնէ, եւ արձակի 'ի քսանուչորս պահն:

Իսկ այն ազգ ջերմն որ պատճառքն գիճութիւնքն լինին, որք են չորս նիւթն, բորբոսային ասեն. զի յորժամ բորբոսն 'ի ներքս 'ի յերակսն լինի 'ի յարեն՝ 'ի յար եւ 'ի սուր եւ այրեցող ջերմանն, հումայի մուհրիղայ կասեն. ապա թէ դուրս յերակացն բորբոսին, այն են նոպայով ջերմերն:

Իսկ այն ազգ ջերմն որ պատճառն չոր եւ պիւտ անդամուքն լինին, հոռոմն լիթթօն ասէ, եւ տաճիկն դէկ, որ թարգմանի հալէ մաշ. եւ այլ ոմանք սեղմ ասեն. եւ Յայք բարակ ասեն: Եւ ինքն երեք ցեղ լինի մի քան զմի դժար, եւ յետինն մահարար. եւ հաստատին նոքա յերեք բնաւորական գիճութիւնքն. զի մարմինք մարդկան չորս բնաւորական գիճութիւնք ունին. մէկն չորս նիւթն են, եւ զերեքն այլ 'ի յետոյ պատմեցից օգնականութեամբն Աստուծոյ:

Այլ Գաղիանոս վասն երեք ազգ ջերմերոյն գիրքն, յառաջին մակալաթն՝ որ է ճառ՝ ասէ, եթէ աղէկ իմացիր եւ 'ի միտ առ, յորժամ ամնուն ջերմն ջուր եւ արկանեն 'ի հով պուտուկ, անպատճառ տաքնայ հով պուտուկն 'ի ջերմ ջրէն. ապա թէ ամնուն հով ջուր եւ արկանեն 'ի տաք պտուկ, նոյնպէս տաքնայ հով ջուրն 'ի տաք պուտուկէն. օրինակ է պուտուկն չոր եւ պիւտ անդամոցն. իսկ ջուրն գիճութեանցն, որք են չորս նիւթքն: Յորժամ տաքնայ չոր եւ պիւտ անդամուքն, տաքցնեն զչորս նիւթն, որ է արիւնն եւ մաղձն եւ պալղամն եւ սավտայն. նոյնպէս թէ տաքնայ չորս նիւթն, տաքցնեն զչոր եւ զպիւտ անդամուքն:

Այլ այն ցեղ ջերմն որ 'ի յերեք հոգիքն լինին, չունի օրինակ որ 'ի յինքն 'ի նման լինի ամենայն դիմօք. բայց վասն այնոր որ երեւնայ եւ ընդ գիտութեամբ անկանի, ա՛ռ 'ի միտ օրինակ գդարբնի փութսն, որ երբ 'ի յինքն քաշէ զբնիկ տաք օղն, անպատճառ տաքնայ փութսն 'ի յայն տաք օդոյն: Այլ օրինակ խիստ 'ի նման յայտ իրացդ 'ի բնութիւն՝ եթէ 'ի միտ ամնուս աղէկ եւ գիտանաս որ երբ 'ի յայն փութսն գիճութիւն լինի արգելած, մանաւանդ տեսանես մտօքդ որ ճանապարհն մտանելոյն եւ ելանելոյն նեղ լինին, եւ չկարէ անցանել ընդ ինքն այն արգիլած գիճութիւնքն որ 'ի փութսն կենայ, բայց հողմս անցանի: Այս օրինակս խիստ նման է մարդկային բնութեան գործոյն. զի օդոյն եութիւնն որ խառնեալ է ընդ արեանն եւ ընդ ամենայն շնչաւոր երակսն, նոյնպէս եւ սիրտն, զի՛նչ է պակաս քան զդարբնի փութսն:

Այլ բժշկական վարդապետքն նմանեցուցին զմարմին մարդկան 'ի բաղանիսն. զի բաղանիքն յերեք իրոյ կատարի, որ են որմունքն, ջուրն եւ օղն. նոյնպէս եւ մարմինք

մարդկան յերեք իրաց են շինեալ, մինն չոր եւ պինտ անդամունքն են, զոր այլ 'ի յառաջդ ասացաք. եւ երկրորդն գիճութեներն են, զորս չորս նիւթ անուանեն կամ չորս ենթակայ, որք են արիւնն եւ մաղձն, պալղամս եւ սավտայն. եւ երրորդն երեք շունչ են, զոր երեք հոգի անուանեն. հոգի բնութեան, հոգի կենդանութեան, եւ հոգի զգայութեան:

Նոյնպէս եւ ջերմն երեք ազգ են. մինն բնակի 'ի յերեք հոգիսն. եւ երկրորդն բնակի 'ի չորս նիւթն. եւ երրորդն բնակի 'ի չոր եւ 'ի պինտ անդամունսն. որպէս այլ 'ի յառաջդ ասացաք կարգաւ մի ըստ միոջէ: Նմանեցուցին իմաստասերքն զբաղանեաց շինուածն 'ի չոր եւ 'ի պինտ յանդամունքն. իսկ զջուրն 'ի գիճութիւնքն, որք են չորս նիւթն. իսկ զօդն 'ի յերեք շունչն, զոր անուանեն երեք հոգի: Չի որպէս բաղանեացն այլ է շինուածն եւ այլ շուրն եւ այլ օդն, բայց յորժամ մինն 'ի նոցանէ առաւել ջերմանայցեն՝ ջերմացուցանէ եւ զայլ եւս երկուսն. նոյն օրինակաւդ տես եւ զջերմն 'ի մարմինք մարդկան, եւ ընդ մարմնոյն շինուածոցն հետեւ 'ի ջերմն. որպէս շինուածք մարմնոյ այլ եւ այլ են, նոյնպէս եւ ջերմն այլ եւ այլ լինի:

Այս էր զոր ասացաք կարճաբան ջերմերոյն զորպիսութիւն օգնականութեամբն Աստուծոյ:

Վասն թէ ուստի՞ց ընծայի ջերմն:

Արդ սկիզբն առնեմ օգնականութեամբն Աստուծոյ եւ ասեմ կարճաբան եթէ ուստից ընծայի ջերմն: Ընծայի ջերմն յարտաբուստ պատճառանաց. երբեմն ներքսէ: Եւ արտաբուստ պատճառն լինի, զերդ առաւել 'ի ջերմ օդոց, կամ խիստ ցրտոյ, կամ լուանիլն ծծմի ջրով, կամ շալտի ջրով, եւ այլ ամենայն ցեղ փոթոթային ջուր որ նման են նոցա: Իսկ ցներքսէ պատճառն լինի, որպէս տրտմելն կամ 'ի սիրտ ելնելն կամ սզալն կամ հոգալն կամ ամաչելն կամ ահ եւ երկեղն կամ ցանկութիւնն կամ նախանձն, եւ այլ ամենայն ինչ որ նման է նոցա: Կամ 'ի տաք կերակրոց եւ 'ի տաք ըմպելեաց, զոր յաճախեն մարդիկ: Եւ այս բաւական է կարճաբան եթէ ուստից ընծայի ջերմն:

Այժմ սկիզբն առնեմք օգնականութեամբն Աստուծոյ եւ ասեմք զերեք ազգ ջերմերն ուրիշ ուրիշ. եւ սկսանիմք 'ի միօրեայ ջերմանէն, զի ինքն շատ լինի, եւ իւր պատճառն դիւրին է, նոյնպէս եւ իւր ստածումն եւ բժշկելն դիւրին լինի. եւ այլ որ ինքն լինի պատճառ այլ եւս երկու ջերմերոյն:

Գ

Պատմութիւն եւ նախագիտութիւն միօրեայ ջերմանն, որ կոչի ափիմեռօս:

Այն ազգ ջերմն որ կոչի ափիմեռօս, եւ տաճիկն հումմայի եամիայ ասէ, որ թարգմանի միօրեայ ջերմն, զայս անունս առին 'ի ծովային կենդանւոյ միոյ: Քանզի ասացին բնութեանց իմաստասերքն, եթէ կենդանի մի կայ 'ի ծովն, 'ի յորում աւուր ընծայի՝ 'ի նմին աւուր մեռանի. եւ տեսին բժշկական վարդապետքն զայս ջերմանս զմնալն մի օր, որ է քսանեւչորս պահ, վասն այնորիկ անուանեցին զսա այն կենդանւոյն անուամբն, որ է ափիմեռօս:

Դ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի տաք կերակրոց ընծայի:

Միօրեայ ջերմն որ պատճառն 'ի տաք կերակրոց ընծայի. գիտացիր որ այս պատճառս շատ գլխացաւութիւն բերէ, եւ բերանոյն չորութիւն եւ ծարաւ. երեսացն եւ աչացն գոյնն կարմիր լինի. զի գլուխն 'ի լի լինի տաք պուխարով, որ է տաք շոգիք: Ապա պատեհ է տալ մուգ նռան ջուր, եւ սրբնճուպին որ շաքարով լինի արարած, կամ ազդիսի ջրով, կամ ճուլլապ հով ջրով, եւ ա՛րկ 'ի վերայ գլխոյն 'ի հով ձիթերոյն:

Իսկ այս հիւանդութիւնս շոյտ յաղթէ լերդին. զի այս 'ի ջերմն շատք իմանան սակաւ տաքութիւն 'ի լերդն. ապա երբ ջերմն թողու, պարտ է ըմպելիք տալ զոր օգտակար են լերդին, զերդ դոմի ջուրն, եւ տապաշիրի կուրսն նռան ջրով կամ սրբնճուպինով. եւ զկերակուրն պարկեշտ առնել, զերդ դոմում եւ թախտ եւ վլիտօն որ է ծմելն, խիարին եւ կօդային մէջն, եւ այլ որ նման է այսոց:

Եւ երբ թողու ջերմն, եւ լերդն տաքութիւն մնայ, ապա 'ի վերայ լերդին սանտալի եւ վարդի կամ քաֆուրի սպեղանի դիր, պզրկատունի տերեւին ջրովն եւ հնդիպէի ջրովն. եւ զայս զոր 'ի վերոյ ասացի 'ի ջերման խստութիւն 'ի բան տար, եւ հոտոտալ տուր 'ի վարդն եւ 'ի մանուշակն եւ 'ի նոնֆարն: Եւ այս բաւական է ստածումն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի տաք կերակրոց լինի. եւ օգտակար է թէ Աստուած կամի:

Ե

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի տաք արեւէ լինի, կամ 'ի սամում օդէ եւ 'ի տաք տեղեաց:

Իսկ ում այս ջերմն հանդիպի, գլուխն տաքնայ եւ կաշին գլխոյն. եւ գլուխն այլ աւելի տաքութիւն լինի քան յայլ մարմինն. զի այս ջերմն 'ի գլուխն աւելի հասանի քան 'ի սիրտն: Այս ցաւուս թեզով ճար արա, թէ չէ սքթայ կանէ:

Պատեհ է զայս հիւանդս 'ի հով տուն պահել, յոր ցանած լինի հով ջուր. եւ 'ի հովային ծաղկունքն հոտոտալ տալ. եւ այլ խնճորի ջուր եւ մսի ջուր եւ վարդի ջուր եւ սանտալ եւ քաֆուր. զայս ամենայն յիրար խառնէ եւ հոտոտալ տուր: Եւ երբ խաղդի ջերմն, արկ 'ի վերայ գլխոյն եղկ ջուր, յոր եփած լինի չոր մանուշակն եւ վարդ եւ բաբունիճ, եղարկեալ ած 'ի վերայ գլխոյն մանուշակի ձեթ եւ լիլուփարի ձեթ, վարդի ջուր. եւ պատրաստ կալ յամենայն 'ի տաք եւ 'ի չորային իրաց. օգտակար է կամօքն Աստուծոյ:

Էհաննայ ասէ 'ի նոյն պատճառքդ եւ 'ի նոյն նշանքդ, եթէ երբ մարմնոյն խառնուածքն տաքնայ 'ի տաք օդէ կամ 'ի տաք արեւէ կամ 'ի տաք բաղանեաց, իւր նշանն այն է՝ որ մարմինն եւ իւր շօշափելիքն տաք լինի, եւ գլուխն ցաւի, երեսացն գոյնն կարմիր լինի, եւ մաճասին երակն բարակ եւ շոյտ լինի: Ապա դեղ զայս արա. ա՛ն սակաւմն քացախ եւ վարդի ջուր եւ վարդի ձեթ, յիրար խառնէ եւ զգլուխն այնու օծանէ. եւ ա՛ն քթան կտաւ եւ 'ի դեղդ թաց, եւ 'ի վերայ գլխոյն դիր. օգտակար է: Եւ երբ ջերմն 'ի վճար գայ, 'ի բաղանիս մտո, եւ զգլուխն այս ջրովս ծեփէ. զի փորձով օգտակար է:

Նշանք ջրին այս է. ա՛ն մանուշակ եւ լիլուփար եւ պապունիճ, յամեն մէկէ մասն մի. զայս ամենայն անուշ ջրով եփէ՝ մինչեւ ջուրն զդեղերուն ուժն յինքն առնու. ապա 'ի բաղանիս մտո, եւ այս ջրովս ծեփէ, եւ յամենայն 'ի տաք իրաց պատրա՛ստ կալ, օգտակար է:

Մասուային որդին ասէ, թէ որ 'ի բաղանիսն զմարմինն տաք ջրով լուանայ, եւ երբ 'ի բաղանեցն ելանէ, գարեջուր խմէ իսպիտակ շաքարով, եւ կարմիր մաշի մուգաւարայ ուտէ նշի ձիթով, կամ նռան մուգաւարայ դոմի եւ նշի ձիթով, եւ յետ կերակրոյն 'ի քուն լինի: Ապա եթէ առնու վարդի ձեթ, ձիւնով կամ պաղով հովացնէ, եւ 'ի վերայ գլխոյն

դնէ, նոյնպէս եւ գլուրծսն իւրովն օծանէ: Եւ ջուր զոր խմէ, հով թող խմէ. ապա թէ 'ի բաղանիսն եղկ ջրով աւազան մտէ եւ շուտ ելանէ, խիստ օգտակար է. մանաւանդ թէ զմարմինն վարդի ձիթով եւ մանուշակի ձիթով հովցուցած օծանէ, եւ 'ի տաք կերակրոց պատրաստ կենայ, 'ի հով եւ 'ի գիճային կերակուրքն յարեւայ, եւ ամենեւին 'ի դատմանէ պատրաստէ, եւ զմարմինն հանգիստ պահէ. եւ այս բաւական է եւ օգտակար օգնութեամբն Աստուծոյ:

Զ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի ցրտոյ լինի:

Իսկ այս ջերմն որ ընծայի 'ի խիստ ցրտոյ, ցամաքեցնէ զմարմինն, եւ խիստ չորացնէ. եւ այս ջերմանս տերն 'ի գլուխն ծանրութիւն իմանայ, եւ իւր մաճասին երակն փոքր եւ 'ի յար լինի, եւ գոգին գոյնն դեպ 'ի սպիտակ լինի. զի ցուրտն 'ի գոգին եփելոյ տեղին լինի հասել. եւ երեսացն գոյնն չիլինի կարմիր, մանաւանդ դեպ 'ի սպիտակն լինի. ապա աստ չէ պարտ շտապել, եւ ձիթերովն զնորա գլուխն եւ զմարմինն օծանել. քայլել յետ այն՝ որ խաղաղել լինի ջերմն. բայց զգլուխն 'ի վերայ այս շոգւոյս ունել պարտ է. ա՛ռ մարզանկուշ եւ բաբունիճ եւ նամամ. զայս զամենս եփէ ջրով, եւ զգլուխն 'ի վերայ շոգւոյն կալ: Բայց յորժամ խաղաղի ջերմն, ապա 'ի բաղանիս մտո, եւ տես որ չօծանես զմարմինն ձիթով, որ չիխցկի գաղտ շնչահանքն, ձիթին դորկութեամբն չիբռնես. եւ երբ քրտնի, ապա օծէ զմարմինն խիրի ձիթով, եւ մարձէ աղէկ. կամ օծնէ կասլի ձիթով կամ բաբունիճի ձիթով, կամ մէկ մի 'ի յայն ձիթերոյն որ բանան զգաղտ շնչահանքն. եւ ապա մտո յաւազան որ ջուրն քաղցր լինի եւ եղկ, եւ յամեցո պահ մի: Բայց տե՛ս աղէկ որ չիվատուծի հիւանդն:

Եւ երբ ելանէ 'ի բաղանեացն, սակաւ մի համբերէ, եւ ապա տո՛ւր կերակուր խաշոյ՝ որ յուլոյ մսէ լինի զուգած, կամ գէր հաւու ձագ մատղաշ. եւ տուր ըմպելոյ անուշահոտ գինի, կամ այլ ըմպելի որ զգինւոյ գործն կարէ առնել. եւ հանդերձով եւ ծածկելով տաք կալ զինքն, եւ հոտոտալ տուր 'ի յանուշահոտ ծաղկունքն, զերդ խիրին եւ նոճեսն եւ մարզանկուշն եւ թուրինճն. եղկալէ, օգտակար է օգնութեամբն Աստուծոյ:

Գաղիանոս ասէ 'ի նոյն պատճառք եւ 'ի նոյն նշանք, երբ խիստ ցուրտն յաղթէ մարմնոյն, հանէ զմարմնոյն խառնուածքն 'ի միջավայր չափաւորութենէ. եւ այս լինի 'ի ցուրտ օդէ, կամ 'ի ցուրտ ջրոյ լուանալոյ զմարմինն: Եւ իւր նշանն այս է՝ որ մարմնոյն կաշին խոշոր լինի, եւ տաքութիւնն 'ի մարմնոյն շօշափելիքն պակաս լինի, եւ մաճասին երակն շոյտ լինի, եւ լինի որ գոգն սպիտակ գայ:

Եւ իւր ստածումն այն է՝ որ զմարմինն աճրռել տաս միւնչել ջերմանն սրութիւնն խաղաղի. ապա 'ի բաղանիս մտէ որ քրտնէ. եւ առնու խիրի ձեթ եւ պապունիճի ձեթ, եւ զմարմինն աղէկ օծանէ. եւ յետ այնոր զեղկ ջուրն 'ի վերայ մարմնոյն չափէ, եւ ապա սաւանով ծածկէ եւ 'ի դուրս գայ, եւ պառկելով հանգչի: Դետ այնոր կերակուր թեթել եւ պարկեշտ կերակրի, զերդ հաւու ձագ որ պարկեշտ համեմնով եփած լինի. տուռայճ եւ թորու, որ է ափասիանոս, եւ այլ զոր նման են սոցա. եւ ըմբելոյ պարզ եւ անուշահոտ գինի տուր: Ապա թէ չօգտէ, զնոյն ստածումնդ դարձեալ արա. օգտակար է Աստուծով:

Ի նոյն պատճառ եւ 'ի նոյն նշանքդ Մասրճուայն ասէ, եթէ իւր առաջի ստածումն այն է, որ տաք հանդերձով զմարմինն աղէկ ծածկէ, միւնչել մարմինն աղէկ քրտնի. ապա 'ի բաղանիս մտէ, եւ զմարմինն տաք ջրերով լուանայ. ապա թէ առնուս մարզանկուշ եւ սամիթ եւ սիսամբար, ջրով եփես, եւ զմարմինն եղկացնելով լուանաս, շատ օգտակար

Է: Եւ երբ 'ի բաղանեացն ելանէ, ա՛ռ սամթի ձեթ եւ խիրի ձեթ կամ պապունիճի ձեթ, եւ զգլուխն օծանէ, շատ օգտակար է: Եւ երբ 'ի բաղանեացն ելանէ եւ 'ի անուշահոտ իրվին հոտոտայ, եւ ըմպելին սպիտակ եւ անուշահամ գինի ըմպէ, օգտակար է:

Ապա եթէ պատճառն ցուրտ ջրոյն լուանալոյն լինի, իւր ստածումն այն է՝ որ 'ի տաք ջուրն աւազան մտանէ. եւ յորժամ ելանէ, զմարմինն աղէկ ծածկէ, եւ 'ի քուն լինի որ քրտնի. եւ զմարմինն տաք ձիթերով աղէկ օծանէ, եւ 'ի հովային կերակրոյ պատրաստ կենայ. եւ այդ բաւական է, եւ օգտակար է կամօքն Աստուծոյ:

Է

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի փոթոթ ջրոյ լուանալոյն լինի:

Այս ջերմն լինի յորժամ 'ի մարդն լուանվիլ ծծմի ջրով, եւ իւր կաշին խիստ չորանայ, աւելի քան զայն որ պատճառն 'ի ցրտոյ լինի: Այնոր եղել նորա մարմնոյն չորութիւնն, որ բնական մարմնոյն տաքութիւնն փախտալ է 'ի ցրտոյն եւ 'ի ներքս հաւաքեալ: Իսկ սորա կաշուն չորութիւնն վասն այնոր եղել, որ գործեցաւ տըտպելով, զերդ զգործած կաշին գխտորով կամ նռան կեղելով. եւ երբ զձեռդ 'ի վերայ մարմնոյն դնես, մինչեւ շաղնայ, ապա յարձակի եւ բացւի գաղտ շնչահանքն, եւ ելանէ իւրմէն մասն ինչ շոգի, զոր արգելեաց ջուրն՝ իւր տտպայորութեամբն զգաղտ շնչահանքն խցկելով: Եւ իւր երակն 'ի թաշանուճի նման լինի, եւ քան զնոցա երակն՝ որ պատճառն 'ի ցրտոյ լինի, այլ փոքր եւ այլ սուր լինի 'ի փոթոթային ջրոյն խիստ տըտպելոյն. եւ իւր գոգոյն գոյնն սպիտակ լինի եւ նօսր:

Ապա թէ ասէք, թէ Է՞ր լինի մաճասն փոքր եւ սուր, կամ գոգին գոյնն սպիտակ. մանաւանդ պատեհ էր որ մաճասին երակն մեծ լինէր եւ լայն. եւ գոգին գոյնն խիստ դեղին եւ եփած, զի տաքութիւնն 'ի ներքս հաւաքեցաւ եւ վառեաց զջերմն: Տամք այնպիսուն պատասխանի այսպէս. եթէ մաճասին երակն վասն երկու պատճառաց լինի փոքր եւ սուր. մէկն պատճառն այն է՝ որ ներքսի անդամունքն որ զմաճասին երակն այրնէն տետպինտ 'ի դրուց անդամոցն տետ պելովն. եւ երկրորդ պատճառն այն է՝ որ բնական տաքութիւնն 'ի գաղտ շնչահանացն 'ի խցկելոյն 'ի ներքս լինի արգելած, եւ չունի տեղի որ ընդարձակի: Ապա արգիլի բնութիւնն, 'ի ներքս հաւաքի եւ չկարէ սփռել ըստ սովորութեանն իւրոյ:

Նոյնպէս եւ վասն գոգին սպիտակութեանն երկու պատճառք են. մէկն այն է՝ որ բնութիւնն արգիլեցաւ 'ի շոգերոյն 'ի ներքս արգիլելոյն, նա բնութիւնն զբաղեցաւ ընդ այն, եւ մնաց 'ի գոգոյն եփելոյն եւ 'ի գոյնն տալոյն. եւ երկրորդ պատճառն այն է՝ որ երբ խցկին մարմնոյն գաղտ շնչահանքն ջրին փոթոթութեամբն, նա բազմանան գիճութիւնքն, եւ չգտանեն ելք ոչ քրտամբք եւ ոչ դրուց օդոյն առնելովն. ապա շատանայ գոգն եւ ոչ կարէ բնութիւնն եփել եւ ոչ գոյնն տալ եւ ոչ գալ 'ի յայն տեղին. զի անպարապ էր 'ի շոգերոյն յարգիլմանէն եւ 'ի գոգին շատութենէն: Չի գնոյն տեսանեմք 'ի ձմերանի աւուրքն երբ խիստ ցուրտ լինի, որ բնական տաքութիւնն 'ի ներքս լինի արգիլած, 'ի խիստ ցրտուն կամ ընդ շնչոյն առնուլն լինի այդ: Ապա հիւանդանայ եւ ներքսի անդամունքն եւ գնոյնդ առնեն, որպէս ասացաք:

Այլ իշխան անդամունքն, զի սիրտն եւս եւ լեղին եւ լերդն վտանկին 'ի յայդ ջերմանդ 'ի գոլոշեացն, որ 'ի վեր ելանէ կամ 'ի ներքս հաւաքի, առաւել քան 'ի յայն ջերմանն՝ որ պատճառն 'ի ցրտոյ լինի. մանաւանդ ուղեղն, զի շոգիքն յինքն վերանան. ապա պատեհ

Է մեզ այսպես այրնել իւր ստածումն եւ բժշկութիւնն: Եւ իւր ստածումն եւ բժշկութիւնն զերդ այն ջերմանն լինի, որ պատճառն 'ի ցրտոյ եղաւ:

Բայց այս ջերմանս տերն պատեի Է որ 'ի բաղանեացն յօղն այլ անլի յամէ քան զմէկայլ ցեղ ջերմանս տերն որ 'ի ցրտոյ եղաւ. այլ 'ի յաւազանն թող ջամէ շատ, զի գիճութեներն արգիլած են 'ի ներքս 'ի մարմինն. եւ այլ որ չունի ինք կարիք 'ի յաւազանն քան զկաշոյն մեկնելն միայն, զոր 'ի յիրար զսպեցաւ 'ի փոթոթային ջրոյն: Իսկ չորային ձիթերովն մի' օճաներ զմարմինն, եւ զկերակուրն պակաս տուր եւ պարկեշտ եւ միջավայր՝ որ Է միղթսիլ, որ են յաւելուածք. զի փատլան 'ի ներքս 'ի մարմինն արգիլած կան, որ չելանեն 'ի գլուխն եւ ահոկեն ուղղոյն: Եւ այդ կարճաժօտս բաւական Է:

Այլ Գաղիանոս ասէ 'ի նոյն պատճառքդ, եթէ այս ջերմանս պատճառն 'ի մարմնոյն զաղտ շնչահանացն լինի, կամ 'ի յաղտե կամ յանլուացութենէ կամ 'ի յարեգականն 'ի յայրելոյ եւ կամ փոթոթային ջրով լուանալոյ զմարմինն, կամ 'ի հաստ յաւելուածոց որ լնու զմարմինն. եւ իւր չարութիւնն 'ի հոգի զգայութեանն հասանի. եւ այս ջերմս ընծայի եւ յառաջ գայ: Եւ իւր նշանն այս Է՝ որ մաճասին երակն փոքր լինի, եւ քիրտն չլինի, եւ անդամունքն քաշած լինի: Եւ այնոր նշանն որ 'ի հաստ նիւթէ լինի այս Է՝ որ ամէն մէկ 'ի չորից նիւթիցն զիւր նշաննին 'ի մարմինն ցուցանեն. զոր լինի այս որ յիշել կամիմք զչորս նիւթքն, որք են արիւնն, պալլամն, մաղձն եւ սաւտայն:

Իսկ այն պատճառն որ 'ի մարմնոյն լիութենէն լինի, իւր ստածումն այս Է՝ որ յառաջ երակ ամուռ, եւ հետ այնոր 'ի բան տանել զայն իրվին՝ որ զմարմնոյն զգաղտ շնչահանքն բանան, եւ զերակսն սրբեն, զերդ սրթնճուպինն հնդանօք եղողական ջրով, եւ ըռագիանի ջրով խառնեալ խմելոյ տուր, եւ կերակուր փերճոկած գարի եփած տուր շաքարով: Ապա հետ այսոր տե՛ս եթէ ջերմն եփեցաւ եւ պակասեցաւ, եթէ ոչ. ապա թէ եփեցաւ, եւ իւր նշաննին երեւեցաւ 'ի գոզն եւ 'ի մաճասին երակն, դարձեալ զնոյն ստածումնդ 'ի բան տար:

Եւ երբ իմանաս որ ջերմն 'ի վճար երեկ, զհիւանդն 'ի միջավար բաղանիս տար, որ ոչ տաք լինի եւ ոչ հով: Ապա ա՛ռ բակլայի ալուր, եւ շուշան ծաղկի տակ, եւ զրեւանդ. զայս ամէնս աղա՛ եւ մաղէ եւ ընդ մարմինն շփէ յուշիկ յուշիկ: Ապա թէ գիտենաս որ բաղանիսն ահոկեաց, եւ զիւր ահոկն ցուցանէ առ հիւանդն, շուտով հան 'ի բաղանեացն զհիւանդն:

Եւ երբ գիտենաս որ հիւանդութեանն գլուխքն չէ 'ի յայն իրացն որ բաղանիքն արձակէ, մի՛ տաս կերակուր քան զփերճոկած գարին եփած նօսր, եւ ընկեա՛ 'ի յինքն կարօսի հունդ: Ապա յետ երկու աւուրն դարձեալ 'ի բաղանիս մտո. եւ տես եթէ բաղանիքն օգտէ, գիտացիր որ հիւանդութեան գլուխքն կայ եւ արձակի, եւ ցուցանէ հիւանդին առողջութեան եւ բարւոյ նշան:

Ապա թէ դարձեալ բաղանիքն ահոկէ, գիտացիր որ հիւանդութեանն գլուխքն կայ եւ արձակէ, բորբոսային Է. ապա տե՛ս թէ որ եւ 'ի չորից նիւթոցն ո՛րն բորբոսեցաւ եւ զհիւանդութիւնն արար. եւ զայն սրբէ 'ի մարմնոյն լուծմամբ, զերդ որ զկնի այսոր յիշել կամիմք զամէն մէկ ուրիշ ուրիշ օգնականութեամբն Աստուծոյ:

Ը

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի յերեք հոգւոյն դատմանէն լինի:

Որ է՝ հոգի բնութեան եւ հոգի կենդանութեան եւ հոգի զգայութեան, եւ իւր նշանն այս է որ մարդն ինքն ընդ ինքն զրուցէ, ցնորի եւ թուագարի: Եւ այլ լինի պատճառ հոգալն եւ տրտմելն, ահ եւ երկիւղն, եւ սիրտ ելնելն, եւ նախանձն եւ ցանկութիւնն: Ապա պատեհ է հարցանել զհիւանդն եւ զհտենալ եթէ 'ի յայս պատճառանացոյ, զոր յիշեցաք, յորո՞յ եղաւ ջերմն. եւ իմանաս զնշանքն զամեն մէկ ուրիշ ուրիշ, եւ բժշկէ:

Որ 'ի սիրտ է ելել՝ անուշացոյ եւ հանդարտացոյ. եւ որ տրտմել է՝ սրտահեշտացոյ եւ ուրախացոյ. եւ որ հոգս ունի՝ փարատէ զհոգսն եւ անհոգացոյ. եւ որ վախեալ է եւ երկիւղ ունի՝ ամեհէ եւ աներկիւղացոյ. եւ զամեն մէկի պատճառ իւր հակառական բժշկէ: Չերդ որ մեծ իմաստասերն Բագարատ ասաց, եթէ հիւանդութիւն՝ իւր հակառակովքն բժշկի. իսկ ողջութիւնքն՝ իւր նմանեօքն պահի: Այլ մեք ցուցանեմք զամեն մէկի բժշկութիւնն ուրիշ ուրիշ օգնականութեամբն Աստուծոյ:

Թ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի սիրտ ելնելոյն լինի:

Իւր նշանն այն է, որ երեսն կարմիր լինի, մէջ ընդ մէջ եւ ժամ ժամ դեղին դառնայ: Կարմրութեան պատճառն արեանն եռալն է՝ որ շուրջ զսրտովն կայ. եւ արեանն եռալոյն պատճառն քիւսախնդիր լինելն է առ տրտմեցուցիչն: Իսկ դեղնութեան պատճառն այն է՝ որ արիւնն 'ի ներքս հաւաքի 'ի սիրտն, ոխս եւ սուզ ամէն վասն քիւսախնդիր լինելոյն. եւ վասն այդոր պատճառանացոյ արիւնն վայր մի եռայ եւ 'ի դուրս գայ, եւ վայր մի 'ի ներքս հաւաքի: Եւ իւր նշանն այս է՝ որ աչքն կարմրի եւ բարձրանայ. եւ մաճասին երակն մեծ լինի եւ պիւտ. մեծութեանն պատճառն ուժն է որ աղէկ կայ. եւ պիտութեանն պատճառն որ բնական տաքութիւնն 'ի դուրս ելանէ եւ պնդի:

Եւ իւր ստածումն այս է, որ ամենայն դիմօք անուշացնես եւ խաղաղես զսիրտն. եւ 'ի գինւոյ պատրաստել, մանաւանդ 'ի հին գինւոյ, զի շուտ ելանէ 'ի վեր 'ի գլուխն. եւ նոյնպէս 'ի յամենայն ցեղ տաք կերակրոց պատրաստ պահել, որ չվառի բնական տաքութիւնն. եւ 'ի բաղանեաց պատրաստ կալ, որ չբորբսի յաւելուածքն 'ի մարմինն, որ է նիւթն. զկերակուրն հով եւ գիճային տուր: Ապա թէ գինի տաս, սակաւ եւ շատ ջրախառն տուր. եւ զքո զամենայն ջանք վասն սրտին արա՝ որ անուշացնես զսիրտն եւ խաղաղեցնես զսրտմութիւնն, խօսիւք եւ կատակով եւ այլ ամենայն դիմօք զբաղեցո. օգտակար է օգնականութեամբն Աստուծոյ:

Մասրճուայն ասէ 'ի նոյն պատճառքոյ, թէ այս ջերմն ընծայի 'ի հոգւոյն առաւել շարժելոյն ցներքսի մարմնոյն դէպ 'ի դուրս՝ վասն բնութեան զօրութեանն. զի գումարի 'ի ժամ տրտմութեանն: Եւ իւր նշանն այս է, որ աչքն 'ի յիր բնական գոյնէն փոխի եւ 'ի դուրս բարձրանայ. եւ երեսացն գոյնն խիստ կարմրի. եւ լինի որ երեսն այտոյց առնու. եւ գոզն կարմիր դառնայ:

Եւ իւր ստածումն այն է, որ եղկ ջրով 'ի յաւազանն մտէ, եւ ճուլապ հով ջրով խմէ: Ապա ա՛ռ սպիտակ սանտալ եւ քաֆուր եւ վարդի ջուր. զայս ամենս յիրար խառնէ, հա՛ր աղէկ, եւ 'ի վերայ գլխոյն դիր: Խմելու քաղցր եւ թթու նռան ջուր տուր. եւ կերակուր հով եւ զէճ տուր, նշի ձիթով եւ շաքարով. եւ ամենեւին գինի մի՛ տար. եւ զբաղեցո կատակով եւ ուրախարար խօսիւք. օգտակար է:

Մուհամատ Չաքարիայն ասէ. յորժամ 'ի յեղկ ջրոյն ելանէ 'ի հով ջուր նստի, եւ ընդ մտելն՝ շուտով ելանէ, եւ զայլ ստածումնդ զոր ասացաք 'ի բանի պահէ. եւ հանապազ 'ի

վարդի ջուրն եւ 'ի քաֆուրն հոտոտալ տուր, եւ 'ի յար ընդ քուն լինելն զբաղի, զի օգտակար է:

Սահակ ասէ, թէ իւր ստածումն այն է՝ որ երբ 'ի տրտմութեանն սրութենէն հանգչի, 'ի բաղանիս մտո եւ 'ի կիսեղկ ջրով յաւազան մտէ, եթէ ձմեռն լինի. ապա թէ ամառն լինի եւ օդն տաք, զմարմինն հով ջրով աղէկ լուա՛: Եւ 'ի յանուշահոտսն հոտոտայ, մանաւանդ եթէ հով եւ գէճ լինի, զերդ զմանուշակն եւ 'ի նինոֆարն եւ քաֆուրն, եւ այլ ամենայն իրբ որ նման է նոցա: Եւ խմելու ճուլլապ տուր սառամբ հովցուցած. եւ կերակուր հով եւ գիճային տուր. զերդ դոմով մուգավարայն ազոխի ջրով եւ նշի ձիթով, եւ նռան մուգաւարայ, եւ մանտր ձուկն թածայ՝ նշի ձիթով տապկած. եւ զայդ կերակուրդ յար 'ի բան պահէ. եւ 'ի տաք կերակրոց եւ 'ի չորային եւ 'ի գինւոյ պատրաստ կալ. եւ շատ քուն լինելն օգտակար է, եթէ Աստուած կամի:

Ժ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն հոգսն եւ տրտմութիւն լինի:

Պարտ է գիտենալ որ հոգսն եւ տրտմութիւնն յայլ եւ այլ տեղեաց լինի. զի միօրեայ ջերմն՝ որ պատճառն 'ի հոգալոյն լինի, այն 'ի զգայական հոգւոյն ընծայի: Իսկ որ պատճառն 'ի տրտմութենէ լինի, այն 'ի հոգւոյ կենդանութենէն ընծայի. թեպէտ եւ ընկերութեամբն ունին ընդ իրար: Այլ հոգսն լինի երբեմն յահէ եւ երկիւղէ, եւ երբեմն յուրախութենէ եւ խնդալոյ: Ապա այն հոգսն որ 'ի յահէ լինի եւ յերկիւղէ, իւր նշանն այս է՝ որ չորացնէ զմարմինն, եւ զգոզն կարմիր առնէ. եւ այն որ զուրախութիւն հոգայ եւ խնդալն, ոչ առնէ զայդ ամենեւին զոր ասացաք:

Եւ այլ ասեմ որ հոգսն երկու դեմն ունի. մէկն որ հոգայ մարդն վասն բարւոյ եւ առաքինութեան, զերդ վասն հաւատոյ եւ ուսման եւ այլ ամենայն բարեգործութեան. եւ մէկայլ հոգսն ամենայն իրօք առաջնոյդ հակառակ լինի, զերդ տգիտութիւն եւ արձակումն սրտին յօժարութեամբն յամենայն 'ի չար եւ 'ի պիղծ իրս: Արդ այն հոգսն որ վասն բարւոյ լինի, զօրաւոր առնէ զհոգին, եւ տկարացնէ զմարմինն. իսկ այն որ տգիտութեամբն զգէշն հոգայ, զօրացուցանէ զմարմինն, եւ տկարացուցանէ զհոգին:

Եւ իւր ստածումն այս է, որ զամէն մէկ իւր հակառակովն բժշկես, որպէս մեծ իմաստասէրն Բագարատ ասէ, թէ մտաւ վարժիլն հոգւոյն ահուկէ. զի հոգին ընդ մարմինն խառն է միաւորեալ. վասն այնոր է պատեհ հանգիստ առնել իւր դատելոյն ամենայն ցեղ դիւրեօք եւ ուրախութեամբն, որ դառնայ դարձեալ 'ի յիւր որպիսութիւնն: Եւ զայդ ցեղ հիւանդիդ զմարմինն պարտ է գիճացնել, նստելով յաւազան 'ի եղկ եւ 'ի յանուշ ջուր. ապա օժանել զմարմինն հով եւ գիճային ձիթերով, զերդ մանուշակի եւ լիլուփարի եւ դոմի ձէթ. եւ կերակուր խաշուի ջուր տալ 'ի թեթեւ մսէ եւ 'ի գիճային, զերդ ուլի ոտներ եւ արտալայնի. եւ 'ի բանճարոց եւ 'ի մրգաց զհովն եւ գիճայինն տալ. եւ ըմպելի՝ սպիտակ գինի եւ նօսր ընդ յովով ջրոյ խառնել եւ տալ. եւ պատրաստ կալ յամենայն 'ի տաք եւ 'ի չորային իրաց, որ չփոխի 'ի բարակ ջերմն, որ է դէկ. զի յար են եւ 'ի մօտ այդ ջերմերդ՝ որ 'ի դէկն փոխին, որ է հալեւմաշ. եւ այդ բաւական է օգնականութեամբն Աստուծոյ:

Մուսավային որդին ասէ, թէ՛ եթէ այս ջերմն ընծայի 'ի բնական տաքութենէն, եւ հոգւոյն որ ներքս 'ի սիրտն հաւաքի, եւ հոն 'ի բազում տրտմութենէն դադարի եւ արմատ առնու: Իւր նշանն այս է՝ որ աչքն ցածանայ եւ 'ի գուրն անկանի. եւ լինի որ աչացն

գոյնն պղտորի. Եւ մաճասին երակն բարակ եւ մանտր լինի. եւ գոզն 'ի կարուրայն կարմիր ցուցանէ:

Եւ իւր ստածումն այս է, որ ընդ խաղ եւ ընդ կատակ եւ ընդ ամենայն իրք ուրախութիւն բերէ եւ զըմբաղի. եւ որչափ կարէ՝ գուսանի եւ լարի եւ անուշ եղանակաց ձայն լսէ. եւ 'ի յայն իրվին զըմբաղի՝ որ ցնեքսէ ուրախութիւն բերէ: Եւ երբ ջերմն 'ի վճար գայ, 'ի բաղանիս մտէ եւ 'ի կիսատաք ջրով յաւազան նստի. եւ կերակուրք միջավայրք եւ պարկեշտ տուր, զերդ գառի միս եւ ուլու, թաժայ եւ մանտր ձուկն նշի ձիթով տապկած: Ապա թէ ամառն լինի, հով տուն նստո. իսկ եթէ ձմեռն լինի, 'ի տաք տունն կենայ. եւ շատ 'ի քուն մի՛ տաս լինել:

Սահակ ասէ, թէ իւր ստածումն այն է, որ 'ի բաղանիս կիսատաք ջրով յաւազան մտէ, եւ զմարմինն մանուշակի ձիթով օծանէ, եւ հանապազ 'ի հով եւ 'ի գիճային ծաղկունսն հոտոտայ, զերդ մանուշակն եւ 'ի նոնֆարն, եւ այլ զոր ինչ նման են սոցա. եւ զմուկամեմ մաճունն, որ է ինդացնող, որ քաֆուրիայ ասեն, յար 'ի բանի պահէ. եւ հով լուսակնովն զկուրծսն օծանէ, զերդ պզրկատունի լուղապն: Ապա թէ գառնալեզուի ջրով եւ շնխաղողի ջրով զկուրծսն օծանէ, շատ օգտէ: Գինի անուշահամ եւ անուշահոտ տուր, բայց սակաւ. եւ 'ի յամենայն կերակրոց՝ որ զսավտայն շարժեն եւ զսավտայն ընծայեն, որ է սեւ մաղձն, պատրաստ կալ, եւ 'ի պարկեշտ կերակուրք յարեցո: Ապա թէ ստամոքսն տկար լինի, սերկեւիլի շարապ եւ ինծորի խառնեալ տուր 'ի յար:

Ապա այն ջերմն որ 'ի ցանկութենէ եւ 'ի թուագարանց եւ 'ի բազում հոգոյ ընծայի, իւր ստածումն նոյն խորհուրդոտ եւ նոյն դեղերոտ է զոր յիշեցաք: Բայց պիտի որ ամենայն ստածումն ըստ հիւանդութեանն որպիսութեանն եւ ըստ հիւանդին զօրութեանն լինի, որ հիւանդութիւնն շուտով արձակի օգնականութեամբն Աստուծոյ:

ԺԱ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի տքնութենէ լինի:

Այս ջերմն 'ի զգայական հոգւոյն հանդիպի լինել. եւ իւր նշանն այն է, որ երեսացն գոյնն դեղին լինի. եւ իւր դեղնութեան պատճառն այն է՝ որ տքնութիւնն արգիլէ զբնութիւնն 'ի կերակրոյն յեփելոյ. զի բնութեամբն հալիլն կերակրոյն ընդ քունն լինի. եւ աչքն խորնայ, զի այն գիճութիւն որ 'ի քնոյն ընծայի, պակասեցաւ. եւ մաճասն փոքր եւ յոյլ լինի, զի զօրութիւն վատուծել լինի, եւ արեանն 'ի դուրս սփռիլն: Իսկ այս ջերմն 'ի զգայական հոգւոյն հանդիպի. ապա վասն այդր պատճառանացդ 'ի յիւր բժշկութիւնքն պարտ է ջանք դնել որ 'ի քուն լինի. զձեռնս եւ զոտսն աղէկ աճռել տալ, որ շոգիքն 'ի վայր իջանին. զկերակուրն պարկեշտ տուր եւ շուտահալ. եւ 'ի մերձաւորութենէ պատրաստեցո՛ք բնիկ, մինչեւ իւր առաջին բնութիւնն դառնայ:

Բազարատ ասէ 'ի նոյն պատճառքդ, եթէ միօրեայ ջերմն որ 'ի տքնութենէ լինի, 'ի ստամոքացն լինի՝ որ զկերակուրն պակաս եփէ. կամ 'ի կոծանաց եւ 'ի հալածանաց, որ զմարմինն դատել լինի տքնութեամբ, եւ կամ 'ի զգայական հոգին հասեալ լինի դատումն: Եւ իւր նշանն այս է, որ աչքն խորանայ, եւ զերդ 'ի գուրն անկանի, եւ աչքն ծանրանան, եւ 'ի յերեսն այտոց երեւնայ, եւ գոզն սպիտակ լինի, եւ մաճասին երակն բարակ լինի:

Եւ իւր ստածումն այս է: Ա՛ն դրմի կտի ձեթ, որ ընդ մանուշակն մնուցած լինի, եւ հեղ մի քանի 'ի քիթն կաթեցո: Եւ այլ ա՛ն մանուշակ եւ նիւնֆար, եւ խաշխաշի կոնկոմ, եւ

գարի փերճոկած. գայս գամէս անուշ եւ քաղցր ջրով եփե, եւ 'ի վերայ գլխոյն դիր. յառաջ իւր ջրովն ծեփե զգլուխն. օգտակար է:

Եւ երբ ջերմն պակասի եւ վճար գայ, 'ի բաղանիս մտո, եւ կիսատաք ջրով ծեփե զմարմինն, եւ մանուշակի ձիթով օծանե. եւ երբ 'ի բաղանեացն ելանե, հետ պահու մի կերակուր տուր՝ գէր հաւ պարկեշտ համեմնով եւ նշի ձիթով եփած: Ի տաք եւ 'ի չորային կերակրոց եւ 'ի մերձաւորութենէ պատրաստ կալ, եւ շատ 'ի շուրջ գալոյ, եւ զմարմինն 'ի դատելոյ, եւ յամենայն իրաց՝ որ չորութիւն ընծայեն՝ պատրաստ կենայ:

Մուսավային որդին ասե, եթէ իւր օգտակար ստածումն այն է, որ շատ 'ի քուն լինի: Եւ ա՛ռ պապունաճ եւ մանուշակ, նոնֆար եւ խաշիաշ. գայս ամէս ջրով եփե աղէկ, եւ զգլուխն այդ ջրովդ 'ի յար ծեփե, զի օգտակար է եւ քուն բերե, եւ զջերմն արծակե: Չձեռն եւ զոտն մանուշակի ձիթով օծանե մարձելով. եւ հաւու ձագ եւ տուռաճ եւ տեհուճի միս ուտե. եւ գինի տուր սակաւ սակաւ. եւ 'ի հով եւ 'ի գիճային կերակուրք յարեցո. եւ ամենայն բանե որ զմարմինն դատե, պատրաստ կենայ, եւ 'ի մերձաւորութենէ այլ. եւ ցերեկով 'ի քուն չի լինի. զի գիշերութեան քունն հանգիստ բերե, եւ զկերակուրն հալե, եւ 'ի մարմինն հովութիւն եւ գիճութիւն ընծայե: Ապա թէ ջերմն զօրաւոր լինի, եւ զհով եւ զգիճային ձիթերն յար ընդ գլուխն օծե. որպէս մանուշակի ձեթ, եւ դդմի կտի ձեթ, եւ նոնֆարի եւ կամ նշի, եւ այլ սոցին նման. օգտակար են օգնութեամբն Աստուծոյ:

ԺԲ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի այտոցե լինի, որ ցայլսն ելանե, կամ 'ի ցաւե մի՝ որ յայլ անդամսն լինի:

Ընծայի այս ջերմն հոգւոյ կենդանութենէն: Իսկ յառաջ զցայլսն յիշեցաք, զի 'ի նա այլ անելի լինի ելունդ եւ այտոց, քան 'ի յայլ անդամս մարմնոյն. լինի 'ի հոն այտոց 'ի յայս պատճառաց:

Յորժամ թահրի մարդն, եւ ոտն 'ի քարն դիպի, կամ 'ի յուրքն եւ 'ի յանդամսն ելունդ ելանե, կամ այտոց լինի, կամ զարկս առնու, նա ջանայ բնութիւն որ արիւն յղարկե անդ, ողջացուցանել զտեղին: Եւ երբ այն արիւնն ընդ ցայլսն ելանե, նա 'ի ցայլսն խոլային մարմին կայ, առնու 'ի յարենէն եւ ուռչի: Ապա տաքնայ արիւնն 'ի հոն՝ եւ տաքցնէ զերակսն, եւ վերանայ յիրմէն շոգի, եւ երթայ 'ի սիրտն՝ եւ տաքցնէ զհոգի կենդանութեանն, որ ընծայե զջերմն: Նոյնպէս եւ ձեռքն եւ բազուկն յորժամ այտչի եւ ելունդ ելանե կամ զարկք առնու, ուռենայ 'ի յանթքն խոլային մարմին, եւ առնե զջերմն, որպէս 'ի ցայլսն ասացաք: Ապա թէ յայլ անդամուսն ելանե ելունդ, նոյն պատճառքդ եւ նոյն օրինակքդ, որպէս 'ի ցայլքն եւ 'ի յանթքն ասացաք:

Բայց այս ջերմանս մաճասին երակն ահաւոր եւ սուր լինի. ահաւորութեան պատճառն 'ի յարեան շատութենէն լինի, եւ հոգւոյ կենդանութեան զօրութիւնն. եւ սրութեան պատճառն սրտին կարիքն լինի՝ որ խաղաղեցնե եւ անցնե զտաքութիւնն՝ զոր 'ի յինքն հասաւ. եւ զշոգիքն վարե եւ հանե յիրմէն: Եւ երեսացն գոյնն կարմիր լինի, զի արիւնն ժխորած լինի եւ շարժած. եւ գոգին գոյնն իսպիտակ լինի, զի արեան տաքութիւնն եւ մաղձին 'ի ցաւած յանդամս երթայ: Ապա երբ ջերմն 'ի վճար գայ, գտուի 'ի մարմինն եղկ գիճութիւն. եւ իւր պատճառն այն է՝ որ փատլայն արգիլած լինի 'ի մարմինն, որ է յաւելուած: Իսկ յառաջ ելընդին բժշկութեան պէտ առնել պատեհ է. զի ինքն լինի պատճառ ջերմանն. եւ յորժամ զպատճառն կտրեն, նա ջերմն թողու եւ ողջանայ:

Ապա թե ասե՞ք, եթե յամեցնէ այս պատճառնիս զօրքն, եւ ջերմն 'ի յար մնայ, դու ընդ Է՞ր անուանեցեր զսա միօրեայ ջերմն. տամք պատասխանի եւ ասեմք այսպէս, եթե յոր օր ընծայի ցաւն, նոյն 'ի յօրն այն լինի ջերմն. եւ 'ի յոր օր ողջանայ ցաւն, 'ի նոյն օրն արձակի ջերմն:

Իսկ իւր բժշկութիւն այն է, որ 'ի բաղանիս մտէ, եւ յամէ 'ի բաղանիսն՝ որ փատլանին ելանեն 'ի մարմնոյն. աճռէ եւ մարձէ զմարմինն առանց ձիթերոյ, որ չիսծկէ զգաղտ շնչահանն մարմնոյն: Ապա թե յաւազան նստի, թող չիյամէ շատ՝ որ չջատնան գիծութիւնն իւր: Այլ զկերակուրն թեթեւ եւ շուտահալ ուտէ, որպէս հաւձագ եւ տուռած եւ տեհուճ, եւ որ նման սոցա. խիստ ջրախառն գինի տուր:

Այլ ասէ մեծ իմաստասէրն Սինայի որդին, եթե երակ առ, եւ զբնութիւնն լուծէ. եւ բժշկեա՛ զայտոցն եւ զելունդն իւր բժշկութեամբն, զոր գրած է իւր դուռն. զիւր ամենայն թպտիրն պարկեշտ արա. գինի մի՛ տար եւ ոչ ծանր կերակուր, մինչեւ վճարի ջերմն: Բայց 'ի վերայ ցաւցած տեղացն անճար սպեղանի դիր. հով եւ գիծային ձիթով հովցուր՝ որ անցնէ զտաքութիւնն. բայց հանց ջանա՛ որ բնիկ չի հովցնես զտեղին, որ չխափանէ զցաւն յեփելոյն, եւ իւրն հմութիւն տայ: Այլ զճանապարհն՝ որ ընդ ինքն եւ ընդ սիրտն 'ի մէջ կայ, հովացո խիստ, մինչեւ իւր հովութիւնն խորու եւ ներսի յատակն հասնի. եւ այդ բաւական է կամօքն Աստուծոյ:

Մահամատ Իպին Չաբարիան ասէ, թե այս ջերմանս, որ պատճառն 'ի յայտոցէ լինի, ջերմանայ այն հոգին՝ որ մօտ 'ի յայտոցն լինի. եւ այն ջերմն տեղացն տաքութիւնն եւ արիւնն մինչեւ 'ի սիրտն հասանի, եւ 'ի սրտէն սփռի ընդ շնչաւոր երակսն յամենայն մարմինն: Եւ իւր նշանն այս է՝ որ երեսացն գոյնն կարմիր լինի, եւ միճասին երակն մեծ եւ շոյտ եւ յար լինի, եւ գոգն սպիտակագոյն:

Իսկ իւր ստածումն այս է, որ երակ առնու իւր դիմացի հակառակէն. եւ ըստ հիւանդի ուժոյն՝ երկու երեք հեղ: Եւ զհիւանդին խառնուածքն հովացուր զարեջրով եւ սրբնճուպինով, եւ քաղցր եւ թթու նռան ջրով. եւ զփրփրեմին հնտին ջուրն սրբնճուպինով համակ 'ի բան պահէ: Ապա թե բնութիւնն կապ լինի, մրգաջրով եւ լիլուֆարի շարապով կակղացո. եւ հետ այսոր զայտոցն հովացո հովային դեղերով եւ օծանելով եւ 'ի վերայ դնելով զերթ զսանտալն եւ զշաֆիմամիսան եւ զառնալեզուն եւ վարդի ջուրն եւ քաֆուրն, եւ այլ զոր ինչ նման են սոցա. 'ի տաք կերակրոց եւ շատ 'ի ժուռ գալոյ եւ 'ի բաղանիս մտանելոյ պատրաստէ. այլ զմարմինն հանգիստ պահէ. եւ ամենեւին գինի չիխմէ:

Մատային ասէ, թե իւր ստածումն այն է՝ որ երակ առնէ եւ զարեջուր խմէ, քաղցր եւ թթու նռան ջուր: Ապա թե աւուրբն ամառային լինի, 'ի հով տեղիք նստի, եւ հով կերակուրք ուտէ, եւ հովային ըմպելիք խմէ, որպէս պզրիսաթունն ճուլապով, եւ փրփրեմի հնտի կաթն սրբնճուպինով, եւ խաւարտ եւ հազար, եւ հնդիպայ ուտէ, մանաւանդ խաղողի քացախով:

Ապա թե այտոցն պինտ լինի եւ խոցտէ զերթ նետով, ա՛ն սանտալ եւ վարդեջուր եւ զառնալեզուի ջուր. զայս ամենս յիրար խառնէ, հին քթան կտաւով 'ի վերայ այտոցին պահէ, շատ օգտէ: Եւ կերակուր դոմով մուզավարայ եւ ազոխի ջրով տուր եւ կամ նռան ջրով, եւ մաշի մուզավարայ սպաննախով, որ նշի ձիթով եփած լինի. եւ ամենեւին 'ի բաղանիս թող չիմտէ: Եւ 'ի շատ ժուռ գալու պատրաստէ, մինչեւ այս ջերմն 'ի կատար գայ եւ ողջանայ կարողութեամբն ամենագորին Աստուծոյ:

ԺԳ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն 'ի շատ կերակրոյ լինի եւ 'ի թուխմայե:

Մահամմատ Չաքարիային որդին ասէ, թէ այս ջերմանս պատճառն որ 'ի շատ կերակրոյ լինի, եւ 'ի ստամոքին 'ի վատուժութենէն, որ զկերակուրն հալել չիկարէ, եւ լինի որ աւիրէ զկերակուրն: Եւ իւր նշանն այս է՝ որ ձգեռտն հոտած գայ, եւ ծարաւն շատ լինի. եւ լինի որ բնութիւնն լուծանի, եւ անդամքն ծանրանայ:

Իւր ստածումն այս է, որ շատ 'ի քուն լինի. եւ երբ ստամոքն յիստկի, եւ նեխած ձգեռտն 'ի յաղէկ փոխի, եւ երբ մարմնոյն գոյնն դէպ 'ի կարմիրն լինի, եւ մաճասին երակն 'ի լի լինի, պատեհ է երակ առնել. եւ օր մի երկու՝ շաքարով փոխինտ ուտէ. եւ 'ի յայս ջերմանս յըստածումն չէ պարտ յուլութիւն այնել, զի լինի որ յերկար քաշէ: Չերթ զարեան ջերմն 'ի յար լինի հանապազ տաքութիւնն: Եւ իւր թպտիրն այն է՝ որ շուտով զմարմինն սրբէ մէկ քանի հեղ մրգաջրով եւ սրբնճուպինով. եւ զգարեջուրն 'ի բան պահէ իւր հաւիճնովն, օգտէ: Եւ երբ ջերմն թերեւանայ, 'ի բաղանիս մտէ եւ շատ նստի, եւ կիսատաք ջրով զմարմինն լուանայ, եւ թեփով զմարմինն շփէ: Ապա թէ բաղանիքն հով լինի, շուտ 'ի դուրս ելանէ. զի եթէ շատ նստի, երկիւղ կայ որ ջերմն բորբոսային դառնայ. ապա երբ 'ի բաղանեացն ելանէ, 'ի քուն լինի եւ հանգիստ կենայ:

Որիբաս ասէ, թէ պատճառն այս ջերմանս որ 'ի թուխմայե լինի, իւր ստածումն այն է՝ որ վերաբերութիւն այնէ եղկ ջրով եւ սրբնճուպինով, եւ հետ այնոր զբնութիւնն կակղացուր թմրինդով եւ սրբնճուպինով եւ դամոնի ջրով, թթու եւ բաղցր նռան ջրով: Ապա թէ բնութիւնն խիստ կակուղ լինի, հանց որ դատէ զհիւանդն, զստամոքսն զօրացուր նռան ջրով. եւ սերկեւիլի ջրով. ապա թէ զսերկեւիլն եփէ, եւ սակաւ մի տապաշուր խառնէ եւ ուտէ, խիստ օգտակար է: Ապա թէ գոզն կարմիր լինի, եւ ջերմն ուժով, եւ հիւանդն տկար չիլինի, պատեհ է որ երակ առնես: Ապա թէ ծարաւն շատ լինի, նռան ըռուպ հով ջրով 'ի բան տար. եւ երբ ջերմն պակասի, 'ի բաղանիս մտէ, եւ եղկ ջրով լուացվի, եւ 'ի բաղանեացն յետեւ 'ի քուն լինի. եւ կերակուր նռան մուզավարայ ուտէ. ապա թէ հիւանդին զօրութիւնն տկար լինի, հաւճագ կեր, օգտակար է:

ԺԴ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն անօթի կենալոյն լինի:

Ապուճարեհն ասէ, թէ այս ջերմանս պատճառն որ սովոյ եւ 'ի յանօթի կենալոյ լինի, իւր պատճառն այս է՝ որ գոլորշիքն ամենայն մարմնոյն ջերմացեալ սրանան, վասն ան պատճառին՝ որ կերակուրն յիւր ժամն չիհանդիպեցաւ: Եւ իւր նշանն այս է՝ որ ամենայն անդամքն թուլանան, եւ մաճասին երակն վատուժ եւ բարակ լինի. եւ երբ երակն բռնես, ներքեւ մատիտ պինդ լինի:

Եւ իւր ստածումն այս է՝ որ երբ 'ի ջերմանն 'ի նոպայն լինի, հարիրայ տաս գարու ալուրով եւ նշի ձիթով. եւ յետ այնոր կերակուր այլ ուժով կերակրի, զերթ սիսեռն մուզգաւարայ նշի ձիթով, կամ հաւճագ տապկած: Եւ յորժամ ջերմն յանգահի, 'ի բաղանիս մտէ, եւ եղկ ջուր 'ի վրան լնէ, եւ եղկ աւազան առնէ, եւ զմարմինն մանուշակի ձիթով օծանէ. եւ վարդի եւ դոմի ձեթ հանապազ 'ի բան տար, շատ օգտակար է Աստուծով:

Մահամատ Չաքարիայն որդին ասէ, թէ այս ջերմն որ 'ի սովոյ եւ յանօթութենէ լինի, պարտ է երակ առնել որ տաքութիւնն պակսեցնէ. եւ հետ այնոր փութով գարեփոխինս կերակրի շաքարով, եւ գարեջուր խմէ. հով եւ գիճային կերակուրք 'ի բան տանի: Ապա ջերմն հանդարտի, նա սակաւ սակաւ հով ջուր խմէ, եւ ամենեւին չիդատի զանձն. 'ի ծանր եւ անհալ կերակրոց պատրաստէ. թէթէ եւ պարկեշտ կերակուր թող ուտէ: Ապա թէ ջերմն եւ ծարաւն թէ խիստ լինի, իւր ստածումն այն է՝ որ հով ջուր խմէ, եւ զմրգանց ջուրն 'ի բան պահէ. որպէս դամոնջուր եւ մշմշի եւ նռան հատի ջուր եւ յունապի, եւ որ նման սոցա: Ապա թէ ամառն լինի, հով ջրով լվացվի. ապա 'ի բաղանիս մտէ, եւ եղկ ջրով լվացվի. եւ զմարմինն հով եւ գիճային ձիթերով օծանէ, որպէս այլ յառաջոյ յիշեցաք, օգտէ կամօքն Աստուծոյ:

ԺԵ

Վասն միօրեայ ջերմանն որ շատ դատելոյն լինի, կամ 'ի ծանր եւ դժար բանէ:

Դիւաճենն ասէ, թէ այս ջերմանս պատճառն այս է՝ որ 'ի շատ դատելուն հոգին տազնապեր է եւ տաքցեր է, եւ իր տաքութենէն զայս ջերմն յերեւան է բերել: Իւր նշանն այս է՝ որ ամենայն մարմինն տաք լինի եւ խոնճի եւ թմրի մարմինն. եւ մաճասին երակն վատուժ եւ բարակ լինի. եւ գոզն դեղին եւ նօսր:

Եւ իւր ստածումն այս է՝ որ զմարմինն հանգիստ պահէ, եւ գարեջուր սրբնճուպինով խմէ. եւ հանապազ քաղցր եւ թթու նռան ջուր խմէ. եւ երբ ջերմն պակասի՝ 'ի բաղանիս մտէ, եւ եղկ աւազան նստի, եւ զմարմինն օծանէ մանուշակի ձիթով: Ապա թէ ձմեռն լինի ու խիստ ցուրտ, օծանէ զմարմինն խիրու ձիթով եւ պապունաճի ձիթով: Եւ երբ բաղանեացն ելանէ, կերակուր՝ նռան մուզաւարայ ուտէ նշի ձիթով. եւ յետ այնոր եղերդակն եւ փրփրեմ 'ի բան տանին: Եւ երբ ջերմն վճար գայ, հաւձագ կերակրի համեմնով, եւ 'ի չորային կերակրոց պատրաստէ. եւ գինի ջրախառն խմէ. եւ յետ այնոր 'ի քուն լինի:

Մահամատ Չաքարիան ասէ, թէ իւր ստածումն այս է՝ որ եղկ ջրով լվացվի, եւ մանուշակի եւ նոնֆարի ձիթով զգլուխն օծանէ, նոյնպէս եւ զմարմինն, մանաւանդ զշնեցն զկաշին: Երբ 'ի բաղանեացն ելանէ, կերակուր հով եւ գիճային ուտէ, որպէս սպանախ եւ թախթ, որ լինի նշի ձիթով, եւ հաւու միս եւ ուլու. եւ ըմպելի հով ճուլապ խմէ, եւ շատ 'ի քուն լինի. ապա թէ այտով չիյաջողի, այլվի 'ի բաղանիս մտէ, եւ զնոյն թպտիրտ 'ի բան պահէ. եւ նոնֆարի ձիթով հանապազ զմարմինն օծէ. մէկ քանի հեղ եղկ աւազան առնէ. շատ օգտէ, մանաւանդ եթէ ձմեռն լինի:

ԺԶ

Վասն միօրեայ ջերմանն որ 'ի խոնճենալոյ լինի կամ ձիով կամ հետեւակ:

Բագարատ ասէ, թէ շատ տապելովն եւ խոնճելովն՝ հոգւոյն տաքութիւնն իւր չափէն անցնի, եւ հոգի կենդանութեան եւ հոգի զգայութեան դատին եւ ահոկին: Իւր նշանն այս է՝ որ ջիւք մարմնոյն զերդ լար քաշած լինի, եւ 'ի մարմինն չորութիւն երեւայ. եւ մաճասին երակն ծանտր եւ տկար երեւի. եւ գոզն նօսր եւ տկար, վասն շարժելոյ մարմնոյն եւ արձակելոյ զօրութեանն:

Իւր ստածումն այս է, որ հանապազ 'ի բաղանիս մտանէ, եւ եղկ աւազան առնէ, եւ զմարմինն եղկ ձիթերով օծանէ, եւ կերակուր պարկեշտ ուտէ, զերթ հաւձագ եւ ուլի միս,

թաժայ եւ մանր ձուկն որ 'ի քաղցր ջրէն կալած լինի: Բայց պակաս կերակրի վասն այն պատճառին՝ որ ստամոքսն 'ի յուժի չէ, եւ կարողութիւն չունի որ զկերակուրն եփէ. յետոյ ձվի դեղնուց թերխորով ուտէ. եւ զմարմինն հանգիստ պահէ. 'ի ծանր կերակրոց պատրաստի, օգտակար է:

Մասրճուէն ասէ, թէ իւր ստածումն այս է՝ որ յանօթուց ճուլլայ խմէ. ապա թէ գինւոյ սովոր է, ջրախառն թող խմէ. եւ զմարմինն մանուշակի ձիթով օծէ, եւ նոնֆարի. եւ ուշիկ ուշիկ զմարմինն մարծէ. եւ եղկ աւազան մտէ, որ զգիճութիւնն յաւելցնէ. նոյնպէս զգլուխն եւ զշիթն եւ զհլունսն ողոշարին մանուշակի ձիթով լաւ օծանէ. մանաւանդ յորժամ 'ի բաղնեցէն ելանէ, կակուղ եւ հանգիստ տեղ պառնի, եւ անուշ հոտեր՝ որ զըղեղն հոտացնեն՝ նա հոտայ, որպէս նոնֆար եւ մանուշակ եւ որ սոցին նման են, շատ օգտեն:

Մատային ասէ, թէ ձմեռն լինի կամ օղն ցուրտ, յորժամ 'ի բաղնեց ելանէ, զմարմինն պապունաճի եւ սամթի ձիթով օծնէ, եւ պարկեշտ կերակուր ուտէ, որպէս ղալիայ դոմով եւ սպաննախով եւ փերճկոտած մաշով: Ապա թէ չորութիւն երեւայ 'ի մարմինն, զարեջուր տուր նշի ձիթով եւ պզրղատունի լուապով իսպիտակ շաքարով. օգտէ Աստուծով:

ԺԷ

Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն զուզամ եւ նուզլայ եւ հազ լինի:

Փօլոսն ասէ, թէ այս ջերմանս պատճառքն եւ զնշանքն որ 'ի տաքութենէ լինի, զոր 'ի հովէ լինի, գրեցաք իւր դուռն 'ի լման, որ զզուզամն եւ զնուզլան յիշեցաք յայլ գիրք. եւ աստ գրենք զիւր ստածումն՝ որ է այս: Ի սկիզբն հիւանդութեան երակ առնու կամ ապիկիս արկանէ. 'ի մտէ եւ 'ի քաղցրէ եւ 'ի գինւոյ պատրաստէ. մնուցած մանուշակ եւ զարեջուր խմէ. զիւր ստածումն չիյուլանաս, զի լինի՝ որ իւրմէն սարսամ հիւանդութիւն ընծայի, եւ խիստ հիւանդութիւնն դժարանայ:

Մասրճուէն ասէ, թէ իւր ստածումն այս է՝ որ 'ի կիֆալէն երակ առնես. 'ի մտէ եւ 'ի քաղցր իրաց պատրաստէ. եւ կերակուր մաշի մուզավարայ տուր, եւ սպաննախ նշի կաթով կամ ձիթով, եւ զարեջուր խմէ նշի ձիթով եւ խաշխշի շարապ, եւ ճուլլայ հովցուցած 'ի բան տար. եւ բակլայի ջուր նշի ձիթով, օգտակար է. հարիրայ թեփով եւ նշի ձիթով կերակրի, զի խիստ օգտակար է: Ապա թէ ջերմն հետ շատ հազին լինի, իւր ստածումն այն է՝ որ զարեջուր տաս նշի ձիթով, եւ մանուշակի շարապ, եւ փրփրեմի հնտին կաթն, եւ սերկեւիլի կտի լուապ, եւ պզրղատունի լուապ, խաշխշի շարապով 'ի բան պահէ, եւ աղցած բակլայ նշի ձիթով 'ի բան տար: Եւ յորժամ ջերմն պակասի, սպաննախ եւ մաշ նշի ձիթով մուզավարայ ուտէ: Ապա թէ հետ ջերմանն ծարաւ խիստ լինի, զի ուզէ զգիճային իրվին 'ի բան պահէ. եւ 'ի վերայ լերդին հովային սպեղանիք դիր, օգտէ:

Էհաննան ասէ, թէ իւր ստածումն այս է՝ որ զարեջուր տաս, որ խաշխշի շարապով եւ նոնֆարով լինի եփած եւ նշի ձիթով. եւ հետ այնոր խաշխշի շարապ եւ մանուշակի շարապ տուր. եւ ա՛ռ աֆիոն եւ վարդեջուր, տրորէ, եւ զականջթոռն եւ զքներն օծնէ, որ 'ի քուն լինի: Ապա թէ 'ի ստամոքսն գէշ եւ աւեր խառնուած լինի, իւր ստածումն այս է՝ որ սրքնճուպինով եւ տաք ջրով վերաբերութիւն այնէ. եւ այլ զամենայն ցեղ դեղրանք, որք գրած են 'ի զուզամին դուռն եւ 'ի նուզլային եւ 'ի հազին, զամէն մէկ իւր տեղն 'ի բան տար. օգտէ Աստուծով:

ԺԸ

Վասն այն ջերմանն որ զկնի փորացաւութեանն լինի:

Սինային որդին մեծ իմաստունն ասէ, թէ այս ջերմանս պատճառն 'ի հոգւոյն շատ շարժելոյն եւ 'ի դատելոյն լինի 'ի ձեռն բնութեան զօրութեանն, վասն լուծմանն որ արտաքս հանէ. եւ 'ի ձեռն այդո պատճառանացո այս ջերմս ընծայի: Իւր նշանն այս է՝ որ երեսաց գոյնն դեղին լինի, եւ մարմինն թուլանայ, եւ աչքն խոր անկանի, եւ մաճասին երակն բարակ եւ վատուժ լինի:

Իւր ստածումն այս է՝ որ զփորացաւութեան դեղերն 'ի բան պահես, զոր փորացաւութեան դուռն յիշեր եմ. եւ ջանա՛ ամենայն դիմօք՝ որ զփորն կապես. եւ կերակուր փոթոթ եւ կապող տաս, որպէս աղտորի մուգավարայ եւ նռան, եւ որ սոցին նման են. եւ 'ի վերայ ստամոքացն սպեղանի դիր, որ ստամոքացն զօրութիւն տան: Երբ լուծումն դադարի եւ ջերմս յանկահի, 'ի բաղանիս մտանէ եւ զմարմինն եղկ ջրով լվանայ. եւ կերակուրք հով եւ չորային ուտէ, որ զբնութիւնն կապեն. զի թէ լուծումն դադարի՝ զկնի եւ ջերմս արձակի: Ապա թէ մնայ ջերմս, տե՛ս ո՛ր ազգէ է. 'ի նոպայո՛վ եւ 'ի բորբոսային ջերմերուն են, թէ 'ի յաննոպայ եւ յանբորբոսային ջերմերոյն. եւ բժշկէ իւր բժշկութեամբն, որպէս 'ի գիրքս գրեալ եմ մի ըստ միոջէ կարգով զպատճառն, զնշանն եւ զստածումն, օգնութեամբն Աստուծոյ:

Եւ այլ ամենայն ցեղ հիւանդութիւնն որ 'ի հետն ջերմս լինի, յորժամ հիւանդութիւնն բժշկի, եւ ջերմս արձակի: Ապա թէ ոչ՝ նոյնպէս տե՛ս զջերմս թէ յորո՞յ ազգէ է եւ ո՛ր ցեղ եւ ո՛ր տեսակ է, եւ զի՛նչ ունի պատահումն. 'ի բորբոսային ջերմերո՞յն է թէ անբորբոս, 'ի նոպայո՛վն է թէ աննոպայն, 'ի սո՛ւրն է թէ յերկարօրեան. եւ ստածէ զամէն մէկ իւր բժշկութեամբն, որպէս յիշել եմ, եւ յիշել կամիմ 'ի գիրքս ուրիշ ուրիշ կամօքն Աստուծոյ:

ԺԹ

Վասն այն ջերմանն որ զկնի մահտարածամուն է պատահած:

Դեվճանիսն ասէ, թէ այս ջերմս լինի 'ի յօդոյն աւերմանէն՝ որ զմարմնոյն խառնուածքն 'ի չափէ հանէ եւ աւիրէ 'ի ձեռն պիղծ եւ մահարար օդոյն: Իւր նշանն այս է՝ որ հիւանդն հանապազ նուաղի, եւ սիրտն տապի, եւ միճասին երակն զօրաւոր լինի եւ 'ի ժիր խաղայ. եւ ծարաւն շատ լինի, եւ շունչն կարճ. եւ այլ լինի որ վերաբերութիւն դիպի:

Եւ իւր ստածումն այս է. որ տեսանես թէ արիւն յաւելցեր է, երակ բաց 'ի սրտէն. ապա թէ մաղձն յաւելի լինի, զհալիլային մատպուխն մրգաջրով 'ի բան պահէ. ապա թէ պալղամն յաղթող լինի, հապի յայեարիճ տուր՝ թրպութով եւ շահմի հանդալով, եւ որ սոցին նման են. եւ զփոթոթային ըռուպին 'ի բան պահէ, որ ստամոքն զօրանայ. որպէս ազոխի ըռուպ եւ սերկեւիլի եւ նռան եւ ինձորի. եւ 'ի մրգանց տանձ եւ ինձոր, նուռ եւ սերկեւիլ ուտէ: Եւ երբ տեսանես որ հետ այս ջերմանս տաքութեան նշան լինի, թմրինտոյ ջուր եւ նռան շարապն 'ի բան տար, եւ փոփրեմի հնտի կաթն՝ քաղցր եւ թթու նռան ջրով տաս. եւ առաւօտուն քաֆուրի դուռս տուր թուրինճի ջրով խառնած. ապա ա՛ռ սանտալ եւ քաֆուր եւ 'ի վարդէջուրն խառնէ, եւ յար 'ի վերայ կրծոցն պահէ. եւ 'ի հով տուն կենայ, եւ ուռի տերեւ սփռէ 'ի տունն. եւ կերակուր աղտորով եւ նռան ջրով ուտէ՝ որ մուգ լինի. 'ի բաղանեաց 'ի զատ կենայ. 'ի տաք կերակրոց պատրաստի:

Մասուլային որդին ասէ, թէ իւր ստածումն այս է՝ որ հանապազ սրտին ուժ տաս, եւ անուշահոտ հոտեր եւ հովային ծաղկներ հոտայ. եւ զհովային ծաղկունքն 'ի վերեւն եւ 'ի բոլորն շարեն, եւ 'ի նստած տանն յորմունքն օծեն քաֆուր, սանտալ, վարդէջրով եւ քացախով խառնած լինի, եւ տունն այլ ցանեն, որ այն հոտն 'ի յար 'ի յինք հասնի, զի շատ օգտակար է: Եւ ա՛ն քթան կտաւ, վարդէջրով քաֆուր տրորէ, 'ի յայդ տրորածտ խառնէ եւ թաթիւէ զկտաւն, եւ 'ի վերայ կրծոցն եւ սրտին դիր. եւ ջուր հով խմէ, եւ նռան շարապ եւ ազդիսի ջուր 'ի բան տար: Ապա թէ այս դեղս չօգտէ, 'ի հով ջուրն քացախ խառնէ եւ խմէ. եւ կերակուր հաւձագ խորված, եւ ձուկ դեղնուց, եւ իսպիտակ գինի անուշահամ՝ որ նօսր լինի, եւ ամենայն ինչ՝ որ պարկեշտ են եւ փոթոթ, օգտեն Աստուծով:

Ի

Վասն այն ջերմանն որ զկնի նուաղին եւ թալանան:

Սապիթ Կուռան ասէ, թէ 'ի հում պալղամէ լինի. եւ այն հում պալղամն 'ի շատ թուխմայէ լինի հաւաքեալ 'ի ստամոքն եւ 'ի փորոքն, զի զօրութիւնն ընկղմեալ լինի, եւ բնութիւնն յիւր եփելուն ձանձրացեալ լինի: Իւր նշանն այս է՝ որ 'ի նոպային ժամն, եւ կամ զկնի նոպային, հիւանդն նուաղի պահ մի կամ այլ աւելի. եւ երեսաց գոյնն 'ի յարճիճի գոյն 'ի յար լինի, եւ 'ի յերեսն այտոց անկանի:

Եւ իւր ստածումն խիստ դժար է վասն այն՝ որ հիւանդութեան զլուխն բնութեանն յարթեալ լինի: Բայց իւր ստածումն այս է՝ որ չիշտապի, այլ քիչ քիչ զհիւանդութեան զլուխն պարկեշտ դեղերով լուծմամբ 'ի մարմնոյն յարտաքս հանէ: Ապա թէ հիւանդն լուծման դեղ չիկարէ առնուլ, կակուղ հոկնայով զբնութիւնն կակղացուր. եւ յետ այնոր զմարմինն ուշիկ ուշիկ մարձէ, որ թէ մնացորդ ունի հիւանդն, աճռելով զմարմինն՝ յարտաքս հանէ զինքն:

Բայց պիտի որ աճռելուն սկիզբն 'ի ճռանցն այնես, մինչեւ 'ի վայր երթաս. եւ ապա յետ այնոր թիկանցն արա, մինչեւ 'ի ձեռացն 'ի մատունքն. ապա յետ այնոր զկողքն եւ զկուրծքն նոյնն նշանօքդ: Ապա ա՛ն զուֆայ կամ կարօսի հունդ, աղա եւ մաղէ, եւ տուր մեղրաջրով, օգտէ: Ապա թէ այս ջերմն յամռան աւուրքն լինի, հով ջուր տուր խմել. թէ ձմեռն լինի՝ տաք ջուր թող խմէ. ապա թէ ջերմն ուժով լինի, մեղրով սրբնճուպին տաս. մանաւանդ՝ թէ հիւանդն ալեւոր կամ ծեր լինի:

Բազարատ ասէ, թէ պարտ է բժշկին որ ամէն օր զմաճասին երակն տեսանէ. եւ երբ իմանաս որ օր քան զօր երակն կուտկարանայ, ապա զհացն 'ի գինին թաց, եւ տուր այն նշանօքդ՝ որ այլ յառաջդ յիշեցաք: Եւ ամենայն օր երկու հեղ զմարմինն օծնէ. եւ զհացն 'ի ճուլապն թանալ եւ տալ օգտէ. եւ բաղանիսն շատ ահով է եւ զեն:

Ապա զկնի այս ջերմերուս պատեհ է յիշել զհալումաշ ջերմերն այսպէս: Եւ զայս գիտեա՛, եղբայր, որ զի միօրեայ ջերմն յորժամ յամենայ առ մարդն, փութով փոխի 'ի հալեւմաշ ջերմն, մանաւանդ որ պատճառն յերեք հոգիքն լինի. եւ այլ որոյ մարմնոյն խառնուածքն տաք եւ չորային լինի, եւ բնութիւնն այս պատճառնոյս լինի, նա շուտ ընդունի զհալեւմաշ ջերմն:

ԻԱ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն երեք ազգ հալեւմաշ ջերմանն:

Չայս գիտացիր եթե քանի՛ ազգ են եւ ընդ քանի՛ ցեղ բաժանին, եւ զիւրեանց պատճառն եւ զտեղիքն, եթե ո՛ր եւ ո՛րպէս լինի: Չայս ջերմս անուանէ հոռոմս ըկտիկօն, զոր տաճիկն դըլ, որ թարգմանի հալեւմաշ: Իսկ զայս ջերմս վասն այնոր անուանեցին այդ անուամբդ, որ հաստատի ՚ի մարմնոյն ՚ի չոր եւ ՚ի պինտ յանդամունսն, որպէս յոսկերթն, եւ ՚ի ջիւթն, եւ յայլն՝ զոր այլ յառաջ ասացաք. եւ հալէ զճրագուն, մաշէ եւ հատցնէ զմիսն, վասն այդոր պատճառանազոյ անուանեցին զնա հալեւմաշ:

Արդ պատեհ է որ իմանայ բժիշկն զայս ջերմանս զպատճառն՝ որ ընծայեցնէ զինքն. զի զերդ զմիօրեայ ջերմանն զպատճառնին լինի: Բայց միօրեայ ջերմանն պատճառնին սակաւ լինին, եւ շուտով արձակին. բայց երբ այն պատճառնին յամէ առ ՚ի մարդն եւ յերկարեն, նա մտանէ մէկ մի յայն պատճառնոյն խորու ՚ի մարմինն, եւ ընծայէ զայս ջերմս՝ որ կոչի հալեւմաշ: Եւս առաւել պատճառ այս լինի՝ որպէս սուզն եւ հոգսն եւ մտավարժութիւնն, ահն եւ երկիղն, ցանկութիւնն եւ դիպն, տքնութիւնն եւ շատ կարդալն, եւ ցորեկին անօթի կենալն եւ պակաս կերակրիլն, եւ որ սոցին նման են, որ չորացնեն եւ տաքցնեն զմարմինն զերդ յերկարօրեայ ջերմերն, եւ յերկարօրեայ ելնդին, եւ տաք հիւանդութեներն, որ յիշխան յանդամունսն լինի:

Այլ գիտացիր որ այս ջերմս երկու ազգ են. մէկն այրեցող տաքութիւն ունի եւ բարակ ջերմս. իսկ մէկայլն առանց տաքութեան լինի, զի բնական տաքութիւնն հատեալ լինի, զերդ ՚ի յալեւորաց մարմինս: Եւ այս ցեղս լինի՝ յորժամ ՚ի յիւր յառաջքն խիստ չորութիւն լինի հանդիպել. հանց որ զմարմինն բնիկ դատել լինի ամենայն ցեղ լուծմամբ. զերդ փորուն լուծելն, եւ վերաբերութիւնն, եւ երակ առնուլն եւ ապիկիքս, եւ այլ դիմօք արիւնն՝ որ ՚ի մարմնոյն ելանէ, քրտինքն, եւ խօփն՝ որ հետ հազին զայ, եւ բաղանիսն, եւ մերձաւորութիւնն, եւ որ սոցին նման են, ամենքն լուծումն են մարմնոյն եւ պակասումն զհիճութեան:

Այլ Փիլիպպոս բժշկապետն անուանեաց զայն ազգն՝ որ չունի տաքութիւն՝ ծերոց հիւանդութիւն: Բայց մենք տեսանեմք շատ մարդիկ՝ որ կայ եւ դիպի այդ չորութիւնդ, ոչ եթէ ծերոց միայն, այլ եւ երիտասարդաց եւ միջահասակաց, երբ իւրեանց բնաւորական տաքութիւնն հատեալ լինի ՚ի յերկար հիւանդութենէն եւ յար ցաւելոյ տեղաց մի մարմնոյն:

Վասն առաջին ջերմանն, զոր հալեւմաշ ասացաք:

Եւ եթէ այրեցող ջերմ ունի եւ ՚ի յերակն տաքութիւն, այս ջերմս բաժանի ՚ի յերեք ցեղ. եւ անուանեն զառաջինն թառմեցնող, եւ զերկրորդն բարակ, եւ զերրորդն քակող: Եւ այս երեք ցեղ հալեւմաշս ընծայի ՚ի բնական երեք ցեղ զհիճութենէն. զի ՚ի մարմին մարդոյս բնական չորս գիճութիւն կայ, եւ են նոքա կարգած մէկ հետ մէկի: Առաջինն՝ մարմնոյն ընդ ամենայն երակսն լինին, որ են չորս նիւթն. երկրորդն՝ ՚ի տեղեստանն, որ յերակացն փարփուտ են, եւ ընդ յերակսն ՚ի մէջ են, զերդ քովքն եւ այլ տեղեստան՝ որ ՚ի զատ են յերակացն. եւ երրորդ՝ բնաւորական գիճութիւնն՝ որ լինի ՚ի մարմնոյն միսն եւ ՚ի փորոտիսն. որպէս լեարդն եւ փայծաղն, թոքն եւ ստամոքն, եւ այլ ամենայն փորոտիքն. եւ չորրորդն՝ ՚ի յօդվածսն լինի, որ զամենայն անդամս մարմնոյն պինտ ունի եւ բռնած:

Այժմ ասեմ եթէ յորժամ ջերմանայ առաջին գիճութիւնն՝ որ ՚ի յերակսն լինի, որ են չորս նիւթն, նա տաքութիւն միայն ընծայէ ՚ի մարմինն: Ապա երբ աւիրին եւ բորբոսին, նա մէկ մի ՚ի բորբոսային ջերմերոյն ընծայեն, զոր այլ ՚ի յետոյ կամիմ յիշել: Ապա թէ հասանի այն տաքութիւնն ՚ի յերկրորդ գիճութիւնն, որ երակացն փարփուտ են՝ զատ ՚ի յերակացն, նա ցամաքեցնէ զայն գիճութիւնն, կամ մասն ինչ ՚ի յիւրմէն: Ապա այն

երեքէն առաջին ցեղ հալւեմաշն ընծայի, որ կոչի թառմեցնող. եւ այս ցեղիս ստածումն հեշտ լինի եւ շուտ: Ապա թէ հասանի այն տաքութիւն 'ի յայն երրորդ գիծութիւնն, որ 'ի միսն եւ 'ի փորոտիսն լինի, նա ընծայէ երկրորդ հալւեմաշն, զոր անուանեն բարակ, եւ իւր ստածումն եւ բժշկութիւնն դժար լինի: Ապա թէ այն տաքութիւնն, որ 'ի չորրորդ գիծութիւնն հասանի, որ զօղվածն եւ զամենայն անդամս մարմնոյն պիտո ունի, նա ընծայի երրորդ ցեղ հալւեմաշն, զոր անուանեն քակող եւ անցնող մարմնոյն. եւ այս ցեղս զստածումն եւ զբժշկութիւնն չընդունի բնաւ:

Չի յորժամ բնաւորական գիծութիւնն հատանի, չկայ ճար՝ որ այն մարմինն դարձեալ յիւր ողջնութիւնն դառնայ եւ հաստատի: Իսկ բերեմ եւ այս բանիս ընկեր եւ օրինակ, որ ընթերցողին դիւրաւ լինի: Չայս իմա՛ որ երբ ծամ՝ յորժամ կտրի 'ի յիւրմէն, նուազի եւ հատանի իւրիմէն ջուրն եւ հողոյն վաստակելն, նա այն ծամն վատթարի, եւ թառամի տերեւն: Ապա թէ դարձեալ վաստակի իւր հողն, եւ ծառոյն ջուր տան, ստոյգ պայծառանան իւր տերեւքն, եւ ճոտքն ուժ առնեն եւ պտղաբերեն: Ապա թէ զանց առնէ իւր տերն եւ անհոգ կենայ, նա հասանի այն չորութիւնն 'ի ծառին ճուղքն, եւ վատթարէ զիւր պայծառութիւնն եւ զճուղսն, եւ խափանէ զտերեւն եւ զպտուղն: Ապա թէ դարձեալ այն ծառոյն տերն պէտ առնէ նմա, զատակն բրէ եւ ջուր տայ, 'ի խիստ ցրտոյ եւ 'ի խիստ շոգոյ պահէ զծառն, լինի որ յանկարծ այն ծառն դարձեալ յիւր բնական բնութիւնն դառնայ, հետ շատ ստածելոյ եւ դատելոյ: Ապա թէ անտես առնէ տեր ծառոյն, եւ անհոգ կենայ՝ որ հասանի այն ծառոյն չորութիւնն 'ի յարմատն եւ 'ի կեղեւն, նա չորանայ ծառն, եւ չիկայ հնար՝ որ ձօնիւ դարձեալ յիւր բնութիւնն դառնայ: Նոյնպէս եւ այս ջերմս՝ երբ սկիզբն անհոգ կենայ իւր տերն եւ պէտ չայնէ, աւիրի իւր գրոյցն:

Այժմ ցուցանեմ եւ ասեմ զնշանսին եւ զստածումն եւ զբժշկութիւնն զատ 'ի զատ զամէն մէկ, որ ճանաչեն եւ գիտենան զամէն ցեղ ուրիշ ուրիշ. եւ ապա ստածեն եւ բժշկեն զայն ցեղն՝ որ ընդունի զառողջութիւնն, եւ այն՝ որ չունի ճարակ առողջութեան՝ 'ի զատ կենան:

Այժմ ասեմ զառաջին ցեղն, որ իւր պատճառն լինի տրտմութիւն եւ հոգս եւ 'ի սիրտ ելանելն, եւ այլ ամենայն պատճառքն՝ զոր այլ յառաջի ասացաք 'ի յերեք հոգիսն. եւ հասանի իւր տաքութիւնն 'ի տեղեստանն որ ընդ երակսն 'ի մէջ լինի: Եւ իւր նշանն այս է, որ տաքութիւնն միացեալ լինի, եւ իւր գոյնն թառմի, եւ դեղնութիւն անկանի. եւ 'ի յիւր շօշափելն գտանես սուր տաքութիւն. եւ իւր մաճասին երակն չիզ տուի ամենեւին փարփուտ 'ի տաքութենէ:

Բայց այս ջերմներուս ճանաչելն յիւր սկիզբն դժար է. զի տաքութեան գէշ խառնուածքն յաղթել լինի ամենայն մարմնոյն հաւասար, եւ հիւանդն չիմանայ թէ տաքութիւն կայ առ իւրն, եւ ոչ ցաւիլ տեղաց մին 'ի մարմինն, եւ ոչ տուժել, եւ ոչ տկարիլ մարմնոյն, եւ ոչ այլ նշանսին, զոր 'ի հետ բորբոսային ջերմերոյն լինին: Չի այն օտար տաքութիւնն հաստատեալ է ընդ ամենայն մարմինն, եւ չունի անդամ մի փարփուտ 'ի տաքութենէն՝ որ զգայ զայն զօտար տաքութիւնն:

Ապա երբ սկիզբն լինի այս ջերմանս, նշանն այս է՝ որ երբ երեք օր անցանի, եւ տաքութիւնն միացեղ եւ յարակ լինի 'ի մարմինն, եւ իւր տաքութիւնն չիլինի ուժով, եւ այլ չլինի նշան՝ որ 'ի բորբոսային ջերմերոյն, զերդ զդողալն եւ զծարաւն եւ զնեղհոգութիւնն եւ զփղծկելն եւ զլեզուին չորանալն եւ զսեւանալն եւ զմարմնոյն կտրտելն եւ զխոցոտելն եւ զգլխոյն ցաւիլն եւ զգոզին նեխահոտութիւնն եւ զմաճասին երակին մեծութիւնն եւ զայլեւայլ փոփոխիլն, եւ ոչ 'ի յայլ ամենայն ցեղ նշանացն՝ որ 'ի

բորբոսային ջերմերն լինի. եւ իւր տաքութիւն՝ զոր ասացաք՝ խաղաղ լինի եւ հանդարտ եւ սեղմ, ապա գիտացիր՝ որ այն առաջի ցեղ հալումաշն է զոր թառամեցնող ասեն:

Իսկ երկրորդ ցեղ հալումաշն լինի յայնկից, որ երբ տաքութիւնն հասանի 'ի բնական յերկրորդ գիծութիւնն՝ որ 'ի միսն լինի եւ 'ի փոր կարսիքն, ապա այն նշաննին, զոր ասացաք 'ի յառաջին հալումաշն, 'ի յայս 'ի յերկրորդ ցեղս այլ 'ի յերեւան եւ այլ 'ի բաց լինի: Չի յետ կերակուր ուտելոյն տաքութիւնն յաւելնայ, հանց որ իմանայ հիւանդն, եւ գիտենայ որ տաքութիւնն յաւելցաւ 'ի մարմինն, եւ դժարեցաւ ինքն: Եւ իւր պատճառն այն է՝ որ տաքութիւնն արգելած լինին 'ի ներքս 'ի մարմինն զերդ քամի, եւ պահած լինի. երբ մտանէ կերակուրն եւ ըմպելին, գտանեն զայն պահած տաքութիւնն 'ի մարմինն, եւ յերեւան բերեն եւ հանեն 'ի լոյս: Որպէս գտանեմք զօրինակն 'ի կրին քարն. զի յորժամ 'ի կրին քարն ջուր հասանի, նա զիւր տաքութիւնն՝ որ 'ի ներքս պահած ունէր, 'ի դուրս հանէ. եւ զայդ բանդ Պղատոն ասաց: Նոյնպէս եւ այլ ասէ՝ թէ յորժամ կրին քարն 'ի ջուրն հասանի, նա բանայ զիւր գաղտ շնչահանքն, եւ զտաքութիւնն 'ի դուրս վաթէ: Բայց այլ ոմն ասաց 'ի բժշկական վարդապետացն՝ թէ հիւանդին կերակուրն կերակրէ զայն օտար տաքութիւնն, շատցնէ եւ ուժովցնէ զինքն, եւ իւր վկայ այն է՝ որ երբ հալի կերակուրն եւ անցանի, նա դառնայ տաքութիւնն այլվի 'ի յիւր կերպն՝ որ յառաջն էր:

Իսկ երրորդ ցեղ հալումաշն, զոր քակող անուանեն, իւր պատճառն այն է՝ որ հասանէ իւր տաքութիւնն 'ի չորրորդ գիծութիւնն՝ որ ընդ ամենայն մարմնոյն յօդուածսն են, եւ զամենայն անդամս պիտո ունին բռնած: Բայց այսոր նշաննին այլ 'ի բաց լինին, եւ այլ 'ի յերեւան. զի աչքն խորանայ, եւ աչաց գուրն դարտկի, եւ 'ի յաչքն ճպուռ լինի, եւ կոպքն թուլանան, եւ 'ի վայր քաշվի, զերդ մարդոյ՝ որ կբայ եւ 'ի քուն կամի լինել. եւ երեսաց գոյնն զերդ կրակաց մոխրի լինի, եւ ճակտին կաշին քաշլի, եւ քնքերն 'ի ներս երթայ, եւ փորն փարփուտ եւ դատարկ կերենայ: Եւ այս ամենայն պատճառս այն է՝ որ բնական գիծութիւնն դարտակեցաւ եւ վճարեցաւ 'ի մարմնոյն, հանց որ չիմաց իրք:

Եւ իւր մաճասին երակն վատուժ լինի եւ փոքր. եւ երակին մարմինն պիտո լինի՝ որպէս զլար քաշած: Եւ երակին վատուժութեան պատճառն այն է՝ որ մարմնոյն զօրութիւնն հատել եւ կտրել լինի: Եւ իւր փոքրութեան պատճառն այն է՝ որ հոգի կենդանութեան եւ արիւնն պակասել են, եւ սակաւ լինի յերակսն: Եւ երակին մարմնոյն պատուժեան պատճառն այս է՝ որ բնական գիջութիւնն հատել լինի եւ վճարեալ 'ի մարմնոյն:

Եւ իւր գոգին նշանն այն է՝ որ հիւանդութեան սկիզբն զերդ զտաշեղ եւ զքերուքս լինի 'ի մէջ կարուրային, եւ հիւանդութեան վիճարն ձիթոյ նման լինի գունովն եւ վաթելովն: Եւ իւր պատճառն այն է՝ որ մարմնոյն ամենայն անդամուքն 'ի հալ են ընկեր: Եւ երբ զայտ ամենայն նշաններտ տեսանես, գիտացիր՝ որ չէ բարույ. զի չընդունի զառողջութիւնն, այլ 'ի նոյն մեռանի:

Եւ այլ գիտացիր՝ որ այս ցեղ հալումաշ ջերմանս պատճառն այնոր հանդիպի՝ որ մարմինն սար լինի եւ պատճառոյոյց, եւ իւր տերն շատ հոգս լինի քաշել եւ շատ սուգ, կամ յայլ ցեղ ջերմերուն շատ աւուրք լինի յամել առ ինքն: Եւ այլ որ յերկար եւ բազում դատել լինի, եւ այն որ պաք շատ լինի կացել, եւ այնոց որ սակաւ կերակուր կերակրին, եւ այնոց որ 'ի տաք երկիր լինին, եւ այնոց որ մարմինն տաք լինի, եւ տարօքն ընդ քսանին եւ քառասնին մէջն լինին, եւ այնոց որ շատ տաք դեղեր կերել լինին եւ խմել, եւ այնոց որ հին հազ ունին. եւ հաւասար ամենայն իրք, որ տաքութիւն եւ չորութիւն առնեն, զի տաքցնեն եւ չորացնեն զմարմինն շատ: Եւ այդ ամենիդ վիճարն հալումաշ

ջերմն բերել: Եւ այդ է պատճառն ին եւ նշանին, զոր ասացաք կարճառօտ վասն հալեւմաշ ջերմանն, օգնութեամբն Աստուծոյ:

Վասն երկրորդ ազգ հալեւմաշին, որ 'ի խիստ հովութենէն ընծայի, զոր Փիլիպպոս բժշկապետն ծերոց եւ ալեւորաց հիւանդութիւն անուանէ: Ասէ Փիլիպպոս բժշկապետն, եթէ այս ջերմն 'ի խիստ հովութենէն ընծայի, հանց որ զբնական տաքութիւնն եւ զբնաւորական գիճութիւնն հատցնէ եւ 'ի վճար բերէ 'ի մարմնոյն. այլ վասն այնոր թողի զհւր պատմութիւնն զհւր ցեղերուն, որ անբժշկելի են: Այլ ընդ այս հալեւմաշս՝ որ 'ի հովութենէ լինի, եւ ընդ այն՝ որ 'ի տաքութենէ լինի եւ 'ի չորութենէ, նշանն այն է՝ որ 'ի հովէ լինի, մաճասն վատուժ լինի եւ յուլ, այնոր համար՝ որ հովութիւնն յաղթել լինի. եւ իւր գոգն իսպիտակ լինի եւ նօսր. եւ իսպիտակութիւնն 'ի հովութենէ լինի, եւ նօսրութիւնն 'ի չորութենէ լինի: Եւ այդ բաւական է վասն հալեւմաշ ջերմանն՝ որ 'ի հովութենէ լինի, վասն այն՝ զի չունի առողջութիւն:

ԻԲ

Վասն ստածման եւ բժշկութեան առաջին ցեղ հալեւմաշ ջերմանն, որ 'ի տաքութենէ լինի:

Եւ ինքն ընդ երեք ցեղ բաժանի. եւ վասն իւր ճանաչելոյն՝ երբ մէն լինի եւ բորբոսային ջերմերուն 'ի գատ, եւ այնոց որ չունին երեւան նոպայ, զոր այլ 'ի յառաջդ ասացաք. ապա երբ ժամն եւ ժամանակն պատեհ լինի եւ աղէկ, սկիզբն արա ստածելոյ այսպէս: Եւ թէ կարիք լինի զմարմինն սրբելոյ, սրբէ խիարշամպով եւ թարանկուպինով եւ զարեջրով եւ քաղցր նռան ջրով. ապա թէ հետ աւուր մի կամ երկու՝ իշու կաթն տուր խմելու:

Ապա թէ կարիք չէ զմարմինն սրբելոյ, դու սկիզբն իշու կաթն արա այս նշանօքս. գիտացիր որ էշն ճերմակ լինի եւ առողջ, եւ ազատ յամենայն ցեղ հիւանդութենէ. եւ աւուրքն մատղաշ պիտի, եւ մօտ 'ի յօրերն լինի ծնած, եւ իւր կաթն իսպիտակ եւ հաւասար լինի. երբ 'ի վերայ ըղնկանդ կաթեցնես, չիլինի նօսր՝ որ վաթի, եւ ոչ թանձր՝ որ չիսփռի: Եւ դարմանէ զէշն աղէկ խոտով՝ որ դալար լինի, եւ հովային բանջրնով, որպէս հազար, եւ դդմի տերեւ, եւ հինտիպայ՝ խառնած ընդ դալար գինձն, եւ այլ պզրղատունի կոթ, եւ գարի լուացած ցամաքեցուր եւ ապա կերցուր: Ապա ա՛ն իւր կաթնէն. 'ի յառաջին օրն տուր կէս լիտր, եւ հետէն յաւելցուր 'ի կաթն ըստ ուժոյն հիւանդին, եւ տուր զայդ 'ի յար, մինչեւ լուծանի եւ ոչ կապի: Յետեւայն կերակուր տուր թաղթ եւ մաշ եւ վլիտօն՝ որ է ծմել, դդում եւ հազար. զամենն նշի ձիթով տուր. եւ խմելոյ մուգ նռան ջուր տուր:

Եւ ապա հետ կերակրին սակաւ ժամ անցո, եւ յաւազան նստի՝ որ ջուրն քաղցր եւ յիստակ լինի եւ եղկ, եւ եփած լինի 'ի յինքն մանուշակ եւ դդմի տերեւ եւ հազարի տերեւ եւ իսպիտակ գարի փերճկած: Եւ երբ ելանէ յաւազանէն, օժանէ զմարմինն լիլուֆարի ձիթով եւ մանուշակի ձիթով եւ քաղցր դդմի ձիթով. եւ ապա յետ այնոր օժանէ զկուրծքն մանուշակի ձիթով՝ որ ընդ իսպիտակ մոմ հալած լինի, որ պահէ զգիճութիւնն որ շահեցաւ 'ի կերակրոյն եւ աւազանին ջրէն:

Ապա թէ հիւանդին մարմինն ախորժայ այլ աւելու գիճութիւն քան զայդ որ ասացաք, ապա առաջ քան որ յաւազան մտանէ՝ կթել տուր 'ի վերայ գլխոյն կնկան կաթն կամ իշու կաթն կամ այծու կաթն. զի այդ կաթներտ խիստ գիճացնեն զհիւանդն: Ապա թէ

հիւանդն չժուժէ կաթն կթելոյն, դու զկաթն 'ի յաւազանին ջուրն խառնէ. բայց 'ի յաւազանն շատ մի' յամեցներ, զի աւազանին եղկ ջուրն վատուժցնէ զմարմինն:

Ապա յառաջ քան որ յաւազանն մտանէ, չէ պարտ մարձել որ ինչ ցեղ ձիթով. զի խծկէ եւ կալնէ զգաղտ շնչահանն մարմնոյն, նա չիընդունի զաւազանին գիճութիւնն: Եւ զայդ՝ զոր ասացաք՝ 'ի յար արա. զի այդ խորհուրդդ շահեցին զմարմնոյն բնաւորական գիճութիւնն. եւ արա՛ զայդ յաւուրն երկու հեղ. զմէկն յետ կաթինն տալոյն՝ յառաջ քան զկերակրոյն ուտելն, որ զկաթին գիճութիւնն շահի եւ պահէ 'ի մարմինն. եւ յետ այտոր տես զմարմինն հիւանդին. եթէ 'ի յաւելի խլտերոյն՝ որ է չորս նիւթերն՝ սուրբ լինի, հանց որ չընդունի զբորբոսելն, ապա տուր՝ որ խմէ կովուց թան, զոր բնիկ սրբած լինի 'ի կարագէն. այլ կովն կարմիր պիտի. բայց մի՛ յաճախ տաս որ չիճանձրանայ 'ի թանէն: Եւ զթանին չաքսն կէս լիտր տուր. ապա թէ տեսանես զուժն՝ որ կարող է, դու յաւելցուր 'ի թանն ըստ ուժոյն. բայց քիչ քիչ թող խմէ, հանց որ ամէն հեղ նուկի մի լինի կամ պակաս. ապա թէ տաքութիւնն շատ լինի եւ ուժով, դու տուր հետ թանին զայս դուրսս, որ է այս:

Ղուռս տապաշիրի հով:

Ա՛ռ տապաշիր չորս դրամ. վարդ եօթն դրամ. խիարի կուտ կտուած, եւ փրփրեմի եւ դդմի կուտ կտված, հազրի հունդ, քահրիպար երեք երեք դրամ. զամէն աղա եւ մաղէ, զառնալեզվի ջրով շաղվէ, եւ դուրսեր արա, եւ տուր հետ թանին: Եւ զայս արա երբ մարմինն սուրբ լինի 'ի բորբոսային նիւթոյն:

Ապա թէ 'ի մարմինն այլ ցեղ տաքութիւն լինի, եւ մարմինն չէ սուրբ, եւ լինի յինքն նիւթեր սար, որ այլ ջերմն կամի ընծայել, ապա հոտ պարտ է պատրաստ կենալ 'ի կաթներոյն եւ 'ի թանէն: Իսկ թանին փոխան գարեջուր տուր, յոր եփած լինի կենդանի խաչեփար, որ 'ի մանր եւ 'ի մեծ ճանկերոյն սրբած լինի, եւ լուացած լինի աղէկ քաղցր ջրով եւ աղով եւ ջնջխած լինի. ա՛ռ 'ի յայդ գարեջրետ չորս նուկի, եւ մուգ նռան ջուր մի նուկի. եւ յայս դուրսես մի մթխալ, զոր այժմ գրեմ:

Ղուռս հով՝ որ օգուտ է սլին ջերմանն:

Ա՛ռ զառնալեզու երեք դրամ. հայ կաւ չորս դրամ. վարդի կոնզմէն յիստկած վեց դրամ. սերկեւիլի կուտ յիստկած, դդմի հունդ յիստկած, փրփրեմի հունդ վեց վեց դրամ. մարուխի քամուքսն տասն դրամ. տաճիկ կռեզ, քիթթայ եւ նշայ երեք երեք դրամ. սեխի կուտ եօթն դրամ. զայս ամէնս աղա եւ մաղէ, եւ շաղվէ պզրղատունի լուապով, եւ դուրսեր արա, եւ 'ի շքի չորացուր, եւ տուր աղցած եւ մաղած մի մթխալ՝ քաղցր նռան ջրով եւ խիարի ջրով անօթեց, օգտէ հալեւմաշ ջերմանն, եւ այն ջերմանն՝ որ սիլ կոչի: Եւ կերակուր՝ մաշ տուր եւ դդում եւ վլիտօն եւ թաղթ, որ լինի նշի ձիթով. եւ երբ ծարաւենայ, քաղցր նռան ջուր տուր. եւ ընդ երիկածքն՝ օճանէ զմարմինն լիլուֆարի ձիթով, եւ քաղցր դդմի ձիթով. զիւր տունն եւ զպառնկելիքն հով արա, եւ ցանէ վարդ եւ ուռու տերեւ. թէ վարդ չիգտվի, այգւոյ տերեւ ցանէ:

Ապա թէ հիւանդն նուաղի, դու օժէ 'ի մարմինն հով լախլախով, որ են այս ջրերս: Ա՛ռ ինձորի ջուր, եւ մրտենոյ ջուր, սերկեւիլի եւ վարդի ջուր. չոր վարդ եւ քաֆուր եւ զաֆրան. աղա՛, եւ 'ի ջրերդ խառնէ, եւ 'ի բան տար: Ապա թէ խիստ վատուժի հիւանդն, դու մսի ջուր տուր այս նշանօքս: Ա՛ռ ուլու միս 'ի թիկանցն եւ 'ի շլեցն եւ 'ի կողոյն, մանր կտրատէ եւ 'ի քարէ պտուկ արկ, եւ աղն պակաս արա, եւ մեղմն կրակով եփէ. եւ որչաք 'ի մսէն ջուր ելանէ, դու հետէն առ զջուրն, 'ի զատէ յաման արկ, մինչեւ ցամաքի միսն. ապա սակաւ մի անուշահոտ գինի, եւ իւր կիտոյն չաք ինձորի ջուր. զայտոք 'ի մսին

ջուրն խառնէ, եւ մեղմ կրակով սակաւ մի եռցո, եւ ապա տուր կում կում որ խմէ. զի այդ ջուրդ խիստ ուժովցնէ զհիւանդն:

Եւ այլ ջանք արա ամէն հունարով՝ որ չիլուծի բնութիւնն. զի թէ դկին տիրոջն, եւ սլին տիրոջն բնութիւնն լուծանին, նա շուտ կորնչին մահուամբ. ապա թէ լուծումն հանդիպի, զայս դուրսս տուր. զի խիստ օգտակար է դկին տիրոջն՝ որ լուծ ունենայ:

Ղուռս կաւի՝ կապող:

Ա՛ն հայ կաւ տասն դրամ. շահալուրթ եւ վարդ չորս չորս դրամ. եւ տեսայ՝ ՚ի յայլ նուսխայ՝ որ նշաստակ եւ փրփրեմի հունդ դնեն չորս դրամ. տապաշիր երեք դրամ. թրթկնի հունդ կտված վեց դրամ. քահրիպար երեք դրամ. զամենն աղա եւ մաղէ, եւ մուգ սերկեւիլի կամ խնձորի ջրով շաղվէ, եւ դուրսեր արա, եւ տուր մի մթխալ՝ ՚ի յայդ դուրսետ տանծի ջրով կամ սերկեւիլի ջրով:

Եւ երեկոյին տուր զայս դեղս: Ա՛ն պզրղատուն աղընձած մի մթխալ. եւ այրած խեցգետին մի դրամ. տաճիկ կռեզ աղընձած մի դրամ. աղա եւ մաղէ, եւ տուր մուգ ծորի ջրով կամ նռան: Եւ կերակուր տուր թրթկնի եփած եւ տապկած, որ լինի ՚ի հետն նուշ աղընձած: Եւ ա՛ն փերճոկած ոսք եւ աղընձած, եւ հեղ մի եփէ, եւ ձգէ զջուրն, եւ ապա արկ ՚ի վերայ մուգ նռան ջուր կամ սերկեւիլի կամ աղտորի ջուր, եւ այլվի եփէ, եւ տուր որ ուտէ: Եւ այլ տուր փշատի փոխինտ, կամ նռան հատի փոխինտ ՚ի հետ պաքսիմիտի. եւ զայս կերակուրքդ եւ ըմպելիքդ յայնժամ տուր՝ որ երբ չիլինի հազ:

Եւ թէ հազ լինի, տուր խմելոյ տաճիկ կռեզ եւ հայ կաւ. եւ կերակուր՝ ոսքան փոխան՝ հացի փշրուկ տուր աղընձած նշով. եւ սերկեւիլին ջրի փոխան՝ մրտի քամուքսն տուր, զի մրտի քամուքսն արգիլէ զլուծումն, եւ օգտէ հազին այն սակաւօք քաղցրութեամբն՝ որ ՚ի յինքն կայ: Ապա թէ հանդիպի որ յաղիքն ելունդ բան ունի, դու հոկնայ արա այս նշանօքս:

Յուկնայ, որ օգտէ ելունդի՝ որ ՚ի յաղիքն լինի:

Ա՛ն գառնալեզվի ջուր, եւ բրսի անդտարի ջուր, որ յարապն հովուի բիր կոչեն, եւ ձուկ դեղնուց, եւ տաճիկ կռեզ, հայ կաւ եւ հոռոմ մատնեհար կաւ, եւ պրտուի ջնջագիր այրած, իսվիտած. զամենն ՚ի մէկ տեղ ժողվէ, եւ հոկնայ արա որպէս ըռասմն է:

Այլ հուկնայ նոյն ցաւուն:

Ապա թէ այդ ջրերդ չիգուի, զոր այլ յառաջդ ասացաք, դու իւր փոխան՝ փրփրեմի ջուր առ եւ թրթկնի ջուր, եւ մատնեհար հոռոմ կաւ, եւ աղբրաց արիւն, նշի ձէթ. զամենն հաւաքէ եւ հոկնայ արա. զի այդ հոկնատ խիստ օգտակար է, օգնութեամբն Աստուծոյ:

Մահամատի Չաքարիան ասէ՝ թէ այս ջերմս երեք ցեղ լինին, զոր այլ յառաջդ ասացաք, թառամեցնող եւ բարակն եւ քակողն: Առաջին ցեղն, որ է թառամեցնողն, իւր պատճառն զերդ միօրեայ ջերմանն լինի. եւ իւր նշանն այս է՝ որ գոյնն դեղին դառնայ, եւ ջերմն հանապազ ՚ի կերած ժամն գայ, եւ ՚ի քուն լինելոյ ժամն. բայց մարմինն շատ տաք չիլինի, եւ ՚ի մարմնոյն կաշին չորութիւնն ցուցանէ:

Եւ իւր ստածումն այս է՝ որ հանապազ գարեջուրն ՚ի բան պահէ: Եւ երբ տաքութիւնն անցանի, դալար մանր ձուկն խորված ուտէ. եւ ՚ի խաւարտնուն զհովն եւ զգիճային ՚ի բան պահէ. որպէս հազարն եւ փրփրեմն, զդալար գինձն եւ զխորփորըստն, եւ զոր նման

սոցիալական: Ամենայն օր 'ի բաղնիս մտանէ, 'ի հով տուն նստի, գմարմինն մանուշկի ձիթով օծէ, եւ հոտոտայ 'ի հով եւ 'ի գիճային ծաղկանցն, եւ հով սպեղանիք 'ի վերայ կրծոցն դնէ, եւ ըստամոքն՝ որ 'ի կերակրոյն թեթեւ լինի, յայնժամ ջերմանն տաքութիւնն խիստ լինի. գիտի եւ զգիճային ձիթերն 'ի քիթն արկանէ, եւ որչաք կարէ գթուն լինելն ջանայ. եւ ոչ ինչ դիմօք զանձն չիդատէ. 'ի տաք տանէ եւ 'ի շող օդէ պատրաստ կենայ: Ապա թէ այս ջերմն տաքութիւն եւ այրեց լինի, զքաֆուրին դուրսն 'ի բան պահէ սակաւ քացախով՝ ընդ ծագել արեւուն:

Սահակն ասէ՝ թէ իւր ստածումն այս է՝ որ գարեջուր խմէ. եւ 'ի քնուն ժամն պզրղատուն ճուլապով խմէ. զկերակուր շատ թող չուտէ, մանաւանդ 'ի յամռան աւուրքն՝ եւ ամենայն տաք իրաց պատրաստ կենայ. հով ջուր խմէ քիչ քիչ, եւ թանայ քթան 'ի վարդեջուրն՝ որ լինի քաֆուր եւ սանտալ, եւ դնէ 'ի վերայ կրծոցն. եւ կերակուր դոմի մուգավարայ եւ սպանախ կերցուր, եւ թաժայ ձուկ խորված. եւ քան զամենայն ինչ օգտէ խաչաւիարն՝ որ գարեջրով լինի եփած: Եւ երբ տաքութիւնն պակսի, հաւձագ՝ փերճկոտած գարով 'ի բան պահէ, եւ պանտրայ ջուր հով ճուլապով խառնած, եւ բանջրնուն հազար եւ դալար գինձ կերակրի: Ապա թէ ջերմն զօրաւոր է, կերակուր՝ թերխորով ձուկ դեղնուց տուր, շատ օգտէ Աստուծով:

Սահամատ Չաքարիայն ասէ վասն ստածման եւ բժշկութեան երկրորդ հալեմաշ ջերմին, եթէ այս երկրորդիս բարակ անուանեն, եւ երրորդն՝ որ քակող, դժար ողջանան. մանաւանդ երրորդն: Եւ իւր պատճառն այն է՝ որ բնաւորական տաքութիւնն եւ օտար ջերմն զբնաւորական գիճութիւնն 'ի մարմնոյն քաղեն եւ հատցնեն:

Իսկ երկրորդ հալեմաշն, որ է բարակն, նշանն այս է՝ որ աչքն 'ի գուրն անկանի, եւ մարմինն նօսրանայ եւ բարկնայ, եւ օր ըստ օրէ վատուժի եւ նիհարանայ. վասն այդր պատճառանացոյ անուանեցին բարակ զայս ջերմն: Իւր ստածումն այս է՝ որ օրն երկու երեք հեղ 'ի բաղնիս մտէ, եւ 'ի տաք տուն չիմտէ, եւ ամենեւին չիքրտնի, եւ գարեջուր խմէ. եւ յետ երկու պահու՝ եղկ աւազան մտէ, եւ հանապազ 'ի հով եւ 'ի գիճայինն հոտոտայ, որպէս յառաջդ ասացաք:

Ապա թէ ձմռան աւուրքն հանդիպի, 'ի կրակի տաքութենէ եւ 'ի ծխէ պատրաստ կենայ. զի հովն օգտակար դեղն է այս հիւանդիս. եւ օժանելոյ տեղիք եւ սպեղանեաց՝ հովն օգտէ, զի զսիրտն հով պահէ: Եւ պատեհ է՝ որ զգլուխն ծածկած պահէ, որ զուգամ եւ մուգլայ չիպատահի. եւ 'ի քիթն հով եւ գիճային ձիթեր արկանէ. եւ շատ 'ի քուն լինելն օգտակար է:

Ապա թէ գոզն զերթ զձեթ լինի, զհովային եւ զգիճային դեղերն 'ի բանի պահէ: Ապա թէ տաքութեան նշաննին խիստ լինի, եւ զտապաշիրին դուրսն տուր, եւ զբնութիւնն կակղացո դամնի ջրով եւ թարանկուպինով. շատ օգտէ Աստուծով:

Վասն ստածման երրորդ հալեմաշին:

Իսկ եթէ երրորդ հալեմաշն լինի, զոր քակողն անուանեն, զի քակէ եւ հալէ, եւ դատարկէ զճրագուն եւ զմիսն, եւ զչորրորդ բնաւորական գիճութիւնն. եւ վասն այդր պատճառանացոյ անուանեցին քակող: Եւ իւր նշանն այս է, որ ըղունկն զերդ զայծու ծռին, եւ փողիցն խռտումն 'ի դուրս ցցվի, եւ երկու ուսն բարձրանայ, եւ ճակատին կաշին քաշած եւ չոր ցուցանէ, քներն եւ երկու աչքն 'ի ներս երթան:

Իւր ստածումն այս է՝ որ զկերակուրն թեթեւ եւ դիւրահալ ուտէ, որ անուշահոտօք եփած լինի, զերդ ուլի միս, հաւու ձագ, եւ գառին ողոշար՝ սիսռան ջրով. եւ զկնի այտոր՝

խնժորի ջուր, եւ քաղցր եւ թթու սերկեւիլի ջուր ընդ սակաւ մի գինի խառնեալ, եւ գերմակ հաց փշրեալ խառնէ եւ ուտէ, եւ զանուշահոտերն անպակաս 'ի բանի պահէ: Ջանայ որ փորն խիստ չիլուծանի. զի թէ փորն լուծանի, շուտով կորնչի. եւ հանապազ զսանտալն եւ զվարդի ջուրն ընդ յիրար խառնէ, 'ի վերայ սրտին եւ լերդին պահէ. զմանուշակի ձէթն եւ զնիլիֆարի 'ի գլուխն եւ 'ի յանդամսն հանապազ օծանէ. եւ ամենեւին քաղցած եւ ծարաւ չիկենայ, տրտմութիւն եւ հոգս չիտանի. զի այս ամենայն եւ իւրեանց նմանիքն ահուկեն. եւ զվերակուրն պարկեշտ տուր, զերդ որ այլ 'ի յառաջդ յիշեցաք, օգտակար է թէ Աստուած կամի:

ԻԳ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն սլին ջերմանն, որ է թոքոյն խոցնալն եւ մաշիլն:

Յոռոմն եփթեսիստ անուանէ, եւ տաճիկն սլ կոչէ. այլ գիտացի՛ր որ սլին ջերմն նման է դկին ջերմանն. բայց սլին ջերմանն հազ լինի, զի իջանէ խլտն, որ է նիւթն, 'ի գլխոյն 'ի կուրծքն եւ 'ի թոքսն, նոյնպէս եւ յամենայն մարմնոյն՝ 'ի ձեռն հազալոյն՝ արկնուի նիւթս. զի հազալն յաղթ մարմնոյն, եւ շարժէ եւ բերէ 'ի կուրծքն եւ 'ի թոքսն, եւ արգիլէ զհիւանդն 'ի քուն լինելոյ եւ 'ի հանկիստ կալոյ:

Յոհանն ասէ, եթէ իւր պատճառն 'ի սուր գիճութեներոյ լինի՝ որ 'ի թոքքն իջանէ, կամ 'ի կուրծքն ժողովի, եւ խոցացնէ զտեղիքն՝ ուր հաւաքի, եւ զշարանն ընդ ամենայն կուրծքն ցրուէ, եւ կամ 'ի կէս կրծոցն լինի: Եւ երբ թոքքն խոցնայ, իւր նշանն այն է՝ որ մարմինն նիհարանայ, եւ կակուղ տաքութիւն լինի զերդ հալեւմաշին, եւ եղենկունքն ծռին, եւ ոտներն ուռչին, վասն այնոր որ գիջութիւնքն հալեցան. եւ հազալով ընդ խոչակն կուգայ հոտած, եւ մէջ ընդ մէջ արիւն. եւ կրծոցն խոցնալուն նշանն այն է՝ որ տաքութիւն այլ շատ լինի, եւ շունչն կարճ լինի, եւ կուրծքն ցաւի, եւ հազն չոր լինի:

Փօլօս ասէ, եթէ այս հիւանդութիւնս հետ բրսիմին լինի, եւ հետ զուգամին, կամ հետ շատ նուզլայի, որ 'ի գլխոյն իջանէ, կամ հետ յերկարօրեայ հազի, կամ յետ շատ արեան ձգելոյ, որ զթոքսն կամ զկուրծսն խոցացուցեալ լինի. եւ 'ի կերակրոյ միտքն փակեալ լինի: Այլ ստածումն այս հիւանդութեանս դիժար լինի. զի յորժամ թոքսն խոցանայ, չողջանայ իւրովի. զի հանապազ 'ի շնչոյն յառն եւ 'ի տուրն կայ եւ շարժի, եւ զերդ զդարբնի փութսն զհով զօղն առնու եւ 'ի սիրտն ուղարկէ, եւ զտաք օղն առնու 'ի սրտէն եւ 'ի դուրս ուղարկէ: Ապա թէ ժամ մի թոքին շարժելն դադարի, նոյն պահն սիրտն այրի, եւ 'ի յայնր յայրելոյն 'ի տաքութենէն՝ մարդն մեռանի. ապա 'ի յառաջ քան զայն՝ որ այս հիւանդութիւնս զօրանայ, պարտ է ստածել եւ բժշկել:

Վասն ստածման եւ բժշկութեան սլին ջերմանն:

Արդ պարտ է 'ի յայս ջերմանս 'ի ստածումն եւ 'ի բժշկութիւնն, որ քննես աղէկ եւ գիտենաս որ չիլնի 'ի հետն այլ ցեղ ջերմն 'ի բորբոսային ջերմերոյն: Ապա թէ ուժն կարող լինի, ժամանակն եւ ժամն 'ի պատեհ լինի, իւր առաջին ստածումն այն է՝ որ 'ի բասիլիկէն երակ առնուս 'ի յայն դեհն, ուր զցանն իմանայ հիւանդն: Ապա թէ չիմանայ ցաւ ուրեք, զերակն 'ի ձախոյ ձեռն առ, վասն այնոր՝ որ աջոյ դեհ չվատուժի: Ապա թէ տարիքն եւ ժամանակն հիւանդին եւ ժամն տարւոյն չօգնեն երակ առնելոյն, դու ապիկիս առ 'ի թիկնամէջքն 'ի վերի դեհն. եւ հան արիւն ըստ ուժոյն, եթէ երակ առնուս, եւ եթէ ապիկիք:

Ապա թե ստամոքսն վատուժ լինի, կամ սիրտն խափական լինի, որ է սրտին դողալն եւ թափթափիլն եւ տրոփելն, ապա զապիկիքն 'ի յոլոքին 'ի դրուցի դեհն դիր, եւ յառաջ շատ քաշել տուր, եւ ապա տուր կտրել եւ արիւն հանել: Ապա յետ երակ ամնելոյն օր մի կամ երկու օր հարիրայ տուր այս նշանօքս:

Յարիրայ գարւոյ, որ օգտէ սլին:

Ա՛ն գարի կորկոտ փերճոկած, եւ չոր բակլայ փերճոկած, եւ սակաւ մի քիթրէ, եւ սերկելիի հատիճ կտուած, եւ նշի ձեթ կամ քաղցր դդմի ձեթ, եւ խեցգետին՝ որ է խեչիփար, այն նշանօքն՝ զոր այլ յառաջդ ասացաք. զայս զամէս հաւաքէ, եւ հարիրայ արա, զերդ իւր ռասմն է, եւ տուր. օգտակար է թէ Աստուած կամի:

Ապա թե հիւանդն 'ի բերանն չորութիւն իմանայ, կամ 'ի կուրծքն խոշորութիւն եւ խռչոտել լինի, տո՛ւր զպզրկատունին զլուալն, կամ զթեփին ջուրն, կամ գառնալեզուի ջուր հում եւ ամանց եփելոյ՝ նուկի մի ընդ երկու դրամ դդմի ձեթ, կամ դրամ մի դարփուզի կտի ձեթ, կամ երկու դրամ մանուշակի ձեթ: Եւ իրիկունն տուր խմելոյ զայս դեղս: Ա՛ն պզրկատուն եւ տաճիկ կռեզ եւ հայ կաւ, եւ սերկելի լուղապով խառնեալ. այլ զհայ կաւն վասն այնոր տանք, որ զգիճութեներն՝ որ 'ի կուրծքն ժողոված՝ ցամաքեցնէ. եւ շատ օգուտ է:

Ապա թե հիւանդն՝ է որ 'ի կրծոցն արիւն թթանէ, տուր զայս կուրսս՝ որ այժմ գրեմք, որ օգտէ օգնականութեամբն Աստուծոյ՝ սլին, որ արիւն թթանէ:

Ղուրսի քահրուպայ, որ օգտէ սլին՝ որ արիւն թթանէ:

Ա՛ն հոռոմ մատնեհար կաւ երեք դրամ. քահրիպայ վեց դրամ. տապաշիր, եւ քիթրէ, եւ նշաստակ հինգ հինգ դրամ. տաճիկ կռեզ, եւ մրտենւոյ պտուղ, եւ մարուխի քամուքս եօթն եօթն դրամ. եւ փերփերանի հունդ տասն դրամ. զայս զամէս աղա եւ մշէ, եւ շաղվէ դալար վարդի ջրով. ապա թե չգտանես վարդ, գառնալեզուի ջրով, կամ պզրկատունի ջրով, եւ կուրսեր արա զամէս մէկ դրամ մի, եւ 'ի շքի չորացո. եւ տո՛ւր յամէն օր կուրս մի աղցած եւ մաղած քաղցր կօղայի ջրով: Եւ կերակուր փերփերան տուր եփած, եւ փերճոկած ոսքն դդմով, եւ մաշ փերճոկած եւ աղընծած, եւ իւր ըմպելիքն կտրտած դդում, եւ կօղայ ամանց կեղեկելոյ: Եւ զայս դեղս յար 'ի բերանն պահէ: Ա՛ն տաճիկ կռեզ եւ հայ կաւ եւ կերակուր դալար ձուկն տուր, զոր 'ի քարքռուտ տեղաց եւ 'ի խիստ գնայուն ջրէ որսան. այս ձուկն նոյնպէս եւ դկին տիրոջն օգտակար է:

Ապա թե կարիք է որ ուժվորցնես զմարմինն, եւ իւր ջերմն չլինի ուժով, ապա տուռայճ տուր, եւ հաւու ձագ, եւ կաքվու ձագ, եւ տահուճ, եւ ուլու ոտներ եւ արտալայնի՝ դդմով եփած եւ տանւոյ խուպազով, եւ վլիտօն եւ սպանախ եւ թախտ եփած մաշով, եւ գառին ոտներ եփած փերճոկած գարւով:

Ապա թե ժամանակն 'ի պատեհի լինի, իւր աղէկ ստածումն այն է՝ որ իշու կաթն տաս, զերդ որ այլ 'ի յառաջդ ասացաք վասն դկին, կամ տուր մաքւոյ կաթն ջրով եփած այս նշանօքս: Ա՛ն մաքեաց կաթն կէս լիտր՝ 'ի պահն որ կթեն. եւ արկ ջուր 'ի վերայ մի լիտր, եւ եփէ ցուր ջուրն հատնի եւ կաթն մնայ. ապա տուր որ խմէ կում կում: Յետ այս դեղիս՝ ա՛ն բակլայի ալուր երեք նուկի, եւ շէկ չամիչ 'ի հատճէն հանած եւ նշի ձիթով եփած՝ երկու նուկի, եւ սպիտակ գազպէն ջրով տրորած. զայս զամէս կաթումն 'ի բան պահէ: Եւ զայս հապս գիշերն եւ ցերեկն ներքեւ լեզուին պահէ, զի օգտակար է սլին:

Հասպի սուլալ, որ օգտէ սլին:

Ա՛ն փերփերանի հունդ հինգ դրամ. տաճիկ կռեզ եւ քիթրայ երեք երեք դրամ. կօղայի հունդ կտված չորս դրամ. գայս գամէսս աղա եւ մաղէ, եւ շաղվէ սերկեւիլի կտին լուսպովն, եւ մանր եւ տափակ հապեր արա. եւ յար ներքեւ լեզուին պահէ:

Ապա թէ խօսն 'ի կրծոցն դժար գայ, եւ դժար թքանէ, դու տուր զուփայի մտպուխն, եւ իւր նշանն այս է:

Մատպուխ զուփայի, որ օգտէ սլին:

Ա՛ն յունսպ քսան հատ, եւ սպոտան յիսուն հատ. սպիտակ թուզ եօթն հատ. փառիս աւուշան՝ որ է ձարխոտ՝ եօթն դրամ. մարուխի տակ կեղեւած տասն դրամ. զուփայ հինգ դրամ. գայս ամէն 'ի յաման մի արկ, եւ հինգ լիտր ջուր արկ 'ի վերայ, եւ եփէ ցուր մնայ երկու լիտր: Ապա առ իւրմէն չորս նուկի. եւ սնուցած մանուշակ տասն դրամ. եւ քաղցր նշի ձեթ երեք դրամ. գայս գամէսս յիրար խառնէ եւ տուր որ խմէ:

Այլ պարտ է գիտենալ գդկին տերն եւ զսլին՝ յանկարծ ժամ մի ուրդի՝ որ կապի փորն, հանց որ կարիք լինիս 'ի կակղցնել. ապա տուր գայս մատպուխս:

Մատպուխ լուծող՝ սլին ջերման:

Նշանք մտքուխի որ կակղցնէ գդկին եւ զսլին տիրոջն բնութիւնն: Ա՛ն խիարշամպէ 'ի կտեն ընտրած հինգ դրամ. եւ չոր մանուշակ վեց դրամ. եւ շէկ չամիչ 'ի հատճէն հանած տասն դրամ. եւ յունսպ տասն հատ. գայս գամէսս եփէ հինգ լիտր ջրով, մինչեւ մնայ կէս լիտր: Ապա քամէ եւ արկ 'ի ներքս տասն դրամ թառնկպին, եւ աճրռէ, եւ այլուվայր քամէ, եւ տուր որ խմէ զերդ այլ մտպուխի ռասմ է: Ապա թէ չկակղնայ այտով, գայս հուկնայս արա՝ այս նշանօքս:

Հուկնայ՝ ջերման սլին օգտակար:

Ա՛ն սպիտակ գարի փերճուկած եւ ձարճատ արարած, եւ չոր մանուշակ, եւ սպոտան, եւ յունսպ մի մի ափ. սպիտակ տուղտ 'ի կտաւի ծրարած հինգ դրամ. գայս գամէսս 'ի պտուկ մի արկ եւ եփէ այնչաք, մինչ որ մնայ մի լիտր. ապա քամէ եւ արկ 'ի ներք կարմիր շաքար տասն դրամ. եւ հուկնայ արա զերդ իւր ռասմն է. օգտէ Աստուծով:

Էհանայ բժշկապետն ասէ, եթէ այս ջերմն՝ որ հետ թոքին խոցնալոյն լինի, եւ իւր պատճառն 'ի սուր գիճութեներոյ լինի, որ 'ի ներքս 'ի թոքսն հաւաքին եւ կամ 'ի կուրծքն, եւ հազալովն եւ 'ի վեր բերելովն խոցընէ, 'ի շարաւ եւ 'ի յարին դարձուցանէ, եւ տկարացուցանէ գիւլանդն զերդ հալեմաշ ջերմն, վասն այդ պատճառանացդ յիշեցաք եւ շարեցաք ընդ հալեմաշ ջերմանն:

Եւ իւր նշանն այս է, որ երբ թոքքն խոցնայ, հիւանդին մարմինն նիհարանայ, եւ հանապազ կակուղ տաքութիւն լինի, եւ հազալով ընդ խոչանկն ելանէ այլ շարաւ եւ այլ արին, եւ փոփրային խօխ արունով, եւ շունչն կարճանայ, եւ կուրծքն ցաւի, եւ ժամ ժամ չոր հազայ: Եւ իւր չողջանալոյն պատճառն այն է, որ թոքքն տուն է շնչոյն, 'ի յառ եւ 'ի տուրն 'ի շարժելոյ չունի դադար, եւ ամենեւին չունի հանկիստ՝ որ դեղն դադար առնու եւ գործէ յինքն, եփէ եւ ողջացուցանէ. եւ վասն այդ պատճառանացդ ստածումն դժար ընդունի: Եւ մէկ այլ պատճառ այն է, որ թոքն պալղամին տուն է եւ դադար եւ տեղի, եւ հանապազ յինքն գիճութիւն հաւաքած լինի. եւ ամենայն խոց՝ որ ոչ չորանայ, չողջանայ,

Եւ զթոքսն ոչ ինչ դիմօք չորացնել չէ հնար: Եւ այլ որ դեղն 'ի յինքն չէ 'ի հասանել, զի ճանապարհն յերկար Է. ապա վասն այդ պատճառանացոյ այս հիւանդութիւնս դիժար ողջանայ:

Եւ երբ հետ թոքոյն խոցնալոյն ջերմ լինի, այլ դիժար Է խիստ. զի այս երկու հիւանդութիւնս հակառակ են միմեանց. զի ջերմանն ամենայն ինչ հով եւ գեճ պիտի, որ հանդարտի եւ պակասի. եւ խոցն՝ որ 'ի թոքսն լինի՝ ամենայն ինչ տաք եւ չոր պիտի, որ ցամաքեցուցանէ եւ ողջանայ. եւ վասն այդ պատճառանացոյ ստածումն եւ բժշկութիւն դիժար լինի. ապա պատեհ Է յառաջ զջերմն ստածել եւ բժշկել: Ապա թէ այս հիւանդութիւնս սկիզբն լինի, իւր ստածումն այն Է, որ 'ի բասիլիկէն երակ առնու 'ի յայն կողմն՝ ուր զցանն իմանայ. ապա թէ զկեփալին զերակն առնու, որ զգլուխն սրբէ՝ պատեհ Է. ապա թէ ուժն զօրաւոր լինի, այս մտպուխովս զբնութիւնն կակղոց:

Մատպուխ, որ օգտէ սլին:

Ա՛ռ խիարշանսպէ, եւ մանուշակ, եւ յունսպ, եւ չամիչ 'ի հատճէն հանած, եւ սպոտան, եւ թառնճպին. զայս զամէնս հաւաքէ, եւ ջրով եփէ. պարզէ, եւ սնուցած մանուշակով քաղցրացո. եւ յամէն օր սակաւ սակաւ խմել տուր: Ապա թէ 'ի կուրծքն չորութիւն լինի, զառնալեզուի ջուր տուր մանուշակի ձիթով եւ դոմի ձիթով. եւ 'ի քուն լինելոյ ժամն պզրկատուն, եւ տաճիկ կռեզ, եւ հայ հող՝ սերկեւլին հատճին լուղապովն խմել տուր. եւ զուփայի շարապն օգտէ:

Սպեղանիք կրծոց ցաւու:

Ապա թէ խոցն եւ ցանն 'ի կուրծքն լինի, այլ անահ եւ հեշտ Է քան զթոքին. եւ իւր ստածումն այն Է՝ որ սպեղանիք 'ի բանի պահես, որ զհիւանդութեան զգլուխքն հալելով արձակէ, զերդ գարեալուր եւ չոր թուզ, աղաւնւոյ ծիրտ եւ բօրակ՝ զոր նիտրօն ասեն. զայս զամէնս աղա եւ մաղէ, եւ ջրով եփէ, եւ 'ի վերայ կրծոցն դիր. օգտէ Աստուծով:

Փօլօս ասէ 'ի նոյն պատճառքոյ եւ 'ի նոյն նշանքոյ, եթէ թոքին խոցնալն հետ բրսամ հիւանդութեան լինի, որ Է շաւսայ, եւ կամ հետ շատ զուգամի եւ նուզլայի՝ որ 'ի գլխոյն 'ի վայր իջանէ, եւ կամ հետ երկարօրեայ հազի լինի, եւ կամ 'ի շատ վերաբերութեան արեան՝ որ ընդ խոջակն գայ, որ զթոքսն կամ զխոջակսն խոց առնէ: Եւ իւր նշանն այն Է՝ որ ջերմն 'ի յար լինի, եւ մարմինն նիհարանայ, եւ եղենկունքն ծռին վասն գիճութեանցն հալելոյն, եւ 'ի ժամ հազալոյն շարաւ հոտած բերե ընդ խոջակն, եւ 'ի յոտներն այտոց ընկնի, եւ կերակրին միտքն փակին, եւ ողջնութիւն դժար ընդունի. զի երբ թոքն խոցնայ, ամենեւին չողջանայ. զի հանապազ 'ի շնչոյն առնելն եւ 'ի տալն դադար չունի, զերդ զդարբնի փութն զհովն 'ի յինքն քաշէ, եւ 'ի սիրտն դրկէ, եւ զտաք օղն 'ի սրտէն առնէ՝ եւ 'ի դուրս արձակէ. ապա թէ ժամ մի դադար առնէ, որ չարժի, 'ի նոյն ժամն սիրտն այրի, եւ 'ի ձեռն այրելուն եւ տաքութեան՝ սրտին մարդն մեռանի:

Ապա 'ի յառաջ քան զայն որ այս տաքութիւնս զօրանայ, ստածել պիտի եւ բժշկել, տալ զերդ որ իշուն կաթն, եւ զխիչիփարն 'ի ճանկներոյն յիստկած, եւ 'ի յեղերդական ջուրն օր մի եւ զիշեր մի թոջած պահած. եւ յետ այնոր անուշ ջրով եւ զարուով եփէ, եւ կիսայեղկ խմելոյ տուր, օգտակար Է: Եւ երբ այս հիւանդութիւնս հաստատի եւ 'ի լման յերեւան գայ, եւ ամենեւին չիթողու զբնութիւնն՝ որ լուծանի, զի հիւանդն տկարանայ, եւ իւր բանն դիժար լինի:

Ապա թէ ջերմն ուժով լինի, ձուի դեղնուց եւ կովուց կաթն տուր եւ այծու կաթն՝ ընդ զարեջուր խառնեալ, եւ թաժայ ձուկն կերակրի խորովեալ, եւ ուլի ոտներ, եւ բակլայի

ջուր նշի կաթում, եւ հաւու ձագ փերճկած գարւով. այս ամէսս օգտակար է: Եւ ամէն օր երկու հեղ 'ի յաւազանն մտնէ. եւ երբ ելանէ, զանձն օծանէ դոմի ձիթով եւ մանուշակի ձիթով, որ գիճութիւնն եւ կակղութիւնն 'ի յանդամսն հասուցանէ. ապա թէ բնութիւնն կակղնայ, զայս դեղս տուր:

Ղուռս, որ օգտէ սլին ջերմանն:

Ա՛ռ տաճիկ կռեզ, եւ տապաշիր, եւ հայ կաւ, եւ սերկեւիլի կուտ մի մի դրամ. փարսի աւուշան՝ որ է ձարխոտ, եւ քիթրէ, եւ նշաստակ, եւ փրփրեմի հունդ կէս կէս դրամ. զայս զամէսս աղա եւ մաղէ, եւ պզրկատունի լուղապով կուրս արա, զմէն մէկ երկու դրամ. եւ 'ի շուքն չորացո, եւ տուր յամէն օր մին մին, ընդ խաշխաշի շարապ խառնեալ: Եւ երբ ջերմն զօրաւոր լինի, գարեջուր տուր, եւ երբ խաղաղի ջերմն՝ կաթն տուր:

Ապա թէ 'ի կաթէն տաքութիւն լինի, գարեջուր տուր՝ որ ջերմն հանդարտի, եւ այլուայր կաթն տուր. եւ նոյն նշանօք ժամ մի զկաթն եւ ժամ մի զգարեջուրն տուր. եւ զբնութիւնն 'ի լուծանելոյ պահէ: Եւ աղէկ քան զամենայն դեղ կաթն է նորա, եւ 'ի կաթներս՝ կնկան կաթն շատ օգուտ է, ապա իշոյ կաթն, ապա ըլտոյ կաթն: Ապա թէ զհացն կաթամբն ուտէ, այդ բաւական եւ օգտակար է, թէ Աստուած կամի:

Կատարեցաւ նախագիտութիւն եւ ստածումն վասն հալեւմաշ ջերմերոյն. նոյնպէս եւ զթոթոյն մաշելով ջերմն, զոր հոռոմն՝ փթիոս անուանէ, եւ տաճիկն սլ: Արդ սկիզբն աննեմք օգնականութեամբն Աստուծոյ եւ ասեմք զբորբոսային ջերմերն, եւ զհլրեանց պատճառնին, եւ զնշաննին, եւ զստածումն բժշկութեան ուրիշ ուրիշ, օգնութեամբն Աստուծոյ:

ԻԴ

Պատմութիւն նախագիտութեան վասն ամենայն ցեղ բորբոսային ջերմերոյն ուրիշ ուրիշ:

Սկիզբն աննեմք եւ ասեմք զսինայիսոս ջերմն՝ որ 'ի յար լինի, եւ հանապազ է իւր տաքութիւն, եւ առանց նոպայի. եւ իւր պատճառն այն է՝ որ արիւնն բորբոսի 'ի ներքսն 'ի յերակսն: Եւ ապա ասեմք զափիմեռիոս ջերմն յամենայն աւուր, զի նուպայ ունի յամէն օր եւ ժամ. եւ իւր պատճառն այն է՝ որ պալլամն բորբոսի դուրս 'ի յերակացն: Եւ զկնի այսոր ասեմք զտռիտեոսն՝ որ է օր ընդ մէջ ջերմն, զի օր ընդ մէջ ունի զժամն եւ զնոպայն. եւ իւր պատճառն այն է՝ որ խարտէշ մաղձն բորբոսի 'ի դուրս 'ի յերակացն: Եւ ապա ասեմք զտետռատեոսն՝ որ է երկու օր ընդ մէջ ջերմն. զի երկու օր ընդ մէջ ունի զժամն եւ զնոպայն եւ իւր պատճառն այն է՝ որ է սել մաղձ, որ է սաւտայն, եւ բորբոսի 'ի յերակացն 'ի դուրս:

Եւ այլ պարտ է գիտենալ, որ բորբոսային ջերմերն շատ ցեղեր են. կան որ պարզ, եւ կան որ յօդական: Պարզն մէն ասի իւր եութեամբն. եւ յօդականն խառն ասի ընդ այլ եութիւնքն. այլ պարզն՝ որ յերեւան են, չորս են ըստ չորից նիւթոցն: Այլ առաջին ցեղն սինէիսոս է, որ յարեանն 'ի բորբոսելոյ լինի. յար լինի իւր տաքութիւն եւ առանց նոպայի. այս ջերմն մուխատրայ է, եւ ահ ունի, զի յար է եւ չտայ հանգիստ մարմնոյն: Երկրորդ ցեղն ափիմեռիոսն է, որ 'ի պալլամին բորբոսելոյն ընծայի, եւ իւր նուպայն յամէն օր լինի. եւ այս ջերմն յերկար քաշէ. մուխատրայ է, եւ ահ ունի. եւ իւր յերկար քաշելուն պատճառն այն է, որ նիւթն հաստ եւ դորկուտ լինի. եւ վասն այդ պատճառանացո չեփի շուտ, եւ չարձակի շուտ. եւ իւր մուխատրային պատճառն այն է, որ չտայ հանկիստ

մարմնոյն, զի յամեն օր բռնէ իւր նոպայն: Եւ երրորդ ցեղն տրիտեօսն է, որ 'ի խարտէշ մաղծին բորբոսելոյն լինի, եւ իւր նոպայն օր ընդ մէջ լինի. ինքն հեշտ է եւ կարճ՝ երբ յիստակ լինի մաղծն եւ մէն. եւ իւր հեշտութեանն պատճառն այն է, որ նիւթն պարկեշտ լինի. եւ վասն այդ պարկեշտութեան հեշտ եփի եւ դիւրաւ արծակի: Եւ չորրորդ ցեղն տետռատեօսն է, որ 'ի սեւ մաղծին բորբոսելոյն լինի, եւ իւր նոպայն երկու օր ընդ մէջ լինին. եւ իւր վճարն 'ի բարի լինի, բայց յերկար քաշէ. եւ իւր բարւոյն պատճառն այն է, որ ընդ նոպային 'ի մէջ երկու օր հանկչի մարմինն. եւ յերկար քաշելոյն պատճառն այն է, որ նիւթն հաստ լինի, եւ վասն այդ պատճառանացոյ յուշ եփի եւ դիժար արծակի:

Եւ այլ գիտացիր՝ որ ամեն մէկ 'ի յայս չորիցս բաժանին եւ այլ ցեղ ջերմեր. զերդ որ արեանն ջերմն բաժանի 'ի յերեք ցեղ: Մէկն այն է՝ որ իւր տաքութիւն հանապազ միացեղ լինի յառաջմէ մինչեւ 'ի վճարն. եւ զայդ ջերմդ անուանեալ են հաւասար. զի այն՝ որ բորբոսած լինի յարենէն, եւ այն՝ որ չէ բորբոսած, հաւասար լինին եւ միաչաք: Եւ երկրորդ ցեղն այն է՝ որ յառաջն խիստ լինի տաքութիւն եւ դիժար, եւ որչափ երթայ՝ պակասի եւ թուլանայ. եւ զայդ ջերմդ անուանեալ են 'ի պակասն. եւ իւր պատճառն այն է՝ որ այն արիւնն, որ մնաց անբորբոս, շատ է քան զայն՝ որ բորբոսեցաւ: Իսկ երրորդ ցեղն այն է՝ որ յառաջմէ մինչեւ 'ի վերջն յաւելցնէ զտաքութիւնն, եւ 'ի վերջքն խիստ լինի եւ դիժար. եւ անուանեցին զայդ ջերմդ յաւելցնող: Եւ իւր պատճառն այն է՝ որ բորբոսած արիւնն շատ լինի քան զայն, որ չէ բորբոսած:

Ապա այն ջերմն՝ որ 'ի յայլ նիւթերոյն 'ի բորբոսելոյն լինի, բաժանին ընդ երկու ցեղ: Մէկն այն է՝ որ 'ի յար լինի տաքութիւն եւ առանց նոպայի. եւ մէկայլն այն է՝ որ նուպայ ունի եւ ժամանակ, զերդ որ յառաջդ ասացաք. եւ երբ այն նիւթն՝ որ 'ի ներքս 'ի յերակսն լինի, եւ բորբոսի, նա ընծայի իւրմէն այն ջերմն՝ որ 'ի յար լինի իւր տաքութիւն եւ առանց նոպայի: Ապա թէ այն նիւթն՝ որ ցորուց երակացն լինի՝ բորբոսի, նա ընծայի իւրմէն ջերմն՝ որ նուպայ ունի եւ ժամ:

Եւ վասն այդ պատճառանացոյ եղաւ, որ յարեան ջերմն 'ի յար եւ առանց նուպայի լինի. զի արիւնն ցնեքսէ երակացն լինի: Եւ երբ 'ի յարենէն մասն ինչ բորբոսի, նա իւր տաքութիւնն հաւասար 'ի յամենն հասանի. ապա մնայ այն ջերմն 'ի յար մինչեւ վճարի այնչաքսն՝ որ բորբոսած լինի, եւ կամ եփի, եւ կամ երկուքն հասանին՝ որ եփի եւ վճարի: Եւ 'ի յայլ նիւթերոյն ջերմերն լինի 'ի յար եւ առանց նուպայի. զի երբ նիւթն բորբոսի 'ի յերակսն, արգիլի անդր եւ չարծակի շուտ, ոչ եփելով եւ ոչ լուծմամբ եւ ոչ քրտնելով. զի երակաց մարմինն պիտո լինի. քաշել հետ օրաց որ եփէ բնութիւնն եւ արծակէ. կամ տեսանէ բժիշկն զեփելոյն նշանն, եւ օգնէ դեղերով. եւ վասն այդ պատճառանացոյ եղաւ՝ որ մնայ տաքութիւն 'ի յառաջին նոպայէն մինչեւ զայ երկրորդ նուպայն. եւ նոյնպէս յերկրորդ նուպայէն մինչեւ զայ երրորդ նուպայն, եւ մնայ ջերման տաքութիւն 'ի նուպայէ 'ի նուպայ, հանց որ թվի թէ 'ի յար տաքութիւն է: Ապա այն նիւթերն՝ որ 'ի դուրս 'ի յերակացն բորբոսին, առնեն զջերմն նուպայով. զի այն նիւթն՝ որ բորբոսի, չլինին 'ի մէկ տեղաց, այլ ժողովին 'ի մէկ տեղի, ուր բորբոսել կամին. եւ իւրեանց ժողովելոյն ժամանակն 'ի նոպայէն ընդ մէկայլ նոպայն 'ի մէջ լինի, ըստ նիւթերոյն որպիսութեն, զոր այլ 'ի յետոյ յիշել կամիմ:

Այլ կայ եւ ուրդի՝ որ բորբոսի արուն 'ի դուրս 'ի յերակացն 'ի յանդամին. եւ երբ իւր չաքսն շատ լինի, նա ուռչի այն անդամն, եւ խցկէ զերակսն, նա այն արիւնն՝ որ 'ի յինքն կայ՝ բորբոսի եւ տաքնայ, եւ տաքցնէ զանդամսն. եւ այն անդամն տաքցնէ զմէկայլն՝ որ 'ի յինքն 'ի կից լինի եւ 'ի յար. ապա տաքնան շնչաւոր երակսն, եւ տանին զայն տաքութիւն 'ի սիրտն. եւ 'ի սրտէն սփռնն եւ տանին ընդ ամենայն մարմինն, եւ մնայ իւր տաքութիւնն անշարժ եւ 'ի յար, մինչեւ եփի այն այտոցն եւ արծակի կամ բանալով եւ

կամ հալելով. եւ վասն այդ պատճառանազդ եղան ջերմերոյն տաքութիւն այլ 'ի յար եւ այլ նուպայով:

Վասն նոպայով ջերմերոյն թէ ինչ է պատճառն, որ այլ եւ այլ ցեղ առնեն զնոպայն: Եւ այս լինի վասն երեք պատճառանազդ. եւ մէկն 'ի շոյտ եւ 'ի յուշ ժողովելն լինի նիւթին՝ որ բորբոսել կամի. եւ երկրորդն 'ի հեշտ եւ դիժար բորբոսելոյն լինի նիւթն. եւ երրորդն շուտ եւ 'ի յուշ արձակելոյն լինի նիւթն, զերդ պալղամին ջերմն, որ յամեն օր առնու զնուպայն. եւ իւր պատճառն այն է՝ որ շուտ ժողովի 'ի տեղին, ուր բորբոսել կամի. զի շատ է իւր չաքսն 'ի մարմինն. եւ հեշտ բորբոսի, զի գիճային է. եւ յուշ արձակի, զի դորկուտ է: Իսկ սաւտային ջերմն երկու օր ընդ մէջ առնու զնոպայն. եւ իւր պատճառն այն է, որ յամէ 'ի ժողովելն, ուր բորբոսել կամի. զի իւր չաքսն սակաւ է 'ի մարմինն եւ դիժար բորբոսի, զի հով եւ չորային է. եւ յուշ արձակի, զի հաստ է եւ պինտ: Իսկ խարտէշ մաղծին ջերմն օր ընդ մէջ առնու զնոպայն. եւ իւր պատճառն այն է, որ ամենայն իրօք ընդ մէջն է ընդ պալղամն եւ ընդ սաւտայն. այդ պատճառովդ զոր ասացաք, զի սակաւ է քան զպալղամն, եւ շատ է քան զսաւտայն. եւ իւր խառնուածքն չոր քան զպալղամին, եւ գեճ է քան զսաւտային. եւ իւր եութիւն պարկեշտ է քան զնոցա եութիւն:

Եւ վասն այդ պատճառանազդ եղան ջերմերոյն նոպայնին այլ եւ այլ ցեղ: Չի պալղամին ջերմանն նոպայն շատն տասն եւ ութ պահ ունի, եւ իւր պատճառն պալղամին հաստութիւնն եւ դորկութիւնն լինի. վասն այդ պատճառանազդ յուշ արձակի: Իսկ սաւտային ջերման նոպայն շատն քսան եւ չորս պահ ունի, եւ իւր պատճառն նիւթին հաստութիւնն եւ չորութիւնն լինի. վասն այդ պատճառանազդ չբորբոսի շուտ՝ եւ երբ բորբոսի. չարձակի շուտ. զի բնութեամբն 'ի քարն եւ 'ի յերկաթն 'ի յար է: Կրակն 'ի քարն եւ 'ի յերկաթն չգործէ շուտ. ապա երբ գործէ, յուշ հովանայ: Իսկ խարտէշ մաղծին ջերման նոպային ժամանակն շատն տասն եւ երկու պահ ունի. եւ իւր պատճառն այն է՝ որ նիւթն պարկեշտ է եւ սակաւ դորկուտ. վասն այդ պատճառանազդ շուտ բորբոսի եւ շուտ արձակի քրտամբ:

Եւ այլ կուլինի՝ որ նոպային ժամանակն որ այլ յերկար քաշէ եւ այլ կարճ լինի քան զայդ սահմանդ, զոր ասացաք. եւ այդ 'ի յերեք պատճառանազ լինի: Մէկն 'ի նիւթին բնութենէն լինի. զի երբ նիւթն հաստ լինի եւ խիստ դորկուտ եւ բնութեամբն հով, նա նոպային ժամանակն այլ յերկար քաշէ: Ապա թէ նիւթն այլ պարկեշտ լինի եւ սակաւ, եւ իւր խառնուածքն տաք լինի եւ սակաւ դորկուտ, նա իւր նոպային ժամանակն կարճ լինի: Չի երբ հիւանդին ուժն զօրաւոր լինի, հանց որ վարել կարէ զնիւթն եւ հանել քրտամբ, նա նոպային ժամանակն այլ յերկար քաշէ: Եւ երրորդ պատճառն հիւանդին մարմնոյն շինուածքն լինի. եթէ մարմնոյն շինուածքն թոյլ լինի եւ նօսր, եւ գաղտ շնչահանքն արձակ լինի, նա նոպային ժամանակն այլ կարճ լինի. զի նիւթն շուտ արձակի եւ հեշտ ելանէ: Եւ երբ մարմնոյն շինուածքն սերտ լինի եւ պինտ, եւ գաղտ շնչահանքն նեղ եւ նուրբ, նա նոպային ժամանակն այլ յերկար քաշէ, զի նիւթն չարձակի շուտ:

Ապա թէ այն պատճառնին՝ զոր զնոպայն կարճ առնեն, 'ի մէկ տեղի ժողովին, նա նոպային ժամանակն բնիկ կարճ լինի. ապա թէ մէկայլ պատճառնին՝ որ զնոպայն յերկար քաշեն՝ 'ի մէկ տեղի ժողովին, նա նոպային ժամանակն խիստ յերկար քաշէ: Եւ երբ ջերման նոպային ժամանակն կարճ լինի, նա հիւանդին մարմինն սրբի 'ի տաքութենէն եւ հանկիստ առնու ցրուի մէկայլ նոպայն. ապա թէ ջերման նոպայն յերկար քաշէ, նա մէկայլ նոպայն հասանի եւ չթողու զմարմինն՝ որ յիստակի 'ի տաքութենէն եւ հանկչի. եւ նման լինի 'ի յար ջերմն, զի մէկ նոպայն մէկալին հասանի եւ

չտայ միջոց: Ապա պարտ է որ գիտենայ բժիշկն, եւ պահէ զայդ պատուիրանքդ եւ զկանոնքդ, զոր վասն ջերմերոյն նոպային ասացաք:

Եւ երբ նիւթին բորբոսիլն 'ի յայդ չաքս կենայ եւ 'ի յայդ 'ի կերպդ, զոր այլ 'ի յառաջդ ասացաք, եւ չխառնին 'ի յայլ նիւթերոյն 'ի յինքն, եւ ոչ հիւանդին թպտիրն խալատ լինի: Ապա թէ բորբոսած նիւթն փոխի 'ի յայլ կերպ կամ 'ի յայլ ցեղ իրք, զերդ որ արիւնն երբ այրի եւ բորբոսի, նա իւր պարկեշտն 'ի խարտէշ մաղձն փոխի, եւ իւր հաստն 'ի սեւ մաղձն՝ որ է սաւտայն: Ապա թէ այլ նիւթ խառնի 'ի յայն բորբոսած նիւթն, եւ կամ բորբոսի այլ նիւթ, նա ընծայի ջերմն՝ զերդ որ այն նիւթին բնութիւն լինի:

Ապա թէ հիւանդին թպտիրն մաշոււմ լինի, կերակուր չոր չէ պատեհ, նա ընծային այլ ցեղ նիւթ, եւ սկիզբն առնեն այլ եւ այլ ցեղ ջերմերոյ, զերդ որ այն նիւթերոյն բնութիւն լինի, եւ աւիրի առաջին նոպայնովն շարն եւ ժամանակն, զի այլ 'ի յառաջ գայ նոպայն կամ այլ 'ի յետու, կամ ընծայի այլ ցեղ նոպայ, որ չլինի 'ի յայն առաջին նոպայնոյն. եւ իւրեանց աւելի եւ պակաս գալն նոպային ըստ նիւթերոյն բնութեան լինի՝ որք ընծայեցան: Եւ այս էր բորբոսային ջերմերոյն պատմութիւնն՝ զոր յիշեցաք ուրիշ ուրիշ, եւ ասացաք եւ կատարեցաք զամենայն կարճառօտ օգնութեամբն Աստուծոյ:

ԻԵ

Պատմութիւն նախագիտութեան վասն արեան ջերմերոյն:

Իսկ առաջին սկիզբն 'ի սինէխօսն առնեմք, որ է արեան ջերմն, եւ 'ի յար լինի իւր տաքութիւն, աննոպայ: Իսկ վասն երեք պատճառանաց սկիզբն զսինէխօսն արարաք, որ է արեան ջերմն. մէկն՝ որ արիւնն յար է եւ մօտ եւ սիրելի հոգւոյն. եւ այլ՝ որ ինքն է թպտորոջ մարդկան առաջին ժամանակին: Եւ երկրորդ՝ որ շատ է արիւնն 'ի մարմինն մարդկան քան զայլ ցեղ նիւթերն. եւ այլ՝ որ այս ջերմն յոլով հանդիպի մարդկան մանաւանդ 'ի տաք ժամ եւ 'ի տաք երկիր: Եւ երրորդն՝ որ սաստիկ զօրաւոր է եւ սպանող քան զայլ ցեղ ջերմերն:

Եւ ապա հետ այսոր ասեմք զափիմեռօսն՝ որ է պալղամին ջերմն. զի պալղամն զկնի արեանն շատ է 'ի մարմինն քան զայլ նիւթերն. եւ այլ որ յոլով հանդիպի մարդկան այս ջերմն: Ապա հետ այսոր յիշենք զտռիտօսն, որ է խարտէշ մաղձին ջերմն. զի խարտէշ մաղձն այլ աւելի լինի 'ի մարմինն քան զսաւտայն, որ է սեւ մաղձն. եւ խարտէշ մաղձին ջերմն շատ հանդիպի մարդկան քան զսաւտային ջերմն: Եւ ապա հետ այսոր նշան տամք զտետռատօսն, որ է սաւտային ջերմն. զի սաւտայն սակաւ է 'ի մարմինն քան զայլ նիւթերն, եւ ինքն որպէս հիմն է այլ նիւթերոյն. ապա պարտ է մեզ շարել զնոսա կարգով, զերդ որ բնութիւնն շարեաց:

Արդ արժան է յառաջ գիտենալ զբորբոսիլն զչորս նիւթերոյն՝ որ 'ի մեզ են, զարեան եւ զպալղամին եւ զմաղձերոյն եւ խարտէշ եւ սեւն. եւ թէ զի՞նչ ցեղ լինին, եւ ի՞նչ պատճառանաց, եւ զի՞նչ ծնանի ամէն մէկ 'ի բորբոսիլն 'ի մարմինն: Արդ ամէն մէկ 'ի չորիցս յայսցանէ կամ 'ի ներքս 'ի յերակսն բորբոսի, եւ կամ 'ի դուրս 'ի յերակացն 'ի յանդամ մի 'ի յանդամոց մարմնոյն: Յորժամ արիւնն 'ի ներքս 'ի յերակն բորբոսի, նա պատահի յիւրմէն ջերմն, որ հանապազ է իւր տաքութիւն եւ առանց նոպայի: Եւ յորժամ պալղամն 'ի ներքս 'ի յերակսն բորբոսի, ընծայի իւրմէն ջերմն՝ որ ասի ափիմեռիւս, որ 'ի յար եւ հանապազ լինի իւր տաքութիւն եւ առանց նոպայի. բայց ժամ մի պնդէ եւ ժամ մի թուլանայ: Ապա թէ 'ի դուրս 'ի յերակացն բորբոսի պալղամն, նա պատահի ջերմն՝ որ ափիմեռիւս ասեն, որ յամէն օր նոպայ ունի տասն եւ ութ պահ: Եւ յորժամ խարտէշ

մաղձն՝ ՚ի ներքս ՚ի յերակս բորբոսի, ընծայի յիւրմէն ջերմն՝ որ տո՛ւտեօսն անուանեն. նոյնպէս եւ այն հանապազ լինի եւ առանց նոպայի: Եւ իւր նշանն այն է՝ որ օր մի պնդի իւր տաքութիւնն եւ օր մի կակղնայ: Ապա թէ դուրս ՚ի յերակացն բորբոսի խարտէջ մաղձն, նա առնէ գտրիտեօս ջերմն, որ օր ընդ մէջ նուպայ ունի երկոտասան պահ:

Եւ յորժամ սեւ մաղձն՝ որ է սաւտայն՝ ՚ի ներքս ՚ի յերակսն բորբոսի, նա առնէ գտետռատեօս ջերմն, որ եւ զայն իսկ յար ասեն. բայց երկու օրն խիստ լինի իւր տաքութիւնն նոպայով, եւ օր մի կակղուղ առանց նոպայի. բայց այս ջերմն յուշ հանդիպի մարդկան: Չի ասէ Գաղիանոս, եթէ չտեսայ ես որ բնական սաւտայն ցներքսէ երակացն բորբոսեցաւ եւ ՚ի յար ջերմ արար: Ապա թէ սաւտայն ՚ի դուրս ՚ի յերակացն բորբոսի, նա առնէ գտետռատեօս ջերմն, որ երկու օր ընդ մէջ ունի գնոպայն քսան եւ չորս պահ:

Եւ այլ գիտացիր՝ որ արիւնն ՚ի դուրս ՚ի յերակացն չբորբոսի, զատել ՚ի ներքս ՚ի յերակացն բորբոսի. ապա թէ իւր չաքսն շատ լինի ՚ի յերակսն, նա բնութիւնն վարէ զինքն ՚ի դուրս ընդ քիթսն, կամ ընդ նստոյ տեղին, կամ ընդ կանացիսն, եւ այլ որ նման են սոցա, եւ օգտակար լինի շատ. եւ կամ բժիշկն հնարէ եւ հանէ զաւելի արիւնն: Ապա թէ իւր եութիւնն աւիրի, նա հերծէ զերակսն, եւ ՚ի յանդամ մին վաթի, հու եւ շարաւ ընծայի իւրմէն:

Այլ բնական արեանն գնացքն ցներքսէ երակացն լինի՝ երբ չլինի բորբոսած. եւ ինքն կերակրէ զամենայն մարմինն եւ սնուցանէ: Ապա թէ բորբոսի եւ ներքս ՚ի յերակսն լինի, նա ընծայէ զսինեհիս ջերմն, որ է ՚ի յար տաքութիւնն եւ առանց նոպայի. ապա թէ ՚ի դուրս ՚ի յերակացն բորբոսի, ՚ի յանդամ մին ընծայէ ցաւ՝ ՚ի յայն անդամն եւ տաքութիւն, եւ առնէ զջերմն, եւ անուանեն զայն ջերմն այն անդամին անուամբն. զերդ որ թոքն որ այտջի ՚ի յարենէն, նա անուանեն թոքացաւութիւն. եւ այլ զերդ որ ջերմերն ամեն մէկ նիւթին անուամբն անուանի՝ յորմէ ընծայեցաւ, նոյնպէս եւ արիւնն յոր անդամ եւ արկնուի եւ տաքցնէ, նա այն անդամին անուամբն անուանի:

ԻԶ

Վասն ստածման եւ բժշկութեան սինեհիս ջերմանն որ ՚ի յարենէ լինի, եւ ինքն ընդ երեք ցեղ բաժանի:

Չայս ջերմն հոռոմն սինեհիս անուանէ, եւ տաճիկն մտքկ, որ թարգմանի սուր եւ ՚ի յար: Այլ յառաջդ ասացաք թէ սուր ջերմն՝ որ ՚ի յար լինի եւ առանց նոպայի, ՚ի յարենէ լինի, որ բորբոսի ՚ի ներքս ՚ի յերակն. եւ այլ ասացի՝ թէ երբ բորբոսի յայլ նիւթերոյն ՚ի ներքս ՚ի յերակսն, եւ իսառն լինին ընդ արիւնն, նոյնպէս ընծայի յիւրմէն ջերմն՝ որ ՚ի յար լինի եւ առանց նոպայի:

Ապա պարտ է մեզ բաժանել եւ ցուցանել, թէ ո՛րպէս ճանաչի սինեհիս ջերմն՝ որ յարենէն մէն լինի. եւ ո՛րպէս ճանաչի՝ որ յայլ նիւթերոյն լինի, երբ ՚ի ներքս ՚ի յերակսն բորբոսին: Եւ ասեմ՝ որ այն ջերմն որ յայլ նիւթերոյն բորբոսելոյն լինին, թեպէտ եւ ՚ի յար լինին եւ առանց նոպայի, բայց թուլանան եւ պնդին, շատանան եւ պակասին: Ապա այն ջերմն՝ որ յարենէն մէն լինի, չլինի այդ ամենդ զոր ասացաք ՚ի յայլ նիւթերոյն, այլ հաւասար լինի իւր պնդութիւն եւ դիժարութիւնն: Եւ այն նշաննին՝ որ երեւնայ մեզ ՚ի յերկրորդ օրն, որ հանդիպի յայլ ջերմերոյն նշան նոյն զոր ասացաք. ապա թէ չերեւնայ երկրորդ օրն, նա յերրորդ օրն երեւնայ: Ապա ՚ի չորրորդ օրն երեւնայ այնոցիկ՝ որք չեն բժիշկ, ոչ եթէ բժիշկն:

Եւ այլ պարտ է գիտել որ սինեիս ջերմն՝ որ յարենէ լինի, յերեք ցեղս բաժանի: Առաջին դէմն այն է, որ յառաջմէ յաւելնայ իւր տաքութիւնն քիչ քիչ օր ըստ օրէ: Իսկ երկրորդ դէմնն այն է՝ որ յառաջմէ շատ առնու եւ դիժար, եւ ապա օր քան զօր պակասի իւր տաքութիւնն քիչ քիչ: Ապա այն դէմնն, որ հաւասար եւ ՚ի յար լինի իւր տաքութիւնն, յառաջմէ մինչեւ ՚ի վերջքն նոյնպէս հաւասար մնայ, մինչեւ արձակի եւ թողու: Ապա այն դէմնն, որ օր քան զօր յաւելցնէ, յառաջմէ սակաւ լինի եւ հեշտ, եւ ապա յաւելնայ օր քան զօր իւր տաքութիւն, եւ դիժարնայ քիչ քիչ՝ մինչեւ կատարի, եւ ապա արձակի: Ապա այն դէմնն, որ պակասեցնէ օր քան զօր, յառաջմէ դիժար լինի եւ շատ իւր տաքութիւնն, ապա օր քան զօր պակասի քիչ քիչ, մինչեւ վճարի եւ արձակի:

Իսկ ես այդ իրացդ օրինակ բերեմ որ այլ հեշտ հասկանայք: Ի միտ առ աղէկ եւ տես. այն արիւնն որ բորբոսի՝ մասն մի լինի, եւ այն որ արձակին՝ մասն մին, նա չաւելնայ մասն ՚ի մասէն եւ ոչ պակասի. այդ օրինակովդ լինի յար եւ հաւասար սինեիս ջերմն, ոչ յաւելնայ եւ ոչ պակասի: Ապա երբ երկու մասն բորբոսի յարենէն, եւ մէկ մասն արձակի, նա բորբոսածն յաւելնայ մասն ՚ի մասին վերայ. եւ այդ օրինակովդ լինի յերկրորդ դէմն սինեիս ջերմն, որ օր քան զօր յաւելցնէ քիչ քիչ զիւր տաքութիւն: Ապա երբ մէկ մասն բորբոսի յարենէն, եւ երկու մասն արձակի, այդ օրինակովդ լինի երրորդ դէմն սինեիս ջերմն, որ օր քան զօր պակասի իւր տաքութիւնն քիչ քիչ:

Ապա գիտացիր որ այս ջերմն շատ այնոց հանդիպի, որ ՚ի չորս տարւոյն ՚ի վեր լինին՝ մինչեւ ՚ի քսան տարին, մանաւանդ ՚ի գարնան աւուրքն. եւ այնոց՝ որ արիւնն շատ լինի ՚ի մարմինն, եւ այնոց՝ որ կերակուր զայն ուտեն, որ արիւնն ընծայէ, զերդ գառին միսն, եւ կաթներն, եւ ձուի դեղնուցն, կարմիր եւ քաղցր գինին: Իսկ նշաննին՝ որ հետ այդ ջերմանդ երեւնայ՝ այս են, որ բերանոյն առաստաղքն ուռչին, եւ խնծորքն. գլուխն ցաւի եւ ծանրանայ, եւ երեսն կարմրի, մանաւանդ այտերն. աչացն երակսն եւ քներոյն ուռչին, եւ լինի որ կարմիր շտեր երեւենան, կամ դեպ ՚ի կանանչն:

Այլ որ գիտենաս որ յառաջ քան զամենայն ստածումն զհիւանդին ուժն եւ զտարիքն եւ զկերպն եւ զերկիրն եւ ժամ, տես թէ օգնէ տարիքն, եւ այն զոր ասացաք, դու երակ առ սկիզբն այս ջերմանս, յառաջ քան որ յաւելնայ հիւանդութիւն. ապա թէ չօգնէ ուժն եւ տարիքն եւ այլն, դու ապիկիք արկ, եւ արիւն հան. զի սկիզբն այս ջերմանս արիւն հանելն շատ օգտակար է: Այլ ՚ի յաւելնալն եւ ՚ի կատարելն հիւանդութեանն, որ է երրորդ ժամանակն, պատրաստ՝ որ չառնուս երակ, զի չէ ժամանակ եւ ոչ պատեհ, այլ սկիզբն հիւանդութեանն առ զերակն: Չի մեծ իմաստասերն Գաղիանոս պատրաստեցոյց շատ, եւ ես տեսայ ՚ի յիմ ժամանակս, որ ՚ի կատարել ժամն հիւանդութեան երակն առին, եւ մեռան շատք. եւ այլ տեսայ՝ որ ապիկիք արկ, նա հիւանդն վատուժ էր, մեռաւ: Չէ պատեհ՝ յորժամ հիւանդն վատուժ լինի, արիւն հանել, թէպէտ եւ տարիքն եւ ժամն օգն լինին: Բայց երբ ուժն օգնական լինի, եւ ժամն չլինի, կարողք ենք ճար այրնելն եւ երակ առնուլն. եւ այն որ տարիքն չօգնեն, կարող ենք ճար այրնել ապիկիք արկանելով ՚ի սկիզբն հիւանդութեան, որ զերձանի հիւանդն:

Մատպուխ լուծող հով:

Ապա թէ չկարենք երակ առնուլ, եւ ոչ ապիկիք արկանել, զբնութիւնն լուծանենք սակաւ սակաւ խիարշանայեով, եւ թառանկային, եւ յունապ, եւ դամոյնչիր, նռան ջուր, եւ ճուլապով: Ապա թէ չկայ ճար լուծումն առնելոյ, տո՛ւր մուգ նռան ջուր եւ սրքնճպին՝ որ շաքարով լինի, եւ կերակուր փերճոկած ոսքն տուր եւ մաշ, եւ արկ ՚ի ներքս դամոյն եւ յունապ եւ չամիչ եւ նշի ձեթ, կամ խակ ձիթապտղի ձեթ անաղ. զի այս ձեթս հով է եւ փոթոթ:

Ապա թե արիւնն մաղձխառն լինի եւ սուր, յաւելցո՛ւ ՚ի յայն մտպուիւն թմրինդի եւ դամոյնաչիր. զի մուգ իրքն անցնէ զմաղձին սրութիւն: Ապա թե արիւնն հաստ լինի, եւ չունի սրութիւն, լաբլաբի ջուր, որ է պատատկի ջուր՝ որ է բաղեղի, ՚ի հետ խիարշամպէի եւ թառանկպինի:

Յուկնայ լուծող, որ զտաքութիւնն հանէ:

Ապա թե կարիք լինի որ այլ աւելի լուծանես զբնութիւն, հուկնայ արա այս նշանօքս: Ա՛ն չոր մանիշակ եւ տատաշ եւ բաբինիճ եւ տուղտ եւ կարմիր շաքար եւ մանիշակի ձեթ. զայս ամէնս եփէ, եւ ՚ի բան տար գերդ իւր ռասմն է:

Շաֆ լուծող:

Եւ այս շաֆս օգտակար է, որ է պատրոյկն: Ա՛ն փենիտ շաքար, եւ աղ, եւ հղուդ, եւ պախրու լեղի. զայս զամէնս պատրոյկ շաֆ արա, եւ ՚ի բան տար:

Գլխացաւ, որ ՚ի տաքութենէ լինի:

Ապա թե գլխացաւութիւն դիպի, ա՛րկ ՚ի վերայ գլխոյն վարդի ձեթ, եւ եղնրդի ձեթ, եւ խլեփն, այն մանտր ուռենիքն են՝ որ անուշահոտ գայ իւրմէն, եւ վարդի ջուր, եւ ազոխի ջուր հում, եւ կամ վարդի ձեթ արկ քացախով:

Գլխացաւի:

Ապա թե այդիւ չխաղաղի գլխացաւութիւն եւ յերկար քաշէ, եւ կամիս որ խաղեղցնես, զատ ՚ի յայնորէ որ զնիւթն ՚ի զատ վարես, ապա դիր ՚ի վերայ գլխոյն փերփերանի ջուր եւ դդմի ջուր եւ բրսի անդարուի ջուր, ինքդ հովուի բիր կոչի, որ է պտպտ, եւ խլեփի, ձեթ կամ լիլուփարի ձեթ, կամ դդմի ձեթ. զայս զամէնս յիրար խառնէ, եւ ՚ի վերայ գլխոյն դիր:

Գլխացաւի:

Ապա թե հիւանդն հազ չունի, եւ ոչ նուզլայ, արկ ՚ի վերայ գլխոյն զայն ջուրն, որ եփած լինի յինքն չոր մանիշակ, եւ չոր վարդ, եւ բաբունիճի ծաղիկ, եւ փերճոկած գարի:

Գլխացաւի:

Ապա թե հիւանդն վատուժ լինի, եւ ցան այդով չխաղղի, աղջկան մօր կաթն կթել տուր ՚ի վերայ գլխոյն: Ապա թե հիւանդն ուժով լինի, իշոյ կաթն տուր կթել, կամ այծու կաթն: Ապա թե թեթեւութիւն եւ չորութիւն իմանայ ՚ի գլուիւն, ողումարայ կաթեցո ՚ի քիթսն մանիշակի ձիթով եւ լիլուփարի ձիթով. եւ արկ ՚ի վերայ գլխոյն զկաթներն, եւ զայլ դեղերն՝ որ այլ յառաջդ ասացաք:

Գլխացաւի:

Ապա թե ՚ի գլուիւն գեճ շոգի լինի եւ ծանրութիւն, զերեսն ՚ի վերայ այս շոգւոյս կալ: Ա՛ն չոր մանիշակ եւ բաբունիճ սակաւ մի աւելի բան զմանիշակն. զայսոնք եփէ ջրով, եւ զերեսն ՚ի վերայ շոգւոյն կալ, որ բանայ զգաղտ շնչահանքն, որ բուխարն ՚ի դուրս վաթի: Ապա թե ՚ի գլուիւն ծանրութիւն լինի, հանց որ փաղաղս երթայ, ապա

պատրաստ կալ 'ի ձիթերոյն որ չմօտի 'ի գլուխն, զի խցկեն զգաղտ շնչահանքն, եւ արգիլեն զշոգիսն 'ի վայր վաթելոյ եւ ելանելոյ. ապա ծեփէ զոտսն եւ զձեռնսն այս ջրովս:

Գլուխն թէ ծանրութիւն լինի, կամ փաղաղս:

Ա՛ն բաբունիճ եւ մանիշակ, զայսոնք եփէ ջրով, եւ ծեփէ՝ որ զնիւթերն 'ի վայր քաշէ: Եւ այլ պատեհ է՝ որ 'ի ձեռնսն եւ յոտներն կապք առնես պինտ, հանց որ ցաւ տայ, եւ հետէն թուլացո եւ պնդէ:

Գլխացաւի:

Ապա թէ գլխացաւութիւն խիստ լինի, զերկու զեկաւորսն՝ որ է ծղին՝ կապէ: Ապա թէ նեղիոգութիւն ունի, կոդային ջուր տուր, եւ մուգ նռան ջուր, կամ պզրկատունի լուղապ, եւ խաւրժիլ քամուքս տուր հետ նռան ջրի:

Քիթն որ արիւն վազէ:

Ապա թէ ուրդի որ հիւանդին քիթն կաթնի քան զչաքսն յաւելի, ա՛ն խակ ամբրաւի ջուր, եւ քօզմորվի քամուքսն, եւ սակաւ մի քաֆուր. զայս ամէնս յիրար խառնէ, 'ի քիթն արկ. եւ 'ի վերայ գլխոյն դիր խլեփի ջուր, եւ մրտի տերեւի ջուր, եւ այգւոյ մատին տերեւի ջուր, եւ վարդի ջուր, եւ սանդալ, եւ քաֆուր. զայս ամէնս յիրար խառնէ, եւ 'ի վերայ ճակատին դիր եւ 'ի վերայ գլխոյն. եւ այլ դիր 'ի վերայ ճակատին սնուցած բուռ, եւ ոսբան ալուր ջրով շաղված: Եւ կերակուրն վաղն տուր՝ երբ օղն հով լինի. եւ պատրաստ կաց՝ որ 'ի տաք ժամն չիտաս կերակուր, զի վնաս է իւրն:

Ապա թէ հիւանդն զայդ երկրորդ չիկարէ ուտել, զոր այլ յառաջդ յիշեցաք, զերդ ոսբն եւ զմաշն եւ զդդումն, ապա գարեփոխիստ տուր այս նշանօքս: Ա՛ն գարւոյ փոխիստ, թրջէ տաք ջրով, ապա լուա՛ հով ջրով, եւ տո՛ւր որ խմէ տապարզի շաքարով. նոյն նշանովդ տուր զհացի փշրուկն:

Ապա թէ շատ 'ի փաղաղս կենայ, եւ տեսանես որ շատ տապի, եւ 'ի դեհ 'ի դեհ շրջի, եւ փորն ուռչի, որ երբ 'ի վերայ զարկնես, նա դաբդաբայի ձայն տայ, ապա գիտացիր որ մեռանել կամի ստոյգ. մանաւանդ երբ 'ի մարմինն սեւ վարդ ելանէ աղտորի հատի չաքք եւ սեւ լինի, պարտ է փախչել եւ 'ի զատ կենալ:

Սինայի որդին ասէ 'ի նոյն պատճառդ, եթէ արեանն բորբոսելոյն պատճառն՝ արեանն լիութիւնն լինի, կամ յերակացն 'ի խցկելոյն, կամ 'ի շատ 'ի շուրջ գալոյն եւ շարժելոյ զմարմինն, մանաւանդ այնոց՝ որ մարմնոյն հանկիստ ունին սովորութիւն, եւ զկնի հանկստին դատեն 'ի շուրջ գալով եւ կեղեն զմարմինն, եւ կամ արեանն ամբով տաքութիւնն լինի՝ որ է 'ի ներքս 'ի յերակն, բորբոսի եւ աւերի. եւ պատճառն այն լինի, որ 'ի պատեհի ժամն արիւն չթողու, 'ի յամելն եւ 'ի բազմանալն վառչի եւ բորբոսի: Իւր նշանն այն է, որ իւր ջերմն հանապազ եւ յերակսն լինի. եւ երեսացն գոյնն կարմիր. եւ 'ի յերեսն լիութիւն լինի. եւ 'ի յերակն մեծ եւ լիութիւն լինի. շունչն կարծ եւ շոյտ լինի. եւ մարմինն ծանր լինի. 'ի յաչքն կարմրութիւն անկանի. եւ գոզն կարմիր եւ հոտած լինի:

Եւ իւր ստածումն այս է. յառաջ քան որ տկարանայ հիւանդն, երակ առ եւ շատ արիւն հան: Ապա թէ տկար է հիւանդն, ապիկիս արկ. ապա թէ արուն հանելն նուաղի, զհացն 'ի ազոխի ջուրն թաց, եւ 'ի թթու նռան ջուրն, եւ տուր. եւ ընդ երեք հաղ սակաւ սակաւ արիւն թող. յունապի շարապ տուր. եւ կերակուրք պարկեշտք տուր: Ապա թէ բնութիւնն կապ լինի, մրգաջրով կակոցո. ապա թէ թթու եւ քաղցր նռան ջուր տապաշիրով խմէ,

շատ օգտե: Ապա թէ առանց պատճառանաց ընդ քիթն արիւն երթայ, չէ պատեհ արգիլել: Ոսրն քացախով կերակրելն օգուտ է. ապա թէ զարոյնն տեսանես՝ որ յաղթեալ է, չէ պատեհ որ յունապի ջուր եւ ոսրն ուտե, այլ ոսրան ջուր եւ հազար հովցուցած, եւ հով ջուր օգտակար է:

Մասրճուայն ասէ, թէ իւր ստածումն այն է, որ զարեջուր խմէ, եւ քաղցր եւ թթու նռան ջուր, եւ հանապազ զբնութիւնն կակղցր եւ կակուղ պահէ: Ապա թէ հիւանդն երակ չկարէ առնուլ, զխիստ հով դեղերն տալ չէ պատեհ. զի լինի որ խցկումն 'ի մարմինն յերեւան գայ, նա բորբոսն եւ տաքութիւն յաւելնայ, տապաշիրին կուրսն օգտակար է, այս նշանօքս:

Ղուռն տապաշիրի:

Ա՛ռ տապաշիր երեք դրամ. եւ փերփերանի հունդ տասն դրամ. եւ դդմի հունդ վեց դրամ. եւ յերկան խիարի հունդ չորս դրամ. տաճիկ կռեզ երեք դրամ. նշաստակ երեք դրամ. մարուխի քամուքս եօթն դրամ. զայս ամէնս աղա՛ եւ մաղէ, եւ շաղէ, կուրսեր արա, եւ 'ի շուքն չորացո, եւ 'ի կարեց ժամն՝ երեք դրամ 'ի բանի պահէ:

Եւ կերակուր նռան մուզաւարայ, եւ աղտորի ապուր: Ապա թէ բնութիւնն կապ լինի, դամոյնի մուզաւարայ տուր, օգտակար է թէ Աստուած կամի:

Փօլօս ասէ 'ի նոյն պատճառդ, եթէ երակ առնուլն եւ արիւն հանելն մեծ եւ օգտակար դեղ է այդ հիւանդութեանդ. ապա թէ չընկերէ ուժն եւ ժամն, ցուրտ տուր ջուր խմելոյ, մինչեւ 'ի դող անկանի, եւ գոյնն փոխի, եւ ջերմն հովանայ եւ դադարի: Ապա թէ ջերմն այլուայր դառնայ, զնոյն ստածումնդ 'ի բան պահէ, որ ջերմն կակղնայ եւ հանկչի: Եւ այս խորհուրդդ մին է բարի եւ փորձած. եւ չէ պարտ որ 'ի հով ջրոյն տալն վախէ: Ապա թէ այս ջերմն, որ սինեհիս անուանի, 'ի ստամոքացն 'ի յայտոցէ լինի, կամ 'ի լերդին այտոցէ, պարտ է պատրաստել 'ի շատ հով ջրէ. ամենովտ զհով ջուրն արգիլէ 'ի խիստ ջերմանն 'ի տիրոջէն. կորուստ գործէ հիւանդին:

Սահակ ասէ 'ի նոյն պատճառդ, եթէ այս ջերմանս ստածումն այն է, որ երակ առնու եւ արիւն հանէ մինչեւ թալնայ: Եւ այս օգտակար եւ մեծ ստածումն է ամենայն ջերման՝ որ 'ի յարեւն լինի. մանաւանդ՝ թէ հիւանդին զօրութիւն ուժով լինի: Եւ իւր առաջին օգտութիւն այն է, որ զմարմնոյն խառնուածքն դարձուցանէ 'ի միջավայր սահմանն, որ է մուկթատիլ, եւ զարեանն զտաքութիւնն մանտրէ, եւ զմարմինն հովցնէ: Ապա թէ արիւն չկարէ հանել, զայն զիրութիւնն՝ որ զարեանն զտաքութիւնն նստեցնեն՝ 'ի բանի պահէ: Ապա թէ բնութիւնն կապ լինի, մրգաջրով կակղցնէ եւ կամ կակուղ հուկնայով, զարեջուր եւ սրբնճուպին, քաղցր եւ թթու նռան ջուր 'ի բանի պահէ. եւ զոր ինչ կերակրի՝ վաղն ընդ հով ժամն կերակրէ. եւ զհով ձիթերն ընդ գլուխն օժանէ, զոր այլ 'ի յառաջդ յիշած կան. օգտակար է թէ Աստուած կամի:

Ի՛նչ

Վասն ստածման եւ բժշկութեան այն ջերմանն՝ որ յետ այտոցին լինի, զոր մաշարի կոչեն, եւ հոռոմ ռուստուպել ասէ:

Ապա թէ այս ջերմն հետ այտոցին լինի, որ մաշարայ կոչի, եւ հոռոմ ռուստուպել ասէ, թէ կարես եւ ճարակ լինի, յառաջ արիւն հան ըստ ուժոյն, եւ ստածէ այս ըմպելւոյս: Ա՛ռ խիարշանպէի մէջ, եւ թառանկպին, եւ տո՛ւր շնխաղողի ջրով. եւ տո՛ւր զարեջուր յունապով եւ մուզ նռան ջրով:

Տլէ վասն տաք ուռեցի, որ հովացնէ եւ կակղացնէ:

Եւ զայս տլէս 'ի վերայ այտոցին դիր: Ա՛ն սանտալ եւ փուփլէ եւ հայ կաւ եւ դլմոնայ կաւ. զայս ամէնս աղա եւ մաղէ, եւ դալար գնձի ջրով կամ գառնալեզուի ջրով շաղէ, եւ տլէ արա սկիզբն 'ի յայտոցին:

Տլէ տաք ուռեցնու:

Ապա 'ի վերջքն 'ի յայտոցին զայս դեղս արա: Ա՛ն սապոն եւ զաւիրան, աղա եւ մաղէ, եւ շաղէ կաղմբի տերեւի ջրով, եւ տլէ արա, օգտակար է Աստուծով:

Փօլօս ասէ վասն ստածման եւ բժշկութեան այս ջերմանն որ հետ այտոցին լինի, որ խումրայ կոչի: Իսկ իւր պատճառն 'ի տաք արեւն լինի, եւ 'ի սուր մաղձէ, որ ընդ իւր խառնուածքն խառնեալ լինի. եւ երբ յաղթէ մարմնոյն, նա բնութիւնն զնա դեպ 'ի դուրս 'ի կաշին արտաքս հանէ: Իւր նշանն այն է՝ որ այն տեղիքն, որ հիւանդութեան զլուխք լինի, այտոց առնու, եւ գոյնովն կարմիր լինի, եւ շօշափելիքն տաք լինի. եւ յետ այնոր խաղաւարտք 'ի յերեւան գան, զերդ կրակով այրեցած տեղի մինն:

Օծելիք տաք ուռեցի, որ հովցնէ:

Եւ իւր ստածումն այն է, որ երբ տեսանես զարոյնն՝ որ յաղթեալ է, երա՛կ առ, եւ կերակուրք հով եւ 'ի պատեհի ուտէ. եւ դեղ գարեջուր, եւ սրբնճախն, եւ փերփերանի հունդ, եւ ճուլապ խմէ. եւ հանապազ զայտուցին տեղիքն գառնալեզուի ջրով եւ շնխաղողի ջրով, եւ շափի մամիթայով օծանէ:

Ապա թէ մաղձն զօրաւոր լինի, իւր ստածումն այն է՝ որ զբնութիւնն լուծանէ եփած մրգաջրով. եւ գարեջուր խմէ. եւ հետ երկու պահու սրբնճախն առնու նռան ջրով. ապա թէ բնութիւնն կապ լինի, թմրինդի ջրով կակղացո:

Տլէ այտոցի, որ 'ի տաքէ լինի:

Եւ զայս տլէս 'ի վերայ այտոցին դիր, զի շատ օգտակար է: Ա՛ն հայ կաւ եւ գառնալեզուի ջրով եւ սանտալի ջրով եւ դալար գնձի ջրով տրորէ, եւ 'ի վերայ այտոցին 'ի բանի պահէ:

Տաք ուռեցի:

Սահակ ասէ՝ թէ իւր ստածումն այն է, որ զայտոցն աղէկ շառռտէ, որ աւեր արիւնն իւրմէն արտաքս գայ. ապա հետ այնոր ա՛ն գիթոր՝ որ 'ի քացախն թրջած լինի, եւ լեղ. զայս զամէնս յիրար խառնէ, եւ 'ի վրան տլէ արա:

Սպեղանի վասն տաք ուռեցի:

Եւ այս դեղս այլ օգտակար է եւ փորձած. առ դալար ընկուզ, եւ զծառին տերեւն եւ զկեղեւն, եւ չամիչ, եւ չոր թուզ՝ որ 'ի գիւնի թրջած լինի, եւ սել խաշխաշի ձեթ, 'ի յամէն մէկէ՝ մէկ մասն. զայս զամէնս յիրար խառնէ, եւ 'ի ցաւին տեղին սպեղանի դիր:

Սպեղանի հով վասն տաք այտոցի:

Դեղ մին այլ օգտակար է. ա՛ն ավի՞ոն եւ կակիկայ, որ է աղի ծաղիկ, եւ իսրոյ առջասքն, եւ նռան կեղեւ, ՚ի յամեն մեկէ երկու դրամ. պղնձի փերճոկ, եւ բանկի հունդ, որ է աղվէշ բանկ, յամեն մեկէ մի դրամ. զայս ամենս աղա՛ եւ մաղէ, եւ խաշխաշի ձիթով շաղվէ, եւ ՚ի վերայ տեղացն սպեղանի արա, օգտակար է թէ Աստուած կամի:

Վասն ստածման եւ բժշկութեան այն ջերմանն, որ հետ այտոցին լինի, զոր փլեղմօսի անուանեն:

Թեպի՞թ Կուռայն ասէ վասն ջերմանն՝ որ ՚ի հետ այն տաք այտոցին լինի, զոր փլեղմօսի անուանեն: Իւր պատճառն ՚ի յերկու իրաց լինի. կամ ՚ի զարկուց լինի՝ որ ՚ի տեղիք մի ՚ի յանդամն հասանի զարկս. եւ կամ ՚ի տաք եւ ՚ի շատ արեւնէ լինի, որ բնութեան զօրութիւն ՚ի յայն տեղիքն վարժեաց: Իւր նշանն այն է, որ տեղիքն խիստ ցաւի, եւ գոյնն կարմիր լինի. եւ երբ ձեռօքդ տեսանես, խիստ տաք լինի եւ խոցցած. վասն այդ պատճառանացդ բժշկապետքն փլեղմօսի անուն դրին, որ թարգմանի տաք զայրոյց եւ այտոց ՚ի յարեւնէ:

Սպեղանի հով՝ վասն տաք այտոցի:

Եւ իւր ստածումն այն է, որ ՚ի սկիզբն երակ առնու ՚ի յոջ դեհն. եւ ապա զբացող դեղերն մորհամ առնէ, եւ կամ հովային սպեղանիս ՚ի վերայ դնէ, զերդ գառնալեզու, եւ նռան կեղեւ, եւ աղտոր, եւ զարեալոյր. զայս ամենս քացախով եւ ջրով շաղւէ, եւ ՚ի վերայ սպեղանի դիր, որ այն տեղացն զօրութիւնն չտկարանայ:

Վասն այտոցի, որ ՚ի զարկուց լինի:

Սահակ ասէ՝ եթէ պատճառն այս այտոցիս, որ ՚ի զարկուց լինի, երակ կտրելն կարիք չունի. այլ մոմձիթով հանապազ օծանէ, եւ հանապազ եղկ ջրով ծեփէ. եւ ա՛ն զարեալուր, եւ հուլպայ, որ է հացհամեմի ունդ, եւ տուղտ. զայս զամենս աղա՛ եւ մաղէ, եւ շնխաղողի ջրով շաղւէ, եւ ՚ի վերայ դիր: Ապա թէ աներ արոյնն կայ հաւաքած ՚ի յինքն, զայն տեղիքն շառռտէ, եւ զաւեր արոյնն հան. եւ հետ այնոր մարհամով ստածէ. օգտակար է:

Տլէ հովացնող, վասն տաք այտոցի:

Էհաննայ ասէ, թէ իւր ստածումն այն է՝ որ երակ առնու ըստ հիւանդութեան, եւ ըստ հիւանդին զօրութեանն արիւն թողու. եւ հովային դեղերովն տլէ այնէ, զերդ հայ կաւ, եւ սպիտակ դեղ, եւ շափի մամիթայ, եւ եղրդական ջուր, եւ ավի՞ոն, եւ գառնալեզուի ջուր, եւ այլ զոր ինչ սոցա նման են. օգտակար է:

Ապա թէ հետ այս այտոցիս ջերմն լինի, իւր ստածումն այն է՝ որ կերակուր պակաս կերակրի, զարեջուր եւ սրբնճախն ՚ի բանի պահէ, եւ փերփերանի հունդ թմրինդի ջրով առնու. եւ երբ չորս օրն անցնի, սակաւ մի սամթի ջուր ճուլապ խառնեալ ՚ի բանի պահէ:

Տլէ հով եւ սպեղանի՝ տաք այտոցի:

Եւ այլ. ա՛ն աքիլ մելիք, եւ սամիթ, եւ փարս աւշան. զայս ամենս աղա՛ եւ մաղէ, եւ կտաւատի լուղապով շաղւէ, եւ ՚ի վերայ սպեղանի դիր. օգտակար է, թէ Աստուած կամի:

Իսկ մեր յիշելոյն զայս երեք ցեղ այտոցս՝ որ կոչի մաշարայ, եւ խումրայ, եւ փլեղմունի, վասն այնոր եղաւ, որ իւրեանց պատճառն եւ նիւթն արոյնն լինի. եւ վասն այոց պատճառանազոյ յիշեցաք եւ եղաք հետ արեանն ջերմերոյն, եւ ՚ի նոյն շարս զծաղիկն կամինք յիշել օգնութեամբն Աստուծոյ. զի եւ նորա պատճառն եւ նիւթն յարենէ լինի:

ԻԸ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն ջերմանն որ զկնի ծաղկին լինի:

Վասն ստածման եւ բժշկութեան այն ջերմանն՝ որ զկնի ծաղկին լինի: Իսկ այն ջերմն որ զկնի ծաղկին լինի, իւր նշանն այս է՝ որ երեսաց գոյնն կարմիր լինի եւ աչացն, եւ գլուխն ծանրանայ, եւ պինչսն ցնեղքս քորին եւ կծան, եւ փռնկտուք գայ, եւ ամենայն մարմինն լիանայ: Ապա երբ այս նշաննիս երեւան, գիտացիր որ ծաղիկ կամի հանել: Ապա զքո զառաջին ջանքն եւ զստածումն յաչքն արա, որ չելնէ ծաղիկ: Եւ դիր յաչքն զայս դեղս. ա՛ն աղտոր, եւ վարդի ջրով եւ քացախով թրջէ, եւ սակաւ մի մուգ նռան ջուր խառնէ. զայս զամենս պարզէ, եւ դեղադրով յաչքն դիր:

Ապա թէ յաչքն ծաղիկ ելանէ, կաթեցո ՚ի ներք զայս դեղս. ա՛ն Ասպահանի ծարիր քար, եւ ՚ի վերայ խոլոզմկի շփէ, եւ տրորէ այս ջրովս. ա՛ն չոր գնձահատ եւ ձարձատ արա, եւ տաք ջրով թրջէ եւ քամէ, եւ ՚ի ներք սակաւ մի քաֆուր խառնէ, եւ ՚ի վերայ խոլոզմկին կաթեցո, եւ շփէ զասպահանիկ ծարիրն՝ որ տրորի, եւ դեղադրով յաչքն կաթեցո:

Այլ գիտացիր որ այս հիւանդիս սկիզբն հիւանդութեան խափական դիպի, եւ սիրտն խառնակի, եւ հիւանդն տապի եւ շարժակլի: Ապա երբ զայդ տեսանես, ճար արա՝ որ զծաղիկն շուտ ՚ի դուրս քաշես եւ հանես՝ այս նշանօքս. ա՛ն ափ մի ոսք լվացած, եւ թուզ մի կտրած, եփէ ջրով եւ քամէ. եւ առ լուք աղցած եւ մաղած, եւ երեք դրամ ՚ի ներս խառնէ, եւ տո՛ւր որ խմէ. եւ կերակուր մաշ տուր, եւ ոսքն, եւ դո՛ւմ, եւ զքնութիւնն կակղացո:

Բայց ՚ի հիւանդութեան սկիզբն դամոյնով եւ յունապով եւ թառանկուպինով, եւ այլ պատրաստեցո՝ որ հետ եւթն աւուրն որ չլուծանես զքնութիւնն: Եւ այս հիւանդութիւնս ՚ի վճարն ինքնին լուծանէ զքնութիւնն. զի այն մնացորդն՝ որ ՚ի ծաղկէն ՚ի ներքս մնաց եւ չելաւ ՚ի դուրս, յետոյ լուծանէ զքնութիւնն. ապա տուր սերկելիլ եւ տանձ եւ մուգ նուռն: Ապա թէ ժամն ձմեռն ուրդի, եւ օդն ցուրտ լինի, առջեւն կրակ վառէ մոշի փատով եւ կաղնի փատ եւ այգւոյ մատն. եւ երբ տեսանես զծաղիկն՝ որ սակաւ սակաւ ՚ի ցամաքիլ, տլէ արա այս նշանօքս: Ա՛ն բրընձի ալուր, եւ կորեկի ալուր, եւ սակաւ մի զաֆրան. զայս զամենս շաղէ վարդի ձիթով, եւ տլէ արա:

Ապա թէ ՚ի բերան ծաղիկ ելանէ, կամ ՚ի ներս ՚ի պնչերն, ՚ի բերանն սերկելիլի կուտ տուր՝ որ առնու, կամ պզրկատունի լուղապ. եւ սրբէ զպնչերն ՚ի ներս վարդի ձիթով: Ապա թէ լուծումն պնդի, տո՛ւր զտապաշիրին կուրսն, զոր թրթկճի հնդով զուգեն: Եւ իւր նշանն այս է:

Ղուռս տապաշիրի թրթկճի հնդով:

Ա՛ն տապաշիր եւ մրտի պտուղ, եւ չոր վարդ, եւ մրտի պտուղ, եւ աղնձած տաճիկ կռեգ, եւ շահբալուք, յամեն մէկէ տասն դրամ. հայ կաւ, եւ նշաստակ սակաւ մի աղընձած, յամեն մէկէ երեք դրամ. թրթկճի հուրդ փորճոկած վեց դրամ. մատնեհար կաւ երկու

դրամ. զայս ամենս աղա՛ եւ մաղէ, եւ սերկելի ջրով շաղէ՝ կուրս արա, եւ ՚ի շքի չորացո, եւ ՚ի բան տար, օգտակար է:

Ապա թէ հուկնայի կարիք լինի, դու փոթոթային հուկնայ արա, զարդ այլ ՚ի յառաջո ասացաք: Եւ այլ պատրաստ՝ որ չտաս հաւու ձագ, եւ ոչ տուռած, մինչեւ չէ սրբել մարմինն աղէլ ՚ի ջերման տաքութենէն, ցամաքեալ եւ չորացեալ լինի ծաղիկն: Եւ ամենեւին չէ պատեի ՚ի ծաղկած մարմինն ձեթ հասցնել, ոչ ՚ի յառաջքն եւ ոչ ՚ի վերջքն, զի խծկէ զգաղտ շնչահանքն, եւ ընկղմէ զտաքութիւնն ՚ի ներս ՚ի մարմինն. զի ընծայի խավաղան, եւ կորնչի հիւանդն:

Պատմութիւն նախագիտութեան վասն ծաղկին ջերմանն:

Ապուճարեհն ասէ՝ թէ իւր պատճառն յաւելի տաք եւ ՚ի գեճ արեւնէ լինի, որ մարմնոյն յաղթ: Էհաննայ ասէ՝ թէ իւր պատճառն այն արեան յաւելուածոցն լինի, որ մանուկն ՚ի յարգանդի մօրն կերակրի. եւ այն արիւնն՝ կանացիսն է, որ ՚ի յամենայն մարմնոյն յիստակի եւ սրբի, եւ ապա կերակրէ զմանուկն ընդ պորտն: Եւ իւր նշանն այն է՝ որ ջերմանայ խիստ, առանց դողալոյ. երեք օր երեք գիշեր ՚ի յար լինի իւր տաքութիւն՝ առանց պակասելոյ. մեջքն եւ ողնաշարն ցաւի:

Եւ իւր ստածումն այս է, որ ՚ի սկզբանն երակ առնուն, եւ արիւն թողուն ըստ ուժոյն: Ապա թէ յառաջ քան զերակ առնուլն՝ ծաղկն յերեւան գայ, երակ չէ պատեի առնուլ, զի ահուկէ շատ: Ապա զկնի ծաղկին երեւելոյն, գարեջուր՝ զոր յունապով եւ փորճոկած ոսքնով եփած լինի, եւ սրքնճային, զոր ծեծած խիարի հնդով, եւ ըղրդական հնդով, եւ սամթի հնդով լինի եփած՝ ՚ի բանի պահէ:

Ապա թէ երակ չկարէ առնուլ, ՚ի գարեջրէն եւ ՚ի հով իրաց պատրաստ կենայ. եւ զայն զդեղերն տանի ՚ի բան, որ զծաղիկն ՚ի դուրս հանեն եւ եփեն, այս նշանօքս: Ա՛ն փերճոկած ոսքն տասն դրամակշիռ. եւ քիթրէ հինգ դրամակշիռ. եւ բաղիանի հուկնո, որ է ըռզիան, երեք դրամակշեռ. զայս զամենս լիտր ու կես ջրով եփէ, մինչեւ ՚ի յերիցն մէկն մնայ. քամէ՝ եւ սակաւ մի իւղ յինքն խառնէ եւ տուր, օգտակար է: Կամ ա՛ն բաղիանի ջուր, եւ շնխաղողի ջուր, եւ շաքար, եւ սակաւ մի կարոսի ջուր. զայս զամենս յիրար խառնէ եւ տուր, օգտակար է. եւ այլ ա՛ն դալար գնճի ջուր եւ ՚ի յինքն կաթեցո: Այլ. ա՛ն զթութիայն գերմակած, եւ դալար գնճի ջրով եռացո, եւ ՚ի յաչքն դիր. զի աչքն պահէ, եւ ՚ի յաչքն ծաղիկ չկարէ ելանել:

Մասուսայի որդին ասէ, թէ իւր ստածումն այն է՝ որ երակ առնու. ապա թէ երակ չկարէ առնուլ, ապիկիս արկանէ. եւ աչիցն պետ առնէ՝ որ ՚ի յինքն խաղաւարտ չելանէ: Ա՛ն վարդի ջուր եւ աղտորի ջուր եւ նռան ջուր, յիրար խառնէ, եւ ՚ի յաչքն կաթեցո:

Ապա թէ ՚ի յաչքն ծաղիկ ելանէ, Ասպահանի ծարիր, եւ դալար գնճաջրով տրորէ, եւ ՚ի յաչքն կաթեցո: Կամ ա՛ն չոր գինճ եւ նռան ջրով թրջէ, եւ զայն ջուրն ՚ի յաչքն կաթեցո: Եւ կերակուր մաշ եւ ոսքն փերճոկած տուր լուացած հոռոմ ձիթով. եւ ՚ի մրգանց՝ խնձոր եւ տանճ տուր: Ապա թէ ձմեռն լինի, զկրակն մոշի փատով եւ այգւոյ մատամ արա: Եւ երբ ծաղիկն ՚ի չորանալ բռնէ, զմանտր աղն ՚ի շուշմայի ձեթն խառնէ, եւ այնով օծանէ. եւ ՚ի քիթսն մանիշակի ձեթ կաթեցո. օգտակար է կամօքն Աստուծոյ:

Եւ վարդն՝ զոր հարսանիթէ ասեն, եւ աղաւնեաց տունն՝ քութշ, նոյնպէսն իւր պատճառն արոյնն լինի, զերդ որ ծաղիկն է: Բայց ծաղկին զլուխքն եւ նիւթքն հաստ լինի եւ զօրաւոր, եւ վարդին այլ պարկեշտ եւ նօսր եւ թեթել լինի. եւ իւր ստածումն յար

Եւ 'ի մօտ է 'ի ծաղիկն: Ծաղկին ստածունս ամենայն դիմօք օգտակար է, թէ Աստուած կամի:

ԻԹ

Պատմութիւն նախագիտութեան վասն պալղամին ջերմերոյն:

Ընծայի ջերմ 'ի պալղամէն, յորժամ բորբոսն օտար տաքութիւն ընծայեցնէ, զոր չէ բնութեամբ. եւ բորբոսիլն պալղամին կամ ցնեքսէ 'ի յերակսն լինի, եւ կամ 'ի դուրս յերակացն, զեղ ստամոքսն, եւ քովքն, եւ այլ դարտակ տեղեստան յերակացն, որ կան 'ի մարմինն: Բայց երբ պալղամն 'ի ներս 'ի յերակսն բորբոսի, չհանդիպի հիւանդին ցրտանալ եւ դողալ, զի ցնեքսէ երակացն արգիլած լինի, եւ չհասանի դուրս յանդամունսն 'ի մարմնոյն, որ ցրտացնէ եւ դողացնէ:

Եւ այլ պատեհ է որ գիտենաս, այս ջերմս՝ որ 'ի պալղամէն ընծայի, որ երեք պատճառանօք ճանաչի, զերդ որ այլ բորբոսային ջերմերն, որ երեք պատճառանօք ճանաչին: Մէկ պատճառն այն իրւին են՝ որ բնութեամբ լինին, որ հիւանդին խառնուածքն հոլ էւ գէճ լինին. զի պալղամն յաղթեալ լինի իւր խառնուածոցն. եւ տարօքն տղայ լինի, կամ ալեւոր: Տղայոցն շատ հանդիպի, զի շատ կերակրին եւ յաճախ. եւ ալեւորացն վասն այնոր հանդիպի, որ պալղամն շատ լինի 'ի մարմինն, եւ բնական տաքութիւնն սակաւ. եւ ժամն ձմեռն. օդին խառնուածքն եւ երկրին օդն հոլ լինի եւ գիճային: Եւ երկրորդ պատճառն այն իրւին լինի, որ չեն բնութեամբ. զերդ որ հիւանդն իւր ողջութեան շատակեր լինի եւ շատախում եւ որկրամոլ. եւ զմարմինն շատ 'ի հանկիստ պահէ, եւ 'ի բաղանիս մտելն՝ շատ հետ կերակրին լինի եւ 'ի կշտելեց: Եւ երրորդ պատճառն այն իրւին լինին, որ օտար եւ 'ի դուրս են 'ի բնութենէն. զերդ որ հիւանդին ցաւի ստամոքացն բերանն, եւ լեզուն քան զչաքն աւելի գէճ լինի, եւ կշտերն փոքր առնու, եւ երեսացն գոյնն փոխի:

Եւ այլ նշաննին եւ պատահմունքն երեւենան, եւ ծարաւն քիչ լինի. ձեռնն եւ ոտնն խիստ հովանան. եւ այդ հովութիւնդ ժամ մի մնայ, եւ 'ի նուպային ժամն երբ շօշափես զմարմինն՝ չերեւենայ տաքութիւն ընդ առաջքն, մինչեւ տաքնայ տեղին՝ զոր բռնել ունիս, եւ արծականայ գաղտ շնչահանքն, պարկեշտանայ եւ նօսրանայ պալղամին նիւթն, բարձրանայ եւ յերեւան գայ տաքութիւնն, եւ հետ այն տաքութեանն գիճութիւն լինի. եւ իւր պատճառն պալղամն լինի: Եւ հետ այն գիճութեանն սրութիւն լինի. եւ այն սրութեան պատճառն պալղամին բորբոսիլն լինի. եւ քիրտն չլինի. եւ որ լինի՝ պակաս լինի. եւ պատճառն պալղամն լինի, որ հաստ է: Եւ իւր նուպայն յերկար քաշէ, եւ մնայ տաքութիւն 'ի մարմինն ցրւի մինչեւ 'ի մէկայլ նուպային սկիզբն: Եւ մաճասին երակն փոքր լինի քան զերկու օր ընդ մէջ ջերմանն, եւ փոփոխական, եւ այլ 'ի յար լինի. իւր փոքրութեան պատճառն պալղամն լինի, որ իւր հովութեամբն տկարացոյց զուժն եւ հալեաց. եւ իւր շատութեամբն նեղէ գոյժն, եւ փոփոխէ զմաճասին զերակն. եւ 'ի յար լինելոյն պատճառն այն է, որ զմեծ մաճասին գործն կատարէ դեպ 'ի սիրտն:

Եւ իւր գոզն հաղ մի նուսր լինի եւ սպիտակ եւ դորկուտ, եւ հաղ մի թանձր լինի եւ պղտոր եւ կարմիր: Նօսրութեան պատճառն 'ի խցկելոյն լինի. եւ խցկելն՝ պալղամին հաստութիւնն եւ դորկութիւնն լինի. եւ սպիտակութեան պատճառն պալղամին խառնածքն լինի՝ որ հոլ է: Եւ թանձրութեան եւ պղտորութեան պատճառն այն է, որ բնութիւնն՝ զհաստ եւ դորկուտ պալղամն, որ զխցկումն արար, յուլանց տայ եւ հանէ ընդ գոզն. եւ կարմրութեան պատճառն այն պալղամն լինի՝ որ խցկեաց. յորժամ յամէ, բորբոսի եւ տաքնայ, եւ այն տաքութեամբն կարմրէ զգոզն: Ապա երբ այս նշաննոյս

շատն երեւեկայ կամ ամեն, նա յիստակ պալղամի ջերմ կոչի, որ նուպայն ամեն օր լինի, մանաւանդ 'ի յայն ժամն՝ որ այս ջերմն շատ հանդիպի մարդկան:

Այլ պատեհ է որ գիտենաս՝ որ երբ այս ջերմն 'ի յայն պալղամեն լինի, որ 'ի հալած ապիկի նման է, եւ բորբոսի, նա իւր նոպային սկիզբն փշանայ եւ սոսոռայ մարմինն: Ապա թէ 'ի թթու պալղամին բորբոսելոյն լինի, նա իւր նոպային սկիզբն հովանայ միայն եւ ցրտանայ: Ապա թէ 'ի քաղցր պալղամին բորբոսելոյն լինի, նա իւր նոպային սկիզբն ոչ ինչ լինի այդ ամենէտ զոր ասացաք: Եւ այլ պատեհ է որ գիտենաս զդողալն 'ի յամենայն ջերմերդ՝ թէ ո՞ր տեղաց սկսանի: Չի կանանցն սկսանի դողն յողնշարէն. եւ արանցն 'ի ձեռացն եւ 'ի ոտիցն առնէ սկիզբն. զի կանանց բնութիւնն հով է՝ եւ առաւել ողնշարքն, զի ոսկերքն եւ ջիղքն շատ են. նոյնպէս եւ արանցն 'ի ձեռսն եւ 'ի ոտսն միսն պակաս է, եւ ոսկր եւ ջիղն շատ:

Լ

Վասն ստածման եւ բժշկութեան ափիմեռինոս ջերմանն որ 'ի պալղամէ լինի, որ թարգմանի ամենայն աւուր ջերմն:

Այլ պատեհ է 'ի յայս ջերմանս սկիզբն զբնութիւնն կակղացուցանել: Եթէ ուժն ընկերէ՝ տուր կէս լիտր պատատկի ջուր. եւ սնուցած վարդ տասն դրամ. եւ սրբնճպին տասն դրամ, յիրար խառնէ եւ տուր, զերդ որ այլ դեղի ռասմն է: Ապա թէ 'ի կարիք հասնի, զարեջուր տուր, եփած կարօսի տակ, եւ ըռագիանի տակի կեղեւ՝ նուկի մի մեղրի սրբնճուպինով. ապա թէ զարեջուրն քացիի 'ի ստամոքսն, մի՛ տաս զգարեջուրն: Ապա թէ 'ի յայդ ջերմդ վերաբերութիւն հանդիպի, մի՛ արգիլես, մանաւանդ 'ի հիւանդութեան սկիզբն. զատել՝ թէ շատ լինի վերաբերութիւն՝ որ վատուժի հիւանդն: Ապա տուր Մայուբեհի շարապն, զոր զուգեն 'ի գինւոյ եւ 'ի սերկելի ջրէն. եւ այլ տուր նռան բադակ, որ աննուխով լինի զուգած. եւ յայս ջերմն մի՛ տաս դամոյնի ջուր եւ յունապի ջուր եւ ոչ թմրինոյ ջուր, զի զէն է շատ:

Գլխացաւի որ 'ի պալղամէ:

Ապա թէ գլխացաւութիւն հանդիպի, զգլուխն 'ի վերայ տաք ջրի շոգւոյ կալ. եւ արկ 'ի վերայ գլխոյն տաք ջուր, յոր եփած լինի մարգանկօշ եւ քլիլ մալք եւ նամամ՝ որ է սիսամբար. եւ 'ի քիթքն ձեթ մի՛ տաս արկանել, եւ ոչ 'ի վերայ գլխոյն կաթն տալ կթել. զատել՝ թէ խարտէ մաղձն խառնած լինի ընդ պալղամն: Եւ զվերակուրն հացի փշրուկ տուր, եւ ճակնդդի բազուկ, եւ սիսռան ջուր. զամենդ քաղցր նշի ձիթով. եւ 'ի յօրն հաղ մի տուր, եւ զայն թեթել:

Ապա թէ նեղէ զինք ջերման ցուրտն եւ հովանալն, տաք ջուր խմելոյ տուր, յոր եփած լինի դաղձն եւ անխոն եւ կարուսի ունդ եւ մագտաքէ: Եւ դի՛ր իւր ներքեւ տաք ջուր՝ որ քրտնի. յոր եփած լինի դաղձն եւ բաբունիճ եւ մարգանկուշ եւ սամիթ, եւ կամ այլ ջուր՝ յոր եփած լինի յինքն ակրկարհայ՝ ձարձատ արարած. զի խիստ արգիլէ զցրտանալն եւ զսոսոռալն զոր 'ի յայս ջերմն լինի, եւ 'ի յայն ջերմն՝ որ երկու օր ընդ մէջ լինի նոպայն, զոր անուանեն տետռատէօս:

Ապա թէ նիւթն շատ լինի եւ հաստ, որ զերդ պաղած լինի, մի՛ տաս սրբնճպին՝ մինչեւ նօսրանայ նիւթն եւ պարկեշտ լինի. զի սրբնճպինն զհաստ նիւթն այլ հաստացնէ: Ապա թէ նօսր լինի նիւթն եւ գեճ, եւ չլինի հաստ, տուր զսրբնճպինն, զի հալէ եւ կտրէ, եւ սրբէ զհով նիւթն, եւ զգոզն յորդորէ, զլերդին խցկիլն եւ զերիկամանցն բանայ, եւ իջցնէ զգեճ

Նիւթն: Եւ այլ պատրաստ՝ որ հով ջուր չտաս 'ի յայս հիւանդութիւնս, զի զնիւթն հաստցնէ, եւ զջերմն յերկարացնէ, եւ զնիւթին զեփիլն եւ զվճարիլն յամեցնէ. բայց տաք ջուրն խիստ օգտակար է, զի զնիւթն պարկեշտցնէ, եւ հալէ, զծարաւն կտրէ, եւ զգիճութիւն հալէ:

Վերաբերութեան:

Ապա թէ վերաբերութիւն չէ ինքնին որ բնութիւն ընկերէ 'ի հետ, եւ 'ի կարիք լինի որ վերաբերութիւն այնէ, տո՛ւր բողկ՝ որ ուտէ, որ թրջած լինի 'ի սրքնճախն օր մի եւ գիշեր մի. կամ կարմիր լոճիասի ջուր տուր, որ յինքն եփած լինի սամիթ եւ առուի դաղձն եւ սակաւ մին աղ եւ սրքնճախն. եւ յայդ ջերմանտ սկիզբն զքո զամենայն թպտիր հանց արա՝ զերդ որ ասացաք: Ապա թէ յամէ ջերմն, եւ ընդ տասնելչորս օր անցնի, ըռագիանի ջուր եւ կարօսի սրքնճախնով կամ վարդի կուռսով:

Ըմպելի որ օգտէ պալղամի:

Ապա թէ չթողու ջերմն այդ դեղերովդ՝ զոր ասացաք, զայս զըմպելի տուր՝ որ օգտէ պալղամին շատ օրաց ջերման. ա՛ն կարօսի եւ ըռագիանի տակի կեղեւ տասն տասն դրամ. շէկ չամիչ 'ի հատճէն հանած եօթն դրամ. վարդ, եւ զափո՝ որ է պետարիօն, եւ պատվարո՝ որ է հողմավարո, եւ շուքաղ երեք երեք դրամ. զայս ամէն երեք լիտր ջրով եփէ մինչեւ մի լիտր մնայ. քամէ, եւ տուր յամէն օր չորս նուկի յանօթուց, օգտակար է:

Ապա թէ բնութիւնն կապ լինի, տո՛ւր զայն հապն՝ որ լուացած ասպրով լինի զուգէն եւ մագտաբեով եւ հընդիկ աղով. այլ հաւու ձագ մի՛ տաս կերակուր, եւ ոչ տուռայճ, մինչեւ իջանի ջերմն, եւ պակասի քան զայն՝ որ յառաջին աւուրքն էր. զատել՝ թէ տեսանես զհիւանդն որ բնիկ վատուժել լինի: Եւ այլ պատեհ է՝ որ առաջի օրէն մինչեւ եօթն օրն պարկեշտ այրնես զթպտիրն. ապա թէ յետ եօթն աւուրն չպակասի ջերմն, եւ ոչ հետ չորեքտասան աւուրն, ապա զկերակուրն սակաւ մի այլ ուժով տուր, որ ուժն հիւանդութեան հաւասար գայ եւ բովէ: Ապա թէ յերեսն կամ 'ի յոտն փուքս անկանի, տո՛ւր զդեղն նախկին զոր յակրայքադիւնն կայ գրած, կամ զմուռսիայ դեղն:

Ղուռս որ օգտէ պալղամի:

Եւ այլ այս կուրսս շատ օգտակար է հին ջերման, եւ որ 'ի յերեսն փուքս անկանի կամ 'ի յոտն, եւ զուգէն զինքն 'ի տասն դեղէ. եւ իւր նշանքն այս է: Ա՛ն անիտն եւ կարմիր կապրի տակ՝ որ է քապարի տակ, չորս չորս դրամ. սաղճ եւ օշինդր, սուճալու եւ լեղի նուշ կեղեւած, կարօսի ունդ եւ ըռագիանի ունդ մի մի դրամ. դափտի քամուքս եւ մագտաբէ երեք երեք դրամ. զամէնս աղա՛ եւ մաղէ. եւ տաք ջրով շաղլէ, կուրսեր արա, եւ 'ի շքի չորացո. եւ տո՛ւր ամէն օր մի դրամ հետ մեղեր սրքնճախնի: Ապա թէ հազ լինի, տո՛ւր հետ մեղեր սնուցած վարդի:

Եւ այլ պատեհ է որ գիտենաս, որ այս պալղամի ջերմն չլինի յիստակ, եւ խառն լինի ընդ խարտէշ մաղձն. յայնժամ պատրաստ՝ որ չտաս զտաք խիստ դեղերն. եւ ստածէ ըստ իւր նշանացն զոր երեւենայ:

Վասն խարտէշ մաղձի:

Ապա թէ խարտէշ մաղձն աւելի լինի, պակասեցո 'ի տաք դեղերոյն, եւ յաւելցո 'ի հով դեղերն, զերդ շաքարով սրքնճախն, ճուլապ եւ գարեջուր, յոր ըռագիան լինի եփած, եւ հնդիպէի հունդ, եւ տուր զտապաշիրին կուրսն, եւ այլ դեղեր՝ զոր նման են այսոց:

Վասն սել մաղձի, որ է սելտայ:

Ապա թե սաւտայն խառնի ընդ պալղամն, եւ հաստցնէ զինքն, 'ի բան տար զխիստ տաք դեղերն, զերդ օշնդրին կուրսն հետ տակերոյ ջրին. եւ տո՛ւր զծծմի դեղն. եւ այլ տուր զթիրեաքն եւ զչամանի ճվարիշն, եւ այլ զոր նման է յայդ դեղերոտ. եւ այդ բաւական լինի օգնութեամբն Աստուծոյ:

Մահամատի Չաքարիայն ասէ 'ի նոյն պատճառդ, պալղամն չորս ցեղ են. մէկն այն է՝ որ 'ի հալած ապիկի նման է, եւ երկրորդն այն է՝ որ համովն թթու լինի, եւ երրորդն՝ համովն քաղցր, եւ չորրորդն՝ համովն աղի լինի. եւ երբ բորբոսին, ամէն մէկի նշան եւ այնելիք ուրիշ են: Եւ իւրեանց նշանն այն է. այն պալղամն որ 'ի հալած ապիկի նման է, լինի՝ երբ բորբոսի իւր ջերմն՝ խիստ դող ունի, եւ այն պալղամն որ համովն թթու լինի, 'ի ջերման 'ի ժամն ցրտանալն շատ եւ խիստ լինի. եւ այն պալղամն որ աղի լինի, դողն եւ ցրտանալն պակաս լինի, եւ 'ի յետոյ տաքութիւնն աւելի քան զայլոցն. եւ այն պալղամն որ քաղցր լինի, եւ դողն եւ տաքութիւնն պակաս լինի:

Եւ իւրեանց ստածումն այն է. եթէ ջերմանն պատճառն այն պալղամն լինի, որ 'ի հալած ապիկի նման է, իւր ստածումն վերաբերութիւն այրնելն է. եւ կերակուր պարկեշտ տալ, զերդ վառել հաւ պարկեշտ համեմնով եփած, որ հիւանդին ուժն չպակասի, մինչեւ հիւանդութիւն 'ի վճար գայ:

Ըմպելիք պալղամի:

Ապա թե ջերմանն պատճառն այն պալղամն լինի որ թթու է, յիր սկիզբէն 'ի վեր վարդմարապայ տուր մինչեւ ցելքն օրն. ապա ա՛ն ըռագիանի ջուր եւ ըղըրդական ջուր, եւ կարօսի ջուր, զամէնս յիրար խառնէ, եւ վարդմարապով տուր ըստ կարեացն 'ի յամէն օր 'ի յանօթուց, շատ օգտէ:

Այլ ըմպելիք պալղամի:

Այլ դեղ. ա՛ն մեղրաջուր, եւ ընդ զուփայն խառնէ եւ տուր. ապա թե բնութիւնն կապ լինի, ա՛ն վարդմարապայ, եւ թառնճպինի ջրով տրորէ, եւ խմելոյ տուր՝ որ բնութիւնն կակղանայ:

Ըմպելիք վերաբերութեան պալղամի:

Ապա թե պատճառն ջերմանն այն պալղամն լինի որ աղի է, իւր ստածումն այս է. ա՛ն սրքնճպին՝ որ հնդանօք լինի զուգած, եւ ընդ բողկի ջուր խառնէ, եւ տուր՝ որ վերաբերութիւն առնէ: Եւ հետ այնոր ա՛ն սնուցած մանիշակ, եւ ընդ շիրիխիշտն խառնէ եւ տուր:

Յուկնայ պալղամի:

Ապա թե բնութիւնն կապ լինի, հուկնայ դիր այս նշանօքս: Ա՛ն մեղր եւ աղ եւ ճակընդղի ջուր, եւ ընդ ներքոյ 'ի բան տար՝ զերդ իւր ռասմն է. օգտակար է: Ապա թե վերաբերութիւն չկարէ առնել, բռանց մի՛ տար վերաբերութիւն այրնել, որ ստամոքսն չտկարանայ եւ ահոկէ:

Ապա թե ջերմանն պատճառն այն պալղամն լինայ՝ որ քաղցր է, իւր ստածումն այս է՝ որ 'ի յանօթեց սրքնճուպին տաս, զոր հնտանօք լինի զուգած: Ապա թե հետ այս ջերմանս

գոզն հաստ եւ կարմրագոյն լինի, երակ առ ըստ կարեացն, եւ հետ այնոր սրբնճուպին տուր, օգտէ: Ապա թէ գսարդոստէին զբոյնն հոռոմ ձիթով թանայ, եւ զմարմինն օծանէ, օգտէ: Ապա թէ այսով չիլուծանի ջերմն, իւր թապտիրն այն է՝ որ վերաբերութիւն այնէ, եւ կերակուր պակաս ուտէ, եւ վարդմարապայ տուր եղկ ջրով. շատ օգտէ Աստուծով:

ԼԱ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն այն երկու ջերմանցն, զոր անուանեն անփիլիօս եւ լիպիրիայ:

Այս երկու ջերմն ընծային հով եւ հաստ եւ յորկուտ պալղամէն, զոր 'ի հալած ապիկի նման է. եւ ժողովի այն պալղամն 'ի ստամոքսն, կամ ցներքսեւ յամենայն երակսն: Ապա այն որ 'ի ստամոքսն ժողովի եւ բորբոսի, ընծայի իւրմէն ջերմն՝ զոր անուանեն անփիլիօս. իսկ այն որ ցներքս 'ի յերակսն ժողովի եւ բորբոսի, ընծայի իւրմէն ջերմն՝ զոր անուանեն լիպիրայ:

Ապա այս ջերմն՝ որ լիպիրայ անուանի, որ ցներքսեր լինի բորբոսն, իմանայ իւր տերն խիստ ցրտութիւն ընդ դրուց մարմնոյն, եւ խիստ տաքութիւն ցներքսէ. մանաւանդ թէ խառնի մաղձն 'ի յայն բորբոսած պալղամն ցներքսէ 'ի յերակսն: Իսկ այն պալղամն՝ որ 'ի ստամոքսն ժողովի եւ բորբոսի, զոր անուանեն անփիլիօս, ընծայի իւրմէն ջերմն, որ իմանայ իւր տերն զցուրտն ցներքսէ, եւ զտաքութիւնն 'ի դուրս 'ի մարմինն. եւ իւր պատճառն այս է՝ որ այն մասն որ բորբոսեցաւ 'ի պալղամէն, այնէ զտաքութիւն. եւ այն մասն որ չէ բորբոսած, այրնէ զցուրտն: Եւ իւր գոզն այլ պակաս տաքութիւն լինի, քան 'ի յայն ջերմն՝ զոր անուանեն անփիլիօս, եւ այլ սպիտակ լինի եւ շատ հաստ. եւ իւր մաճասին երակն թոյլ լինի այլ աւելի քան անփիլիօսն ջերմանն:

Այլ ուրդի յայս ջերմն՝ որ օր ընդ մէջ լինի իւր նոպայն. եւ այլ ուրդի՝ որ 'ի չորս օրն հազ մին առնու զնուպայն. այլ դու մի՛ մտիկ դնես իւր նուպային, եւ մի՛ ընդունիս, այլ զինքն 'ի յար նշանացն իմացիր, եւ մի՛ 'ի նուպայէն. զի կայ՝ որ յամէ իւր նոպայ չորս պահ. եւ այլ կայ՝ որ յամէ հինկ պահ. եւ այլ կայ՝ որ յամէ իւր նոպայն քսան եւ չորս պահ: Բայց այս ջերմն չքաշէ յերկար աւուրք, զի բնութիւն զշատն յաղթէ, եւ խափանէ զիւր գործն:

ԼԲ

Վասն ստածման եւ բժշկութեան երկու ջերմանն, որ անփիլիօս եւ լիպիրայ կոչեն:

Պատեհ է բժշկին որ 'ի յայս ջերմն զիւր յոյսն եւ զջանքն 'ի ստամոքսն այրնէ, եւ 'ի գոզոյն յորդորելն, եւ տայ զսրբնճուպինն կարօսի եւ ըռզիանի ջրով, սոււմպուլ եւ անիսոն, եւ այլ զոր ինչ նման են սոցա:

Վերաբերութիւն այնել:

Եւ 'ի կշտելեաց վերաբերութիւն տայ առնել բողկի ջրով եւ սրբնճուպինով եւ կարմիր լովիասի ջրով եւ սամիթով եւ մեղրով եւ աղով, եւ այլ զոր ինչ նման են սոցա. եւ այլ տուր զթրջած սապոն եւ զայարիճի ֆայղարան, օգտակար են: Եւ կերակուր սիսռան ջուր տուր չամանով եւ լուացած ձիթով եւ նշի ձիթով, եւ տուր ճակընդեղի տակ, եւ ծնելքեկ մորեով ամենովտ տուր զկերակուրն՝ որ զստամոքսն սրբէ, եւ զգոզն յորդորեն, եւ զբնութիւնն կակուղ պահեն. օգտակար է օգնականութեամբն Աստուծոյ:

Վասն ստածման եւ բժշկութեան այն մէկայլ ջերմանն, որ լիպիրայ կոչի:

Պատեհ է որ 'ի յայս ջերմանս սկիզբն վարդմարապայ տան սրբնճուպինով, եւ 'ի վերջքն հիւանդութեանս զթրջած սապռն եւ զթրջած այարիճն ըռագիանի եւ հընտիպէի եւ կարօսի ջրով. եւ այլ տուր զվարդին կուրսն, եւ մագտաքէի կուրսն. եւ ամենովտ պատուիրեմ 'ի յայս ջերմանս որ 'ի բան տանիս զդեղերն, եւ զկերակուրն եւ ըմպելիսն. այլ դէպ 'ի հովայինն քան զանսփիլօս ջերմանն. եւ այդ կարճառօտ բաւական է, օգնութեամբն Աստուծոյ:

ԼԳ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն խարտեշ մաղձին ջերմերոյն, որ է սփրայն, եւ հոռոմն քսանթին խաւին ասէ:

Յառաջ պատեհ է իմանալ զմաղձին ջերմերն որ 'ի յիստակն են. եւ մէն մէն մաղձին եութեամբն, որ յերեք դէմս բաժանին: Մէկ այն է՝ որ խարտեշ մաղձն ցներքս 'ի յերակսն բորբոսի. եւ իւր բորբոսն հաւասար ընդ ամենայն երակսն մարմնոյն լինին. եւ անուանի յիստակ երկու տետռատեոսն. զի իւր տաքութիւնն 'ի յար լինի: Բայց մէկ օրն թեթեւ լինի իւր տաքութիւն, եւ մէկայլ օրն շատ եւ մեծ. վասն այդ պատճառանազո անուանի երկու տետռատեոս, որ չեն հաւասար. եւ հիւանդին երակսն չարքի 'ի տաքութենէն, եւ ոչ տաքութիւնն 'ի հիւանդէն, մինչեւ գայ մէկայլ նոպայն 'ի մէկայլ օրն:

Իսկ երկրորդ դէմսն անուանի յիստակ եւ 'ի յար կափսօս, որ է այրեցող, զի աննոպայ եւ հանապազ լինի իւր տաքութիւնն. որ թարգմանի յար եւ այրեցող ջերմն: Եւ ընծայի նա՝ երբ բորբոսի մաղձն 'ի ներքս 'ի յերակսն, որ շուրջ զսրտովն կան, եւ մօտ 'ի սիրտն լինին, եւ կամ 'ի լերդին յերակսն 'ի ներքի դեհն, ուր փոսն է լերդին, կամ 'ի թոքին յերակսն, կամ 'ի յայն յերակսն՝ որ 'ի ստամոքաց բերանն 'ի մօտ լինի, եւ իւր այրեցն եւ վառչելն եւ լոչն եւ ծարաւն այլ շատ լինի քան 'ի յար տետռատեոսն, զոր երկուս կոչեն. եւ այլ որ լեզուն սեւ լինի, եւ խելքն ցրուած:

Իսկ երրորդ դէմսն յիստակ այն է, որ ընդ դրուց երակացն բորբոսի մաղձն. եւ իւր նշաննին յերեք իրաց լինին, զերդ որ այլ յառաջո ասացաք 'ի պալլամին ջերմն: Մէկն այն իրուին են՝ որ բնութեամբ լինին, զերդ հիւանդին խառնուածն՝ որ տաք եւ չոր լինի, եւ մաղձն իւր խառնուածոցն յաղթեալ լինի, եւ տարօքն մանուկ լինի, եւ ժամն ամառն լինի, եւ օղն տաք եւ չորային լինի: Եւ երկրորդ նշաննին այն իրուին լինին՝ որ չեն բնութեամբ. զերդ որ հիւանդն 'ի յառաջն կերակրեալ լինի տաք եւ չորային կերակուր, նոյնպէս եւ ըմպելիքն տաք եւ չորային լինի խմել, եւ շատ հոգս լինի տարել կամ տքնութիւն, կամ դատել լինի շատ, կամ շատ ժամանակ 'ի պաք է կեցել, եւ ընդ ցերեկոյ, եւ որոյ արուեստն զերդ դարբնութիւն լինի եւ կամ ապիկեգործութիւն, կամ այլ արուեստ՝ որ 'ի կրակի մօտ լինի. զի այս ամենայն իրուիս եւ իւրեանց նմանիքն տաքցնեն զմարմինն եւ չորացնեն, եւ խարտեշ մաղձն ընծայեն: Իսկ երրորդ նշաննին այն իրուին լինին՝ որ 'ի դուրս են 'ի բնութենէն, զերդ որ հետ ջերմանն խիստ դող լինի եւ խոցտիլ մարմնոյն զերդ ասղամբ. եւ այդ խոցտելոյդ պատճառն մաղձին սրութիւնն լինի: Եւ 'ի նոպային սկիզբն՝ երակսն փոքր եւ յուշ լինի, եւ հետ պակաս ժամու մին՝ ահաւոր եւ ուժով լինի եւ փոփոխական. եւ իւր ուժուորութեանն պատճառ՝ մաղձին թեթեւութիւնն լինի եւ պարկեշտութիւնն, որ չճանրէ 'ի վերայ ուժոյն եւ յաղթէ. եւ ահաւորութեան պատճառ կարիքն է սրտին, որ հովցնէ զտաքութեան խստութիւնն. եւ փոփոխական լինելն երակին ընդ ամենայն ջերմերն լինի. եւ իւր պատճառն այն է, որ նիւթն ծանրէ եւ նեղէ զուժն. բայց 'ի յայս ջերմս պակաս լինի. զի իւր խլտն թեթեւ է եւ պարկեշտ: Գոզն կրակի գունով լինի, եւ իւր հոտն նեխած. կարմրութեան պատճառն՝

մաղձին շատութիւնն լինի եւ տաքութիւնն. եւ նեխահոտութեան պատճառն՝ նիւթին բորբոսիլն լինի:

Այլ յայս ջերմս ծարաւ լինի խիստ, եւ նեղհոգութիւն շատ. սրտին շարժել լինի, եւ վերաբերութիւն մաղձի. եւ այլ կուլինի՝ որ 'ի վայր լուծանի մաղձն. եւ շատ քրտնի, զի պարկեշտ է նիւթն որ է մաղձն: Եւ երբ զայս նշաննիս տեսանես, եւ կամ զշատն 'ի յայտոցէ, գիտացիր՝ որ 'ի խարտեշ մաղձէն ջերմս է՝ որ օր ընդ մէջ ունի զնոպայն, տասն եւ երկու պահ, զոր անուանեն յիստակ տետռատետս. մանաւանդ՝ թէ 'ի յայն ժամս շատ հանդիպի այս ջերմս մարդկան: Եւ երբ յիստակ լինի՝ եօթն նոպայով բռնէ 'ի տասն եւ չորս օրն. եւ նոպայէ 'ի մէկայլ նոպայն երեսուն եւ վեց պահ լինի միջոցն՝ երբ խալըս լինի, որ է յիստակ:

Յարցումն՝ եթէ ե՞րբ բորբոսի մաղձն, զի տաք է եւ չորային. կամ սաւտայն, զի հով է եւ չորային. զի ասէն ոմանք՝ եթէ չորութիւն արգիլէ զբորբոսիլն:

Տամբ այնպիսոյն պատասխանի այսպէս, եթէ չորութիւն երեք դէմս ունի. մէկն՝ որ չորութիւնն 'ի յիրացն 'ի բնութիւնն լինի եւ խառնուածքն. եւ երկրորդն՝ որ 'ի մարմինն լինի. եւ երրորդն՝ որ 'ի յերկուսն լինի չորութիւն, 'ի բնութիւնն եւ 'ի մարմինն, որ է եուրիւն: Չի կան իրուի՝ որ իւրեանց բնութիւնն չորային են եւ ցամաք. բայց իւրեանց եուրիւնն հոսին եւ ծորին, զերդ մեղրն եւ գինին, եւ խարտեշ մաղձն, եւ աղի ջուրն, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Եւ այլ կան իրուի՝ որ իւրեանց բնութիւնն եւ խառնուածքն տաք են եւ գիճային, բայց եուրեամբ եւ մարմնովն չոր լինին եւ պինդ, զերդ զդարապղպեղն, եւ զանճապիլն, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Եւ այլ կան իրուի, որ իւրեանց բնութիւնն եւ խառնուածքն մարմնոյն, որ իւրեանց եուրիւնն, չոր եւ պինտ լինին, զերթ զերկաթն եւ զքարն, եւ այլ զոր ինչ նման են այտոց:

Իսկ այն իրուին, որ իւրեանց մարմինն չոր եւ պինտ լինին, եւ բնութեամբն գիճային եւ կակուղ, նա հնար ունի եւ ճար բորբոսելոյ վասն իւր գէճ խառնուածոցն. զի օտար տաքութիւն երբ 'ի յինքն գործէ, գտանէ իւր գէճ խառնուածքն, որ թուլացնէ եւ ծորէ եւ սփռէ եւ շարժէ դէպ 'ի դուրս, եւ եռացնէ եւ բորբոս ընծայեցուցանէ: Իսկ այն իրուին, որ իւրեանց բնութիւնն չորային լինի եւ ցամաք, եւ մարմնովն կակուղ լինին, ծորին եւ հոսին, ունին հնար եւ ճար բորբոսելոյ. զի մարմնոյն եուրեամբն կակուղ են, ծորին եւ հոսին. նա օտար տաքութիւնն երբ յինքն մտանէ, գտանէ 'ի մարմնոյն գիճութիւնն՝ զոր կակղացնէ եւ ծորեցնէ, եւ դէպ 'ի դուրս քաշէ, եւ եռացնէ եւ փոխէ 'ի բորբոսիլն: Իսկ այն իրուին՝ որ իւրեանց բնութիւնն եւ մարմինն չոր եւ ցամաք լինի եւ պինդ, նա չունին հնար եւ ճար ամենեւին բորբոսելոյ, զի երկու դէմսն ժողոված ունին՝ զբնութեանն եւ զմարմնոյն: Ապա երբ այդ հանց հանդիպի՝ զերդ որ ասացաք, եւ գործէ 'ի յինքն օտար տաքութիւն, այլ յաւելցնէ իւր չորութիւնն եւ խիստ պնդութիւն:

Իսկ խարտեշ մաղձն թեպէտ եւ բնութեամբն չորային է, այլ մարմնոյն եուրեամբն կակուղ է, ծորի եւ հոսի. վասն այդ պատճառանազոյ ընդունի զբորբոսիլն. նոյնպէս եւ սեւ մաղձն, որ է սաւտայն:

Այլ 'ի յառաջոյ յիշեցաք զիրուին՝ որ բնութեամբն են, եւ զոր չեն բնութեամբ, եւ զորս 'ի դուրս են 'ի բնութենէ. արդ այն իրուին՝ որ բնութեամբ են՝ եւթն են, որ են այսոքիկ. տարերքն եւ խառնուածքն, նիւթերն եւ անդամուկն եւ զօրութեներն եւ գործերն եւ երեք շունչն, զոր երեք հոգիք անուանեն: Իսկ այն իրուին՝ որ չեն բնութեամբ, վեց են, որ են այսոքիկ. օգտ՝ որ զմեզ պատեալ ունին. եւ մեր շարժիլն եւ խաղաղ կենալն. կերակուրն եւ ըմպելիլն. քունն եւ արթնութիւնն. եւ բնութեամբ լուծանիլն եւ կապիլն. եւ

պատահմունքն, զոր 'ի յերեք հոգիսն հանդիպին, զերդ հոգալն եւ տրտմելն եւ 'ի սիրտ ելանելն, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Իսկ այն իրուին՝ որ 'ի դուրս են 'ի բնութենէն, երեք են. որ են այսոքիկ. հիւանդութիւնքն, եւ պատճառնին, եւ պատահմունքն:

Եւ այլ ասացին, եթէ խարտեշ մաղձն երբ յաղթէ, կամ ամենայն մարմնոյն յաղթէ, եւ կամ յանդամոյ մինն 'ի մարմինն: Ապա թէ ամենայն մարմնոյն յաղթէ, կամ բորբոսած լինի, եւ կամ անբորբոս: Եթէ անբորբոս լինի, նա ընծայի իւրմէն արական, որ է մարմնոյն դեղնիլն: Ապա թէ բորբոսած լինի, կամ ցնեղքսէ յերակսն լինի, եւ կամ 'ի դուրս 'ի յերակացն: Ապա թէ նեղքսէ յերակացն բորբոսի, նա ընծայի իւրմէն յար ջերմ, որ կրկնակ տետռատեսու ասեն. եւ կամ ընծայի ջերմ, որ կոչի կափսոս, որ է 'ի յար եւ այրեցող ջերմ: Իսկ եթէ 'ի դուրս 'ի յերակացն բորբոսի, նա ընծայէ զնոպայով տետռատեսուն, որ օր ընդ մէջ բերէ զիւր նոպայն: Ապա թէ յանդամ մին վաթի, նա նոյնպէս կամ բորբոսած լինի, եւ կամ անբորբոս. եթէ անբորբոս լինի, նա ընծայէ զաղուեսացաւն եւ զօձացաւն, եւ տաքութիւն յարցնէ: Իսկ եթէ բորբոսած լինի՝ նա խումրայ ընծայէ, որ է կարմիր եւ տաք այտոց՝ որ ուտէ զմարմինն, եւ խաղաւարտ այրնէ:

Այլ պատեհ է՝ որ գիտենաս զմաղձն, որ երեք ցեղ են. մէկն այն է՝ որ խարտեշ լինի, եւ իւր բնակութիւնն 'ի լերդն լինի եւ 'ի լեղին. եւ երկրորդն այն է՝ որ զաֆրանի գունով լինի, եւ իւր բնակութիւնն 'ի լերդն լինի եւ ստամոքսն. եւ երրորդն այն է՝ որ քունաթի գունով լինի, եւ իւր բնակութիւնն 'ի ստամոքս միայն լինի. եւ իւր ընծայելն 'ի տաք եւ 'ի կծու կերակրոց լինի, զերդ պղպեղն եւ մանանեխն եւ խստորն, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Եւ յայտ 'ի քունաթետ չընծայի օր ընդ մէջ ջերմ. զի բնութիւն հրէ շուտով, եւ վարէ 'ի ստամոքացն, եւ չթողու որ բորբոսի: Եւ երբ այդ ջերմտ յստակ լինի՝ նա եռայ իւր տաքութիւն եւ խոցտէ զլերդն. ապա թէ չլինի յիստակ, նա չերեւնայ 'ի յայդ նշաննոյդ՝ զոր ասացաք՝ բնով. մանաւանդ խառն նշաննի երեւնան. եւ իւր պատճառն այն է՝ որ այլ նիւթեր խառնին:

Ապա երբ չլինի յիստակ օր ընդ մէջ ջերմդ, իւր նշաննին այս են՝ որ իւր նոպայն քան զտասուերկու պահ այլ աւելի քաշէ, եւ իւր նոպայնին այլ յաւելնան քան զետօն նոպայն. եւ իւր մաճասն փոփոխական եւ այլ եւ այլ ցեղ լինի. եւ 'ի գլուխն ծանրութիւն լինի. եւ իւր նոպային դողալն քսան եւ չորս պահ քաշէ, եւ կայ՝ որ այլ աւելի. եւ իւր եփեւոյն երեւումն յուշ լինի, եւ 'ի հիւանդին փորքն չերեւնայ նիհարութիւն եւ ոչ բարակութիւն. եւ յանկարծ լինի՝ որ չթողու շուտ քրտնելով. եւ կամ լինի՝ որ սկիզբն չլինի դողալն ուժով. եւ իւր տաքութիւնն չլինի զերդ յիստակ ջերման տաքութիւն: Ապա զայդ նշաննիտ տեսանես, գիտացիր որ այն ջերմն չէ յիստակ: Իսկ մեք յառաջ գլխտակ ջերմանն զստածումն եւ զբժշկելն յիշեմք, եւ ապա զխառն ջերմերոյն՝ որք ոչ են յիստակ:

ԼԴ

Վասն ստածման եւ բժշկութեան յիստակ տետռատեսու ջերմանն, զոր հոռոմն ակռուօս անուանէ, եւ տաճիկն խասլայ. որ թարգմանի անապակ եւ յիստակ մաղձին ջերմն:

Այլ պատեհ է որ 'ի զամէ եւ յանգահ բժշկեն զայդ ջերմդ, որ յիստակ կոչի. եւ ջշտային 'ի յիւր բժշկութիւնն, զի խարտեշ մաղձն սուր է եւ պարկեշտ, եւ չբառնայ զխալատ այնելիքն 'ի բժշկէն կամ 'ի հիւանդէն: Եւ պատրաստ՝ որ այլ չարնես զինքն սուր դեղերովն, որ չընծայի այտոց 'ի յանդամ մին յիշխան անդամոցն. եւ այլ մի՛ խիստ հովցնես, զի հաստցնես զնիւթն, եւ յամեցնես զեփիլն, եւ յերկարեցնես զհիւանդութիւնն:

Այլ պատեհ է որ ընդ յառաջքն պետ այնես բնութեան, եւ կակղացնես դամոյնաջրով, եւ թմրինտոյ ջրով, եւ թառանկուպինով, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Ապա հետ նիւթին եփելոյն, կակղացո զբնութիւնն օշինդրի ջրով, եւ դեղին հալիլէի ջրով, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Եւ զլուծման դեղերո՝ ՚ի նոպային օրն մի՛ տաս, այլ հանգո զհիւանդն. եւ տուր այն օրն գարեջուր մէն, կամ նռան ջուր:

Ապա թէ նոպայն ՚ի վաղուենէ բռնէ, մի՛ տաս զգարեջուրն, զի ՚ի վեր ձգէ, եւ պատճառ լինի գլխացաւութեան, եւ դիժարցնէ զջերմն, այլ տուր զգարեջուրն առաւօտին՝ յառաջ քան զնոպայն հինգ պահով կամ վեց պահով: Ապա թէ չկարէ խմել զգարեջուրն, տուր դոմի ջրով եւ մուգ նռան ջուր. զի դոմի ջուրն զգարեջրին կարիքն կատարէ, երբ չկարէ խմել զգարեջուրն: Եւ երբ նոպայն անցանի, տո՛ւր կերակուր սպանախ, եւ թախտ, եւ փերփերան, եւ վլիտօն, եւ դդում: Ապա թէ ՚ի կուրծքն խոշորութիւն լինի, մօլօխ՝ որ է ՚ի խուպագէ ազգ մի, որ է ցանծոյ, եւ տանու աղճկուտատի, զի այդ ամէնդ կակղացնէ եւ զտաքութիւն հահնտէ:

Ապա թէ նոպայն յերեկոյէն բռնէ, տուր զգարեջուրն առաւօտուն, եւ հետ երեք պահու եւ չորք պահու տո՛ւր զկերակուրն: Ապա թէ նուաղիլ հանդիպի հիւանդին, եւ կամ դարտկի մարմինն լուծմամբ, ուր եւ ուրդի լուծումն, տուր կերակուր՝ որ չաքօքսն սակաւ լինի, եւ բնութեամբն պարկեշտ, զետ հացի փշրանքն նռան ջրով: Եւ այլ շատուց լուծումն դիպի, կամ քրտնի շատ, կամ վերաբերութիւն այնէ, զի յայս ջերմն հանապազ այդ երեքդ հանդիպին, մանաւանդ վերաբերութիւն:

Տիւտ ստամոքաց տաքութեան:

Ապա թէ վերաբերութիւնն շատ լինի, խաղողոյ, խնձորի բանդակով, եւ ազոխի բանդակով, եւ թթու նռան բանդակով, եւ թարունճ բանդակով, եւ ֆստուխի վերի կեղեւովն. եւ տո՛ւր որ ծամէ այգւոյ խաւրժիլ, եւ ջուրն ՚ի կուլ տայ. եւ զթուրինճին թթուն տուր. եւ ՚ի վերայ ստամոքացն տմետ արա մրտի ջրով, եւ խնձորի ջրով, եւ սերկեւիլի ջրով, եւ վարդի ջրով՝ որ է զուգծոյ, եւ սուբ եւ քաֆուր եւ լատան, եւ այլ զոր նման են այտոց:

Ապա թէ շատ լուծումն դիպի, տո՛ւր մթխալ մի տապաշիրի դուրս, որ թթռչի հնդով լինի զուգած, թթու խնձորի ջրով, կամ ազոխի ջրով, կամ սերկեւիլի, կամ մրտի բանդակով. եւ տո՛ւր նռան հատի փոխինտ, կամ փշատի փոխինտ, կամ չոր խնձորի փոխինտ. եւ իւր կերակուրն տուր աղտուրով, եւ հետէն պաքսիմատ կեր:

Յուկնայ կապող՝ մաղձի լուծման:

Ապա թէ շատնայ մաղձին լուծումն, եւ վախես յաղեցն՝ որ չիխոցնայ, հոկնայ դիր այս նշանօքս: Ա՛ն գառնալեզվի ջուր, եւ հովուաց բրի ջուր, եւ փրփրեմի ջուր, եւ ձուի մի դեղնուց, մատնեհար կաւ, սակաւ մի վարդի ձեթ. զայս ամէնս յիրար խառնէ, եւ ՚ի բան տար, որպէս այլ հոկնայի ըռասմն է:

Ըմբելիք կապող՝ մաղձի լուծման:

Եւ տուր խմելոյ զայս դեղս. ա՛ն բզրդատուն աղընծած, հայ կաւ, եւ մատնեհար կաւ, եւ մրտի քամուքս: Ապա թէ վատուժ է հիւանդն ՚ի շատ քրտնելոյ, զհիւանդն ՚ի հով տունն նստեցուր, եւ տուր սփռել ՚ի տունն վարդ, եւ ուռի տերեւ, եւ խնձորի տերեւ, եւ ՚ի տանն ՚ի յանկունն դիր լախլախայ, որ հովային եւ անուշահոտ ջրով լինի եփած. եւ օգտակար են կամօքն Աստուծոյ:

Եհաննայ ասէ՝ ի նոյն պատճառդ, եթէ իւր գլուխքն խարտեշ մաղձն լինի, որ ՚ի դուրս յերակնոյն բորբոսի. հոռոմն ակռասու տետաատէս անուանէ, եւ տաճիկն ղըպնախպա, որ թարգմանի յիստակ երեքօրեայ. եւ իւր նոպայն օր ընդ մէջ լինի երկոտասան պահ: Եւ իւր նշանն այն է, որ ջերմն զօրաւոր բռնէ, եւ տաքութիւնն շատ երեւնայ ՚ի մարմինն, եւ քրտիկքն շատ լինի. բայց դոյր է ինքն, եւ շուտ արձակի. եւ յետինսն սահմանն տասնեւչորս օր լինի, յորժամ մաղձն խառնուրդ լինի յայլ նիւթէ եւ յիստակ:

Ըմպելիք սաֆրայի:

Եւ իւր ստածումն այն է, որ հանապազ քաղցր եւ թթու նռան ջուր խմէ. ապա թէ առնուս դեղին հելիլէ տասն դրամակշեռ, եւ մանր աղաս, եւ ընդ ճուլապ խառնես, եւ տաս, շատ օգտէ:

Սաֆրայ լուծանելոյ ըմպելիք:

Կամ ա՛ռ երկու տանկ սակամոնի, եւ նոյնպէս ճուլապով խառնել, տուր՝ եթէ զօրութիւնն ուժով լինի, որ ձեռն մի բանի մաղձ ՚ի մարմնոյն իջուցանէ, շատ օգտէ: Գարեջուր սրքնճուպին տուր. եւ կերակուր մաշ եւ սպանախ, եւ փերճոկած ոսքն ՚ի նոպային ՚ի թողելոյն ժամն:

Տլէ սաֆրայի:

Ապա ա՛ռ սանտալ, եւ քաֆուր, վարդէջրով շաղվէ, եւ ՚ի վերայ սրտին, եւ ՚ի վերայ լերդին տլէ արա, օգտէ: Ա՛ռ քացախ եւ վարդի ջուր, եւ ընդ կիսեղկ ջուր խառնէ, եւ զոտսն այնիւ ծեփէ: Եւ երբ հիւանդութեանն վերջ գայ եւ արձակի, կերակուր հաւձագ տուր, զոր ազոխի ջրով, կամ նռան ջրով եփած լինի, եւ յետ այնոր գառան եւ ուլոյ միս տուր, եւ թածայ ձուկն քացախով եփած ՚ի բանի պահէ:

Գլուխ որ ցաւի ՚ի սաֆրայէ:

Փօլօս ասէ, թէ իւր ստածումն այն է՝ որ առնու բաբունիճ եւ մանիշակ եւ նոնոֆար. զայս զամէս ջրով եփէ, եւ այն ջրովն զգլուխն ծեփէ. ՚ի հով տեղի եւ ՚ի հով տունն նստի, եւ ուռի տերեւ ՚ի մօտն եւ ՚ի տունն տարածէ. ՚ի հով եւ ՚ի գիճային իրուին յարեւայ ուտելով եւ խմելով. այլ մրգաջրով եւ թառանկուպինով զբնութիւնն կակուղ պահէ, կամ նոնոֆարի ջրով եւ մանիշակով, օգտակար է: Եւ սապոռին հապովն եւ մագտաքեով խախաչ առնէ, եւ սրքնճուպին եւ նռան հատն օգտակար են: Ապա թէ բնութիւնն լոյծ լինի, սերկելի ըռուպ տուր, եւ այլ զոր ինչ նման են սոցա: Ապա թէ բնութիւնն կապ լինի, մրգաջուր տուր: Ապա թէ ծարաւն խիստ լինի, փերփերանի հնտին կաթն, եւ դոմի ջուր, եւ շաքարի սրքնճուպին տուր, օգտակար է: Ապա թէ ջերմն զօրաւոր լինի, զքաֆուրի դուրսն տուր սատակ սրքնճուպինով. եւ կերակուր ազոխի մուգավարայ տուր. օգտէ եթէ Աստուած կամի:

Լդ

?Սաֆրայի:

Այլ դեղ. ա՛ռ դեղին հալիլէ աղցած եւ մաղած երկու նուկի, եւ ՚ի թրջոց արկ ՚ի յերեսուն դրամ ճուլապ. եւ արկ ՚ի վերայ քառասուն դրամ ջուր, եւ թող օր մի եւ գիշեր մի. ապա աճրռէ, եւ քամէ, եւ խմելոյ տուր: Ապա թէ կարիք լինի՝ որ այլ շուտով այրնես, ա՛ռ մէկն

մին 'ի յայդ ջրերոյտ, եւ արկ 'ի հաւանն 'ի վերայ նոյն չաքս հալիլայի, եւ հար հաւանի կոթովն աղէկ, ապա քամէ, եւ տո՛ւր որ խմէ:

Ապա թէ տաքութիւնն աւելի լինի յայս ջերմս, խառնէ յայդ դեղերոյ պզրղատունի լուղապ տասն դրամ, եւ տո՛ւր որ խմէ: Ապա թէ կարիք լինի 'ի յայլ ուժով դեղ, եւ հիւանդն կարող է՝ որ վերցնել կարէ, դու ա՛ռ կէս տանկ սակամոնի կամ տանկ մի, եւ տո՛ւր սակաւ մի ճուլապով, կամ մանիշկի շարապով, կամ եղկ գարեջրով, կամ սրբնճափնով:

Ղուռս մանուշակի, լուծման:

Այլ նշանք մանուշակի կուրսի, որ լուծումն այրնէ, եւ օգտէ այդ ջերմանտ: Ա՛ռ չոր մանիշակ, եւ խիարի ունդ կուած երեք երեք դրամ. սակամոնի կէս դրամ. զամէնս աղա՛ եւ մաղէ, եւ ջրով շաղէ, կուրս արա, եւ 'ի շքի չորացո, եւ տո՛ւր դրամ մին եւ կէս տանկ:

Եւ զամէնայն լուծման դեղերն 'ի յայն օրն տուր՝ որ չունենայ զնոպայն. այլ 'ի նոպային օրն մի՛ տաս զլուծման դեղն. իսկ թէ վերաբերութիւն տաս այրնել, պատեհ է: Եւ զայդ 'ի դողալուն ատենէ սկիզբն արա, կամ 'ի տաքութեան սկիզբն տաս այնել զվերաբերութիւնն սրբնճափնով եւ տաք ջրով. եւ 'ի յայս ջերմս պատեհ է որ հետէն սրբնճափն խմէ, շատ օգտէ: Եւ 'ի յայլ յամէնայն բորբոսային ջերմերն տո՛ւր զսիրբանճուպինն, զի զբորբոսած նիւթն պարկեշտցնէ, եւ հանէ ընդ գոզին, եւ ընդ ձեռնալուային, եւ ընդ քրտինքն հանէ:

Ապա թէ յերկար քարշէ այս հիւանդութիւնս, տո՛ւր գարեջուր՝ յոր եփած լինի ըռզիանի տակի կեղեւն եւ իւր հունդն. զի ըռզիանի տակի կեղեւն եւ ունդն պարկեշտցնէ զբորբոսած նիւթն, եւ հանեն յերակացն: Եւ այլ 'ի դողալուն սկիզբն՝ եւ երբ դողն ամուռ զմարդն՝ զոտսն եւ զձեռնս 'ի տաք ջուրն դիր. եւ նոյնպէս ներքեւ հանդերձին տաք ջուր դիր, հանց որ շոգին եւ տաքութիւնն 'ի մարմինն հասանի. եւ զհանդերձն՝ որ հազնի՝ բրդէ տուր զուզել:

Ապա թէ յերկարանայ հիւանդութիւնն, եւ կամ տաք նիւթն 'ի յինքն աւելի լինի, տո՛ւր վարդմարապայ, եւ շաքարով սրբնճափն տասն տասն դրամ որ խմէ. եւ երբ պակասութիւնն, տո՛ւր զվարդին փոքր կուրսն սրբնճափնով, եւ օգտէ Աստուծով: Իսկ եթէ յերկարանայ այդ հիւանդութիւնդ, ապա տո՛ւր զսապոն՝ զոր ըռազիանի ջրով եւ հնտիպէի ջրով թրջած լինի. եւ զինքդ 'ի յակրայբադինն գտանես գրած:

Էհաննայ սրափիոնացոյ որդին ասէ 'ի նոյն պատճառդ, եթէ այս ջերմանս պատճառն այն լինի՝ որ երկուսն 'ի չորից նիւթիցն, կամ երեքն բորբոսին, եւ խառն ջերմ այրնեն. եւ իւր նշանն ըստ աւելի եւ ըստ յաղթող նիւթին լինի, որ աւերեալ բորբոսեցաւ 'ի չորից նիւթոցն: Իսկ նշանքն զամէն մէկ 'ի յառաջ քան զայդ ցուցաք օգնութեամբն Աստուծոյ:

Իսկ իւր ստածումն եւ բժշկութիւն այն է, որ բժիշկն իր մտօքն աղէկ տեսանէ եւ իմանայ, եթէ 'ի չորից նիւթոցն ո՛րն բորբոսեցաւ, ո՛րն է զօրաւոր եւ յաղթող: Ապա թէ աւեր արիւնն զօրաւոր եւ յաղթող երեւնայ, պատեհ է որ երակ անուռ ըստ հիւանդութեանն, եւ ըստ հիւանդին զօրութեան արիւն թողու. եւ զդէմնն աւելի 'ի յարեանն 'ի ջերմանն ստածումն այրնէ: Ապա թէ 'ի յայլ նիւթոցն տեսանես յաղթող եւ զօրաւոր, տե՛ս թէ ո՛ր է 'ի չորիցն յաղթող եւ զօրաւորն՝ իւր նշանօքն, որ է մաճասին երակն, եւ 'ի դարուրայն, եւ պուրհանն, եւ 'ի յայլ պատահմունքն՝ որ զկնի հիւանդութեանցն լինին:

Իսկ եթէ խարտէ մաղձն լինի զօրաւոր եւ յաղթող, զտետռատեօս ջերմանն զստածումն 'ի բանի պահէ: Ապա թէ արիւն լինի աւելի եւ յաղթող, զսինայիսօս ջերմանն զստածումն

'ի բանի պահէ: Ապա թէ պալղամն տեսանես կարող եւ յաղթող, զափիմեռնիսու ջերմանն զստածումն 'ի բանի պահէ: Ապա թէ սեւ մաղձն՝ որ է սաւտայն՝ տեսանես յաղթող եւ զօրաւոր, զտետռատեսու ջերմանն ստածումն 'ի բանի պահէ, որպէս յիշեցաք զամէն մէկ 'ի յիւր գլուխն զնշանն եւ զստածումն ուրիշ ուրիշ եւ 'ի լման: Ապա թէ երկու նիւթ կամ երեք՝ որ աւերեալ բորբոսեցան՝ հաւասար լինին, նոյնպէս եւ դու զստածումն եւ զդեղերն եւ զկերակուրն հաւասար եւ 'ի միջավայր արա: Եւ այլ յարեցի՛ր 'ի յուժ հիւանդին, 'ի ժամն, եւ 'ի տարիքն, եւ 'ի սովորութիւն, եւ տո՛ւր զդեղն եւ զկերակուրն հակառակ ըստ նիւթիցն խառնմանն, օգտակար է, թէ Աստուած կամի:

ԼԵ

Վասն ստածման եւ բժշկութեան սուր եւ այրեցող ջերմանն: Եւ իւր պատճառն անապակ խարտէշ մաղձն լինի:

Չոր հոռոմն տեքսիս եւ դիակայիս ասէ, եւ տաճիկն հումայի մուհրիղայ ասէ. Եւ իւր պատճառն անապակ եւ յիստակ խարտէշ մաղձն լինի: Յայս այրեցող ջերմանս 'ի ստածումն, ասէ Սինայի որդին, եթէ զերդ յիստակ տետռատէին ստածումն լինի ամենայն դիմօք, որպէս յիշեցաք այլ յառաջդ:

Իսկ Թեպիթ Կուռայն ասէ, եթէ այս այրեցող ջերմն այն է՝ որ 'ի յար լինի. բայց մէկ օրն խիստ լինի, եւ մէկայլ օրն սակաւ կակուղ ցուցանէ. Եւ իւր սկիզբն 'ի խարտէշ մաղձին բորբոսելոյն լինի՝ որ 'ի ներքս 'ի յերակսն բորբոսի, որ մօտ 'ի սիրտն լինի եւ մօտ 'ի ստամոքաց բերանն, եւ այլն՝ զոր այլ 'ի յառաջդ ասացաք: Եւ իւր նշանն այն է, որ մարմինն փշանայ, եւ լեզուն խոշորանայ, եւ ընդ յառաջն դեղին լինի լեզուն, եւ յետոյ սեւանայ:

Եւ իւր ստածումն ընդ յառաջսն մի՛ շտապիս, եւ մի՛ լուծման դեղ տաս. այլ տուր մրգաջուր, եւ մանիշակի շարապ, կամ կակուղ հուկնայ դիր: Եւ այլ այնոց, որ զխառնուածքն փոխեն, տու՛ր դամոյնի ջուր եւ սրբնճպին, զերդ դդմի հնտով եւ խիարի հնդով լինի զուգած. ապա յետ երկու պահուն զարեջուր տուր: Եւ այն օրն՝ որ խիստ լինի՝ զգարեջուրն մէն տուր, կամ զդամոյնի ջուրն մէն, որ չծանդրէ 'ի վերայ հիւանդին. եւ այլ որ երբ գայ խիստ տաքութիւն չգտանէ զստամոքսն փարփուտ: Երբ ծարաւն խիստ լինի, տուր զարեջուր, եւ դդմի ջուր շարապով՝ զոր պատէի տեսանես. եւ ամենայն իրօք զիւր ստածումն դէպ 'ի յիստակ տետռատեսու ջերմանն արա:

Ապա երբ եփելոյն նշանն այս ջերմանս երեւնայ, եւ դեռ սրութիւն լինի, պատէի է որ զբաֆուրի կուրսն տաս առաւօտին սրբնճպինով, զոր յիստակ լինի. եւ հետ երկու պահուն տո՛ւր զգարեջուրն հովցուցած եւ մուգ նռան ջրով. եւ չէ պատէի որ դդմի ջուր տաս, եւ ոչ խիարի ջուր, եւ ոչ այլ խիստ հովային իրք, եւ ոչ հով ջուր, ցուր չես տեսել զեփելոյ նշանն. եւ կամ խիստ լուծումն հանդիպի հիւանդին, հանց որ կտրի սրութիւն ջերմանն. զի թէ այլ 'ի յառաջ տաս զայդ խիստ հով դեղերդ, նա զնիւթն յիրար զսպէ, եւ արգիլէ յեփելոյ եւ արծակելոյ, եւ առնէ խցկումն եւ այտոց: Իսկ թէ սրութիւնն խիստ լինի, եւ տաքութիւնն դեռ 'ի մարմինն կենայ, եւ բերանն գեճ լինի, տուր զտապաշիրին դուրսն. եւ իւր նշանքն այս է:

Ղուռս տապաշիրի:

Ա՛ն կարմիր վարդ, եւ թառանկալին հինգ հինգ դրամ. նշաստակ, եւ մարուխի տակ, եւ քիթը, եւ տապաշիր երկու երկու դրամ. զաֆրան մի դրամ. զամենս աղա եւ մաղէ, եւ պզրկատունի լուղապով շաղէ. կուրսեր արա, եւ ՚ի շուքն չորացո, եւ ՚ի բան տար. օգտակար է:

Ապա թէ ՚ի բերանն եւ ՚ի մարմինն սակաւ չորութիւն լինի, տո՛ւր զփերփերան հնդին ջուրն սրքնճախնով, եւ հետ այտոր տո՛ւր զլուղապնին ճուլապով: Ապա թէ չուտէ կերակուր, տո՛ւր զգարեջուրն երկու հետ. եւ այլ ոմանք կան՝ ուտեն զճարպ տապաշիրի կուրսն. եւ իւր նշանն այս է:

Ղուռն տապաշիրի ճարպ:

Ա՛ն տապաշիր հինգ դրամ. տաճիկ կռեզ, եւ քիթը, եւ նշաստակ երեք երեք դրամ. փերփերանի հունդ, եւ կօղայի կուլած չորս չորս դրամ. մարուխի քամուքս եօթն դրամ. զայս զամեն աղա եւ մաղէ, եւ պզրկատունի լուղապով շաղէ, կուրսեր արա, եւ ՚ի շուքն չորացո, եւ ՚ի բան տար: Եւ կերակուր լուացած հացի փշրուկ տուր շարապով, եւ գարեջուր տուր, եւ դոմի ջուր, եւ փերփերանի, նման ջուր. եւ տուր զայլ կերակուրքն՝ զոր յիստակ տոհտու ջերմանն յիշեցաք:

Ապա թէ հիւանդն յայս ՚ի ջերմս, եւ յայն սուր ջերմերն՝ ՚ի գլուխն տաքութիւն լինի, ապա չէ պատեհ որ ՚ի վերայ գլխոյն կաթն տաս կթել, եւ ոչ ինչ ցեղ ձիթով օծանել, եւ ոչ ջրով ծեփել տաս, զի այն ծանտութիւնն նշան է շատ գիճութեան: Ապա պատեհ է որ բարունիճ առնուս եւ աթլել մելիք. եփէ ջրով, եւ զգլուխն ՚ի վերայ շոգւոյն կալ. եւ զոտսն եւ զձեռնս նոյն ջրովն ծեփել:

Ի նոյն պատճառդ Մահումատ Չաբարիայն ասէ, եթէ այս ջերմս ընծայի, երբ մաղձն ՚ի ներքս ՚ի յերակսն բորբոսի մօտ ՚ի սիրտն եւ ՚ի ստամոքացն ՚ի բերանն, կամ ՚ի ներքս ՚ի լերդին ՚ի յերակսն, ուր լերդին փոսն լինի ՚ի ներքի դեհէն, եւ կամ ՚ի թոքին ՚ի յերակսն. եւ երբ իւր զօրութիւնն յաղթէ մարմնոյն, զայս ջերմս ՚ի յերեւան բերէ, զոր անուանեն սուր եւ այրեցող: Եւ իւր նշանն այս է, որ մարմինն խիստ տաք լինի, եւ տաքութիւն խիստ սուր լինի, եւ լեզուն սեւ լինի, եւ հիւանդն մեջ ընդ մեջ ընդ վայր խօսի, ծարաւ եւ նեղհոգութիւն լինի, եւ շունչն շատ եւ շուտ լինի:

Իւր ստածումն այս է, որ զբնութիւնն կակուղ պահես դամոյնի եւ թմրինդի ջրով եւ սրքնճախնով. եւ հետ այնոր գարեջուր տո՛ւր. եւ երբ պահ մի անցանի, որ ՚ի ստամոքացն գնայ, թթու եւ քաղցր նման ջուր տուր, եւ դեպ ընդ իրիկացքն դոմի ջուր տուր, տապաշիրով եւ ճուլապով հովցուցած, կամ փերփերանի ջուր տուր սրքնճախնով: Ապա ա՛ն սանտալ սպիտակ, եւ վարդի ջրով տրորէ, եւ յինքն հին կտաւ քթան թաց, եւ ՚ի վերայ լերդին յար ՚ի բան տար: Եւ երբ ՚ի գոզն եփելոյ նշաննին յերեւան գան, պատեհ է որ առաւօտուն զքաֆուրի կուրսն տաս. եւ երբ արեգակն ցաթէ գարեջուր տուր. եւ ՚ի կէս օրն թթու եւ քաղցր նման ջուր, զերդ որ այլ յառաջդ յիշեցաք. օգտէ թէ Աստուած կամի:

Յուննայն ասէ, եւ թէ ծարաւն խիստ լինի, եւ գիտենաս՝ որ փոր կարսիքն ամենայն բարով լինի եւ ողջ, պատեհ է որ սառին ջուր տաս ՚ի տաքութեանն ՚ի ժամն, բայց ոչ սկիզբն հիւանդութեանն, այլ ՚ի յայն ժամն՝ որ գիտենաս որ հիւանդութիւնն ՚ի վերջք լինի եկել, որ այտոց եւ խցկումն չայրնէ ՚ի փոր կարսիքն: Եւ այլ պատեհ է որ հանապազ զփերփերանի հունդն սրքնճախնով տաս: Ապա թէ բնութիւնն կապ լինի, մանիշակի շարապ տուր, որ զբնութիւնն կակոզնէ. ապա թէ բնութիւնն լոյծ լինի, ա՛ն զտապաշիրին դուրսն, զայն որ փոթոթն է, եւ սերկեւիլի ըռուպով ՚ի բանի պահէ. եւ զհիւանդն ՚ի հով

տեղի եւ 'ի հով տուն կալ: Եւ երբ ջերմն արձակի, ազդիսի ջրով մուգաւարայ, կամ աղտորի ջրով եւ նշածիթով 'ի բանի պահէ: Ապա 'ի բաղանիս մտէ. եւ կերակուր՝ հաւձագ տուր նռան ջրով: Ապա թէ վախես թէ ջերմն այլուայր դարձ այրնէ, ա՛ռ եղրդական ջուր եւ սրքնճպին, եւ հաղ մին քանի տուր, զի օգտակար է կամօքն Աստուծոյ:

ԼԶ

Վասն ստածման եւ բժշկութեան այն սուր եւ այրեցող ջերմանն, զոր հոռոմն երկու եւ երեք կրկնակ տետռատէօ կոչէ, եւ տաճիկն դպլագմայ, զոր 'ի յար տետռատէօ անուանէ:

Այս ջերմն ընծայի երբ մաղձն մէն բորբոսի ցնեքսէ երակացն հաւասար ընդ ամենայն մարմինն: Այլ գիտացիր որ այս ջերմանս ստածումն զերդ այն տետռատէօ ջերմանն լինի, որ մաղձն ցդրուցէ երակացն բորբոսի, եւ իւր նոպայն օր ընդ մէջ լինի: Բայց պատեհ է որ զքո ջանքն եւ գլոյսն յեփելն այրնես եւ 'ի հովցնելն, եւ տաս սրքնճպին՝ որ յիւր ջուրն եփած լինի հնդիպէի հունդ, եւ խիարի հունդ ջանջինսած. յետ երկու պահու գարեջուր տուր. եւ զկերակուրն պարկեշտ տուր: Եւ հիւանդութեան սկիզբն լուծման դեղ մի՛ տաս, զատել մրգաջուր տուր եւ մանիշակի շարապ: Եւ այլ ամենայն դիմօք զքո ջանքն եւ գլոյսն ընդ այրեցող ջերմն եւ ընդ այն ջերմն՝ որ ընդ դրուց երակացն ընծայի, որ յիստակ տետռատէօ կոչի՝ 'ի մէջ արա, որ 'ի միջավայր լինի ընդ երկուսն. օգտակար է Աստուծով:

Էհաննայ ասէ 'ի նոյն պատճառդ, եթէ այս ջերմն առանց խարտէշ մաղձին չլինի: Եւ իւր պատճառն այն է՝ որ մաղձն 'ի ներքս 'ի յերակսն ընդ ամենայն մարմնոյն բորբոսի, ապա այս ջերմն յերեւան գայ, զոր տաճիկն դպլագմայ անուանէ, որ թարգմանի հանապազ եւ 'ի յար. եւ հոռոմն տիս տրիտէօն անուանէ, որ թարգմանի երկու երեքօրեայ. զի զօր ընդ մէջ ջերմն երեքօրեայ անուանեն: Չի այս ջերմն երկու վասն այնոր ասացին, որ մէկ օրն խիստ լինի նոպայն, եւ մէկայլ օրն թեթեւ. եւ այն երեքօրեայն՝ որ չունի կրկին՝ 'ի դուրս 'ի յերակացն բորբոսի մաղձն, եւ իւր նոպայն օր ընդ մէջ գայ: Ապա այս ջերմանս որ երեքօրեայ ասեն, մի օրն խիստ գայ իւր նոպայն եւ խիստ դողացնէ, զերդ սլաքով խոցատէ զանդամուսնս, եւ ծարաւն շատ լինի, եւ այն օրն խիստ դատէ զհիւանդն. եւ մէկայլ օրն թեթեւ եւ թոյլ լինի նոպայն: Եւ այս ջերմն առաւել երիտասարդաց հանդիպի, եւ այնոց՝ որ տաք կերակուր շատ ուտեն, եւ այնոց որ զինի շատ խմեն, եւ այնոց՝ որ 'ի մերձաւորութիւն խարք լինին. եւ վասն այդ պատճառանսցոյ մաղձն նոցա խառնուածոցն յաղթէ եւ բորբոսի:

Եւ իւր ստածումն այս է, որ սկիզբն հիւանդութեանն զիով եւ զգիճային իրուին 'ի բանի պահէ, եւ հետ այնոր զբնութիւն լուծանէ մրգաջրով եւ շիրիշտով եւ թառանկայնով. զարեջուր եւ դդմի ջուր եւ խիարի ջուր, թթու եւ քաղցր նռան ջուր, խառնեալ ընդ շաքարով սրքնճպին 'ի բանի պահէ. եւ ամենայն իրք՝ որ զմարմնոյն քառնուածքն հովցնեն եւ գիճացնեն, օգտէ նորա, զերդ զհազարն եւ թախթն եւ խիարն եւ կութայն եւ դդումն, եւ ամենայն ինչ որ նման են սոցա:

Ապա թէ գլուխքն հիւանդութեանն՝ որ է նիւթն, 'ի ստամոքսն լինի, վերաբերութիւն տուր այրնել, օգտէ: Ապա թէ գլուխքն հիւանդութեանն 'ի յաղիքն լինի, կակուղ հուկնայով զբնութիւնն լոյծ, զերդ որ 'ի յերկրորդ 'ի գիրքն յիշեցաք: Ապա թէ հիւանդութեան գլուխն 'ի ներքս 'ի յերակսն լինի, տուր զդեղերն՝ որ զգոզն յորդորեն, զերդ զեփած կարօսն, եւ հալիլէ եւ օշինդր, եւ այլ ամենայն ինչ՝ որ նման են սոցա: Եւ

երբ ջերմն արձակի, եւ կերակուրն 'ի ստամոքացն հալի, 'ի բաղանիս մտե, եւ յեղկ 'ի յաւազան մտե՝ օգտակար է թէ Աստուած կամի:

Մահամատի Չաքարիայն ասէ, եթէ ստածումն այս կրկնակ ջերմանս՝ որ երկու տետռատու կոչեն, այս է. առաւօտուն դամոյնի ջուր տուր, եւ երբ արեգակն ծագէ գարեջուր տուր, եւ կէս օրն խիարի ջուր կամ դոմի ջուր, եւ 'ի պառկելոյ ժամս պզրկատունի լուղապ տուր: Ապա թէ բնութիւնն կակուղ լինի, 'ի դամոյնի ջրին տեղին՝ ծեծած նռան ջուր տուր, եւ զմարմինն հովացնէ այն իրօքն, որ զմարմնոյն խառնուածքն հով եւ գէճ այրնեն: Եւ տգետ մարդկաց խօսից մի՝ լսեր. զի այս ջերմանս քան զհով ջուրն այլ աղէկ չլինի իրք. նոյնպէս եւ զհով մրգանքն 'ի բանի պահէ, բայց մի՛ շատ: Ապա թէ հիւանդութիւնն խիստ լինի, եւ հիւանդին զօրութիւնն ուժով լինի, յայն օրն՝ որ ջունի զմեծ նոպայն, երակ առ. օգտակար է կամօքն Աստուծոյ:

ԼԷ

Պատմութիւն նախագիտութեան վասն ջերմանն, զոր հոռումն իմիտետառատու ասէ, եւ տաճիկն շատրաւ ըղբ, որ թարգմանի կէս երեքօրեայ:

Այս ջերմն երկու նիւթէ ընծայի, եւ 'ի յերկու տեղաց լինի. մէկն մաղձն լինի՝ որ բորբոսի 'ի դուրս 'ի յերակացն՝ որ արնէ գտետառատու ջերմն. եւ մէկայլն պալղամս լինի՝ որ բորբոսի 'ի ներքս 'ի յերակսն, որ այրնէ 'ի յար եւ աննոպայ զափիմեռնոս ջերմն. եւ երբ ուրդի՝ որ այս երկու ջերմն 'ի յիրար խառնին, եւ մէկ ջերմն դառնան, եւ անուանի իմիտետառատու: Ապա երբ այս հանց հանդիպի՝ զերդ որ ասացաք, նա այն ջերմն՝ որ 'ի դուրս 'ի յերակացն լինի, նոպէ ունի, զի մաղձն է բորբոսած. եւ մէկայլ ցեղն ցնէրքսէ յերակսն լինի, զի պալղամս է բորբոսած, եւ իւր ջերմն 'ի յար լինի, նա վասն այդ պատճառանացոյ օր մի խիստ լինի ջերմն, եւ օր մի հանդարտ: Չի մէկ օրն երկու ջերմն լինի, մաղձին եւ պալղամին, եւ մէկայլ օրն պալղամին մէն լինի, եւ այն օրն կակուղ լինի ջերմն, եւ անկահ քան զմէկայլ օրն:

Այժմ պատեհ է քննել եւ իմանալ՝ թէ Է՞ր անուանեցին զայս ջերմն իմիտրիտու 'ի մաղձին գործն, եւ չանուանեցին 'ի կէս ափիմեռնոսին, որ է պալղամին գործն: Եւ մեք ցուցանեմք՝ որ այս ջերմն յօղական է 'ի տաքութենէ եւ 'ի չորութենէ, որ է մաղձն, եւ 'ի հովութենէ եւ 'ի գիճութենէ, որ է պալղամս: Տաքութիւն ներգործեալ է զօրաւոր, նոյնպէս եւ չորութիւն ներգործող է զօրաւոր. իսկ հովութիւն ներգործող է տկար, նոյնպէս եւ գիճութիւնն ներգործող է տկար. ապա պատեհ համարեցան երկու զօրաւորացն անուամբ կոչել, քան երկու տկարացն:

Եւ այլ միտք կայ այս բանիս. ափիմեռնոսն՝ որ է պալղամին ջերմն, 'ի յար եւ 'ի կից լինի, զի ցնէրքս է իւր բորբոսն, եւ վասն այտոր որ 'ի յար է եւ յերեւան է հանապազ, եւ չէ 'ի պակասել, զի յար է եւ կից: Իսկ տռիտուսն՝ օր ընդ մէջ ունի զնոպայն, զի 'ի դուրս է յերակացն բորբոսն, օր մին երեւնայ եւ օր մին չերեւնայ: Ապա անուանեցին զայս ջերմն 'ի յայն տեղին՝ որ չէ 'ի յերեւել, եւ պակաս է. զի այս անունս լնու զայն զօրն, եւ զայն տեղին, որ չէ 'ի յերեւեալ. զի երբ իրքն 'ի լման լինի եւ 'ի յերեւան, չէր կարիք նորա անուամբն անուանել:

Այլ պատեհ է գիտենալ, որ այս ջերմն երեք դեմս ունի. մէկն՝ որ յաղթէ մաղձն պալղամին, եւ իւր նշաննին 'ի յերեւան գան, զերդ փշանալն եւ սոսռալն, եւ յանկարծակի վերաբերութիւն մաղձի, եւ տաքութեանն շատութիւն նորա յաւելնայ եւ բարձրանայ առանց վնասի: Եւ երկրորդ դեմս այն է, որ յաղթէ պալղամս մաղձին. եւ իւր

Նշանն այս է, որ ցրտանալն շատ լինի. եւ ցրտանալոյն պատճառն պալղամին հովութիւնն լինի, զի չէ բորբոսել. զի մնացեալ լինի մասն 'ի պալղամեն՝ որ չէ բորբոսել. երբ վերանայ իւր տաքութիւնն, ահովէ հիւանդին. եւ այլ նշան այն է՝ որ ծարաւ եւ քիրտն չլինի: Եւ երրորդ դէմնն այն է, որ երկու նիւթն հաւասար լինին, եւ իւրեանց նշաննին ջաղթ մէկն մէկայլին, այլ ամէն մէկ զիւրն ցուցանէ, եւ այս է իրաւի իմիտոյնտուն:

Եւ այլ գիտացիր՝ որ այս նշանօքս, եւ այս օրինակովս, եւ այս դիմօքս լինին եւ այլ ցեղ ջերմերն, երբ խառնին ընդ իրար. ապա տե՛ս՝ թէ ո՞ր նիւթն յաղթ մէկն մէկայլին, եւ երեւեցուցանէ զիւր նշաննին, եւ զիւր պատահումնքն, եւ զիւր խասլիաթն, որ է առանձինն իւր յատկութիւն, եւ 'ի յայն նիւթին 'ի յանունն՝ ուր եւ ուրդի՝ յաղթող անուանէ, որպէս այլ 'ի յառաջդ յիշեցաք 'ի խառն նիւթերոյն, օգնութեամբն Աստուծոյ:

ԼԸ

Վասն ստածման եւ բժշկութեան իմիտոյնտուն ջերմանն:

Պատեհ է բժշկին՝ որ զայս ջերմանս զստածումն ըստ յաղթող նիւթն այրնէ, թէ մաղձն յաղթէ, եթէ պալղամն: Ապա թէ հաւասար լինին երկու նիւթն, որ չէ յաղթել մէկն մէկայլին, պատեհ է որ նոյնպէս եւ զստածումն խառնէ հաւասար ընդ երկոցունց դիմացն զդեղն, եւ զկերակուրն, եւ զըմպելին, եւ զայլ զամենայն ցեղ զստածումն հաւասար առնել:

Ապա թէ մաղձն յաղթէ, եւ կարիք լինի՝ որ զբնութիւնն կակղցնեն, կակղացո պատատկի ջրով, եւ թառանկալնով, կամ դամոյնաչրի ջրով, եւ գարեջրով տուր շաքարի սրքնճալնով. եւ 'ի յայն կուրսերոյն, եւ 'ի յայն դեղերոյն՝ որ խառն տոյնտուսին գրեցաք, զոր պատեհ տեսանես, 'ի բան տար. նոյնպէս եւ զկերակուրն եւ ըմպելին: Ապա թէ պալղամն յաղթէ մաղձին, եւ կարիք լինի՝ որ զբնութիւնն կակղցնես, տուր պատատկի ջուր սրքնճալնով, մազտաքեով, եւ վարդմարապայով. եւ յայն 'ի կուրսերոյն եւ 'ի դեղերոյն՝ որ խառն 'ի պալղամին ջերմն գրեցաք, 'ի բան տար: Կամ տուր զպալղամին ջերմանն զդեղերն խառն ընդ մաղձին ջերման դեղերոյն, ըստ կարեացն եւ ըստ որպիսութեանն՝ զոր տեսանես. օգտակար է եթէ Աստուած կամի:

Ապա թէ երկու նիւթն հաւասար լինին՝ մաղձն եւ պալղամն, եւ կարիք լինի՝ որ զբնութիւնն կակղացուցանես, տուր զպատատկի ջուրն սրքնճալնով եւ վարդմարապով. ապա ա՛ռ գլխտակ տոյնտուսին դեղերն, նոյնպէս եւ գլխտակ ափիմեռնոսին դեղերն խառնէ հաւասար, եւ 'ի բան տար: Նոյնպէս եւ ըստ դեղերոյն կարգին զկերակուրն տուր եւ ըմպելիքն, եւ զայլ զամենայն ցեղ զստածումն. օգտէ եթէ Աստուած կամի: Այդ նշանովդ եւ այդ օրինակաւդ պիտի՝ որ լինի ամենայն ցեղ խառն ջերմանն ստածումն, որ զդէմնն 'ի յաղթող եւ 'ի յաւելի նիւթն այրնէ, եւ տայ զդեղն եւ զկերակուրն ըստ նիւթին որպիսութեանն. օգտակար է թէ Աստուած կամի:

Յունայն ասէ, եթէ պատճառն այս ջերմանս այն լինի, որ մաղձն եւ պալղամն 'ի զուգ բորբոսին, որպէս այլ 'ի յառաջդ ասացաւ, եւ յաղթելով բնութեան, զայս ջերմն 'ի յերեւան բերեն: Եւ իւր նշանն այս է, որ թէ մաղձն յաղթող լինի, մաղձի վերաբերութիւնն այրնէ, եւ իւր ջերմն սուր լինի, եւ իւր զոզն դեղին. ապա թէ պալղամն յաղթող եւ զօրաւոր լինի, իւր նշաննին հակառակ լինին այդ նշաննոյս՝ զոր յիշեցաք:

Իւր ստածումն այն է, որ թէ մաղձն յաղթող եւ զօրաւոր լինի, տուր սրբնճպին տաք ջրով խառնեալ, եւ յետ այնոր գարեջուր եւ ճուլապ հովցուցած. եւ յետ այնոր այլուվայր գարեջուր եւ սրբնճպին խառնեալ 'ի հով ջուր՝ 'ի բանի պահէ, որ մաղձին զսրութիւնն մանդրէ: Ապա թէ բնութիւնն կապ լինի, տո՛ւր դամոյնի ջուր եւ թմրիստոյ, որ զբնութիւնն կակղացուցանէ. դէպ 'ի յիրիկունն տո՛ւր զփերփերանի հնտին կաթն սրբնճպինով: Եւ երբ հիւանդութիւնն 'ի վճար գայ եւ արծակի, տո՛ւր կերակուր մուգավարայ ազոխի ջրով, եւ կամ նռան ջրով, զոր նշածիթով զուգած լինի՝ 'ի բանի պահէ: Ապա թէ հիւանդն տկար լինի, տուր հաւու ձագ՝ եփած զիրպած, կամ նռան ջրով. ապա թէ հիւանդին զօրութիւնն ուժով լինի, պատեհ է որ զգարեջուրն մէն հերիք ածէ. օգտակար է թէ Աստուած կամի:

Սահակն ասէ, եթէ պալղամն յաղթող եւ զօրաւոր լինի քան զմաղձն, տո՛ւր յանօթուց վարդմարապայ. եւ հետ այնոր ա՛ռ մագտաքէ եւ ծխանելիք, եւ անուշ ջրով եփէ, եւ 'ի բանի պահէ. նոյնպէս եւ սրբնճպինն՝ որ հնդանօք լինի զուգած, օգտակար է: Ապա թէ հիւանդութիւնն ուժով լինի, զսապոնն հապն տուր, որ զբնութիւնն լուծանէ, եւ զհիւանդութեանն զգլուխքն 'ի մարմնոյն իջուցանէ: Ապա թէ հիւանդութիւնն յերկար քաշէ, տո՛ւր զղափթին զկուրսն սրբնճպինով, զի մեծ օգտակար է. եւ երբ հիւանդութիւնն 'ի վճար գայ եւ արծակի, կերակուր զիրպած տուր, կամ նռան մուգավարայ նշի ճիթով: Ապա թէ մաղձն եւ պալղամն հաւասար լինին, նոյնպէս եւ զստածումն հաւասար արա. զդեղ եւ զկերակուր եւ ըմպելի խառնէ զերկոցունց դիմացն, հաւասար 'ի բանի պահէ, օգտէ: Եւ յորժամ հիւանդութիւնն 'ի վճար գայ եւ արծակի, տո՛ւր կերակուր զիրպած, եւ հետ այնոր հաւձագ զիրպած. ապա յետ այնոր 'ի բաղանիս մտէ, օգտէ:

ԼԹ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն սավտային ջերմերոյն, որ է սեւ մաղձն:

Յառաջ զտետառտեսն յիշենք. եւ ինքն երկու ցեղ լինի: Այլ գիտացիր՝ որ սաւտայն կամ բորբոսած լինի, եւ կամ անբորբոս: Ապա թէ բորբոսած լինի, անհնար ընդ ամենայն մարմինն լինի, եւ կամ 'ի բաժին մի մարմնոյն: Ապա թէ ընդ ամենայն մարմինն լինի, անհնար է՝ կամ ցներքսէ երակացն լինի, եւ կամ 'ի դուրս յերակացն: Ապա թէ ցներքսէ երակացն բորբոսի, նա առնէ զտետառտեսն ջերմն, որ երկու օր հիտրաց ունի զնոպայն, եւ օր մի չունի. վասն անոր անուանեցին զայս ջերմն կրկնակ, եւ երկու տետառտես, որ 'ի ներքս 'ի յերակսն լինի բորբոսն: Ապա թէ 'ի դուրս յերակացն բորբոսի, նա առնէ զտետառտեսն ջերմն, որ երկու օր ընդ մէջ նոպայ ունի. զայս ջերմն հոռոմն տետառտես անուանէ, եւ տաճիկն ըբղ, որ թարգմանի չորեքօրեայ: Ապա թէ 'ի բաժին մի 'ի մարմնոյն բորբոսի, որ է 'ի յանդամ մին, նա այրնէ զայն ցաւն՝ որ անուանի սարաթան. հոռոմն կարկինոս ասէ, որ է խեցգետին:

Ապա թէ սաւտայն անբորբոս լինի, նա կամ ընդ ամենայն մարմինն արգիլած լինի, եւ կամ 'ի յանդամ մին 'ի մարմնոյն: Իսկ թէ յամենայն մարմինն լինի արգիլած՝ նա այրնէ սեւ արական, որ է դեղնանաւլն: Ապա թէ 'ի յանդամ մին լինի արգիլած, նա այրնէ զայն պինտ այտոցն, որ անուանի սիկառօս, որ է պնդութիւն:

Այլ գիտացիր որ այս երկու օր ընդ մէջ ջերմանս նշաննին առնուն 'ի յայն 'ի յերեք պատճառանացն, զոր այլ 'ի յառաջ ասացաք, որ մէկն բնութեամբ լինի, եւ երկրորդն առանց բնութեան, եւ երրորդն 'ի դուրս 'ի բնութենէ: Իսկ այն նշաննին՝ որ բնութեամբ լինի՝ այս են, որ հիւանդին խառնուածքն հով եւ չորային լինի, եւ սաւտայն իւր

խառնուածոցն յաղթեալ լինի, եւ տարօքն միջավայր լինի ընդ մանկութիւն եւ ալեւորութիւն, եւ ժամն աշնան աւուրքն լինի, եւ օդն հով եւ չորային լինի, նոյնպէս եւ երկիրն: Իսկ այն նշաննին եւ պատճառն՝ որ առանց բնութեան լինին, այս են՝ որ հիւանդին կերակուրն յառաջն սաւտայիկ լինի՝ գերդ գոսքն, եւ գկաղամբն, եւ զպախրէ միսն, եւ զքօշին միսն, եւ պատընճանն, եւ այլ զոր ինչ նման են այսոց: Իսկ այն նշաննին եւ պատճառն՝ որ 'ի դուրս են 'ի բնութենէն, այս են: Բայց կան նշաննի՝ որ 'ի յառաջ են քան զջերմն, եւ այլ կան՝ որ հետ ջերմանն լինին. եւ այն նշանն՝ որ յառաջ էր քան զհիւանդութիւնն՝ այն է, որ այլ եւ այլ ցեղ ջերմն լինի կալել. եւ երբ այն նիւթներն այրեցան, նա յայս 'ի ջերմն փոխեցաւ, կամ փայծաղնացան, եւ փայծաղն պինդ լինի: Իսկ այն նշաննին՝ որ հետ ջերմանն հանդիպեցան՝ այն է, որ 'ի նոպային սկիզբն դողալն, եւ ծանդրանալն, եւ խիստ ցրտանալն ընդ ամենայն մարմինն լինի. եւ իւր երակսն յոյլ եւ յուշ լինի, բայց շատ փոփոխական լինի. եւ 'ի նոպային յաւելնալն տաքութիւն լինի, բայց ոչ սուր եւ ոչ այրեցող, գերդ որ օր ընդ մէջ ջերմանն. եւ երակսն սակաւ մի սրանայ եւ շոյտ լինի քան որ 'ի նոպային սկիզբն էր, եւ քան զօր ընդ մէջ ջերմանն այլ փոքր եւ այլ յուշ լինի. եւ ծարաւն սակաւ լինի. եւ գոզն հում եւ հոտած լինի: Եւ 'ի նոպային իջանիլն՝ իւր ցրտանալն պակաս լինի քան զօր ընդ մէջ ջերմանն, եւ 'ի թողուլն նոպային՝ երակսն յուշ եւ յոյլ լինի եւ փոփոխական. եւ իւր գոզին գոյնն այլ եւ այլ ցեղ լինի եւ հում: Ապա թէ զայս նշաննիս տեսանես, եւ կամ զշատն իւրեանցմէ, գիտացիր որ այս երկու օր ընդ մէջ ջերմն խալըս է, որ է յիստակ բնական սաւտայն:

Երբ այս ջերմն յիստակ լինի, նա իւր նոպայն քսան եւ չորս պահ լինի. ապա թէ ընդ խարտեշ մաղձն խառնի՝ նա կարճ այնէ զնոպայն քան զքսան եւ չորս պահն. ապա թէ ընդ պալղամն խառնի, նա այլ աւելի այրնէ զնոպայն քան զքսան եւ չորս պահն. եւ ամռան աւուրքն այլ կարճ լինի իւր նոպայն: Եւ իւր գոզին գոյնն 'ի հիւանդութեան յառաջքն սպիտակ լինի եւ հում. եւ այտոր պատճառն սաւտային հիւանդութիւնն լինի. եւ 'ի հիւանդութեանն 'ի վերջքն՝ իւր գոզն սեւ լինի, զի եփեցաւ սեւ մաղձն, որ է սաւտայն, եւ իջանէ հետ գոզին: Եւ հանապազ հետ այդ ջերմանդ փայծաղնացաւորութիւն լինի. նա վասն այդ պատճառանացդ հիւանդին գոյնն վատթարի եւ թխանայ, եւ իւր կաշին սակաւ մին խոշորի եւ տապի, մանաւանդ երբ յերկար քաշէ:

Այլ այս ջերմն ընծայի՝ երբ երեք նիւթերն այրին եւ 'ի սաւտայ փոխին: Մէկն լինի՝ երբ արիւնն խանձի. եւ երկրորդն լինի՝ երբ պալղամն խորովի. եւ երրորդն լինի՝ երբ խարտեշ մաղձն այրի: Այլ բնական սաւտայն չընծայէ ջերմն, գերդ որ ասացին այլ ոմանք յիմաստասիրացն. զի իւր օգտակարութեան նշանքն շատ եւ մեծ է 'ի մարմինն: Այլ իւրեանց նշաննին եւ վկայքն այդ երեք ցեղ պատճառանացդ ուրիշ ուրիշ այս են, որ երբ արիւնն խանձել լինի եւ այրել, նա յառաջ հիւանդն արեան ջերմ է կալել, գերդ սինեհիսն եւ այլն, կամ հիւանդին մարմինն շատ արիւն ընծայէ, կամ ժամն գարնան աւուրքն լինի. եւ իւր գոզին գոյնն դեպ 'ի յարեան գոյնն հակէ. եւ երակսն 'ի լի լինի. եւ երբ զայդ նշաննիս տեսանես, գիտացիր որ արիւնն խանձել լինի եւ այրել:

Իսկ թէ ընդ յառաջքն օր ընդ մէջ ջերմ է կալել, որ է տոհտոես, եւ հիւանդին մարմինն մաղձային լինի, այրեցն եւ ծարաւն շատ լինի, եւ գոզին գոյնն կարմիր եւ պարկեշտ լինի, եւ երակսն շուտ լինի, եւ հիւանդն չէ մահուան, եւ սրտնեղ լինի, գիտացիր որ այն ջերմն 'ի խարտեշ մաղձին այրելոյն լինի: Ապա թէ ընդ յառաջն պալղամիկ ջերմ է կալել, որ է ափիմեռինոսն, եւ հիւանդն պալղամիկ լինի. եւ իւր քունն շատ լինի, եւ տարօքն ալեւոր լինի, եւ ժամն ձմեռնաւուրք լինի, եւ երկիրն հովային լինի, եւ հիւանդին ծարաւն սակաւ լինի, եւ գոզն սպիտակ եւ պտոր լինի, եւ երակսն յուշ եւ լայն լինի, ապա գիտացիր որ այս ջերմն 'ի պալղամիկ խորովելոյն լինի եւ 'ի յայրելոյն: Ապա երբ գիտենաս զպատճառն, եւ զխլտն՝ որ է նիւթն, յորոյ ընծայեցաւ ջերմն, դիւրաւ բժշկես:

Վասն ստածման եւ բժշկութեան տեսողանտեսու ջերմանն:

Տաճիկն ըրդ ասէ, որ թարգմանի չորեքօրեայ, որ է երկու օր ընդ մեջ ջերմն:

Այլ գիտացիր որ այս ջերմն հինգ դէմն ունի: Մէկն ընծայի՝ երբ այրի արոյնն, եւ 'ի սավտայ փոխի, եւ բորբոսի. եւ երկրորդն՝ երբ մաղձն այրի. եւ երրորդն՝ երբ պալղամն այրի. չորրորդն՝ երբ բնական սավտայն բորբոսի. հինկերորդն՝ երբ մէկ մին 'ի յայդ չորիցդ 'ի ներքս 'ի յերական բորբոսի, կրկնէ եւ երկու այրնէ զջերմն: Եւ իւր նշանն այս է, որ երկու օր հիտրաց նուպայ առնու, եւ օր մի չառնու:

Ապա թէ այս ջերմն 'ի յարեանն 'ի խանձելոյն լինի, եւ զիւր նշաննին յերեւան տեսանես, տո՛ւր գարեջուր սրքնճպինով. եւ երբ եփի հիւանդութիւնն, 'ի ձախոյ ձեռնն երակ առ 'ի բարսիլիկէն. եւ ապա յետ երակ առնելոյն՝ տո՛ւր զայս մտպուխս:

Մատպուխս հով վասն այրած արեան:

Ա՛ն շէկ չամիչ 'ի հատճէն հանած հնգետասան դրամ. յունսպ քսան հատ. կարօսի, եւ ըռզիանի տակի կեղեւ երեք դրամ. դեղին հալիլայ, եւ քապուլի հալիլայ 'ի կորզէն հանած եւ ձարձատ արած հինգ հինգ դրամ. զամէնս եփէ, եւ քամէ 'ի վերայ հնգետասան դրամ խիարշամպէի միջոց. ապա աճռէ եւ քամէ, եւ արկ 'ի ներքս շաքար երկուտասան դրամ, եւ տուր որ խմէ: Եւ այլ զայդ նուսխատ յաւելցո ըստ հիւանդին ուժոյն: Կերակուր՝ մաշ տուր թախթով, եւ վլիտօն. եւ տուր 'ի մրգանց քաղցր նուռն, եւ բարունակի մեծապտուղ խաղող, եւ այլ զոր ինչ նման են այտոց: Ապա թէ յերկար քաշէ այս ջերմն, 'ի նոպային օրն ընդ ցորեկոյ կալ այս չկերակրիլ. զի արիւնն երբ հաստանայ՝ կարիք ունի որ իւր տէրն ընդ ցորեկոյ կենայ այս անօթի, որ պարկեշտանայ արիւնն:

Ապա թէ այս ջերմն 'ի պալղամին խորովելոյն լինի եւ 'ի այրելոյն, եւ զիւր նշաննին յերեւան տեսանես, տո՛ւր վարդմարապայ՝ կարօսի եւ ըռազիանի ջրով, յամէն մէկէ երկու նուկի: Ապա թէ փորն կապ լինի, տուր պատատկի ջուր կէս լիտր. եւ ասփուրի հունդ աղացած հինգ դրամ. տապարզի շաքար տասն դրամ: Թէ այտով չկակղնայ փորն, դու կակուղ հուկնայ դիր այս նշանօքս:

Յուկնայ կակուղ՝ վասն պալղամի:

Ա՛ն տատաշ, եւ բաբունիճ, եւ հուլբայ, եւ թեփ 'ի կտաւի ծրարած, եւ չոր թուզ, եւ ճակընդղի ջուր, եւ հացի փորակ, եւ շաքար, եւ շիրիկ ձեթ. զայս զամէնս եփէ, եւ հուկնայ դիր զերդ իւր ռասմն է: Եւ կերակուր լաբլաբ, որ է պատատուկ, չամչով եփած, եւ քաղցր նշի ձիթով եփած. կամ սիսռան ջուր տուր լուացած ձիթով, կամ ճակընդղի բազուկ տուր:

Եւ այլ պատեհ է որ այս ջերմանս տէրն վերաբերութիւն այնէ 'ի հիւանդութեան սկիզբն սամթի ջրով եւ մեղրով եւ աղով. եւ 'ի նոպային օրն ընդ ցորեկոյ կալ բնիկ. ապա երբ անցանի եւթն նոպայն, զայս մտպուխս տուր:

Մատպուխս, որ օգտէ պալղամի:

Ա՛ն կարօսի հունդ, եւ անիսոն, եւ կրտմանայ եւ առուի դաղձն, եւ նանխաւայ հինգ հինգ դրամ. վայրի ծաթրին եօթն դրամ. շէկ չամիչ 'ի հատճէն հանած հնգետասան դրամ.

զամենս եփէ չորս լիտր ջրով, մինչեւ մնայ մի լիտր: Ապա պարզէ, եւ տուր յամեն օր չորս նուկի եղկ. բայց 'ի նոպային օրն մի՛ տաս. եւ վերաբերութիւն այրնելն օգտէ: Եւ երբ տաս, տուր այս դիմօքս. տուր աղի ձուկն ուտելոյ, եւ 'ի վերայ ջուր մի՛ տաս խմելոյ, եւ վերաբերութիւն տուր այրնել, օգտէ. եւ ապա հետ այտոր ընդ ցորեկոյ տո՛ւր կենալ, զի խիստ օգտէ այս ջերմանս:

Մաճուն, որ օգտէ պալղամի:

Այլ դեղ որ օգտէ այդ ջերմանտ՝ երբ եփած լինի նիւթն. ա՛ն նանխուայ տասն դրամ. անխոն, եւ քարաւէ եօթն եօթն դրամ. դարապղպեղ երեք դրամ. զանճապիլ չորս դրամ. անգուժատ հինգ դրամ. սումպուլ տասն դրամ. զայս զամենս աղա եւ մաղէ. եւ յիստկած մեղրով շաղէ. եւ տուր երկու դրամ եւ կէս ռազիանի եւ կարօսի ջրով. բայց 'ի նոպայի օրն մի՛ տաս:

Հապ, որ օգտէ սեվտայի եւ պալղամի:

Այլ հապ որ օգտէ այս ջերմանս. ա՛ն աֆթիմոն, եւ թրպուր տասն տասն դրամ. քարաւէ, եւ անխոն եւթն եւթն դրամ. վարդ ուր դրամ. կարօսի, եւ ըռզիանի հունդ երեք երեք դրամ. պասպայիճ եօթն դրամ. սպիտակ աղարիկոն ուր դրամ. հնտիկ աղ հինգ դրամ. եարիճփեկրայ հնգետասան դրամ. զամենս աղա եւ մաղէ, եւ աննխի ջրով շաղէ, հապեր արա մէկ պղպեղի հատի չաք, եւ 'ի շուքն չորացո, եւ տուր դրամ ու կէս յերեկոյնս եղկ ջրով. յամեն հինգ օր տուր զայդ հապտ. օգտէ:

Ղուռս, որ օգտէ պալղամի եւ սավտայի:

Եւ այլ օգտակար է այս ջերմանս այս կուրսս: Ա՛ն սատապի տերեւ, եւ համամայ չորս չորս դրամ. սալիխէ, եւ անայրեց ծծում երկու երկու դրամ եւ կէս. աֆթիմոն երեք դրամ. կղբու ձու մի դրամ. մարուխի քամուքս եօթն դրամ. սպիտակ խաշխաշ վեց դրամ. չոր զուկի, եւ անխոն երեք երեք դրամ. զամենս աղա եւ մաղէ, ջրով շաղէ եւ կուրս արա կէս կէս մթխալ, եւ 'ի շուքն չորացո, եւ տուր կուրս մի աղցած եւ մաղած՝ եղկ ջրով, յառաջ քան զնոպայն երեք պահով. օգտակար է:

Ապա թէ այս ջերմս 'ի խարտեշ մաղձին 'ի յայրելոյն լինի, եւ զիւր նշաննին տեսանես յերեւան, տո՛ւր գարեջուր եւ սրքնճպին, կամ թմրինտոյ ջուր եւ ըռազիանի ջուր սրքնճպինով: Եւ երբ նոպայն թողու, վերաբերութիւն տուր այրնել սրքնճպինով եւ եղկ ջրով. եւ կակղացո զքնութիւնն պատատկի ջրով, եւ խիարշամպեի միջով, եւ վարդմարապայով: Եւ տուր կերակուր՝ մաշ եւ վլիտօն եւ դդում, եւ այլ զոր ինչ նման են այսոց. եւ տե՛ս որ ընդ ցորեկոյ չպահես:

Մատպուխ սաֆրայի:

Ապա թէ կարիք լինի՝ որ զքնութիւնն լուծանես, տուր մտպուխ այս նշանօքս: Ա՛ն սեւ հալիլայ եւ դեղին հալիլայ՝ 'ի կորզէն հանած, եւ անծախոտ, որ է սատթարած, եւ թմրինտի, եւ խիարշանապայ, եւ դամոյնաչիր, եւ յունապ, եւ թառանկպին. զամենս մտպուխ մին եփէ, եւ տո՛ւր ըստ հիւանդին ուժոյն: Եւ երբ հիւանդութիւնն եփի, երակ առ, զի մաղձն 'ի յայրիլ լինի. եւ տուր կերակուր՝ զոր յառաջդ ասացաք. եւ տուր միրգ՝ քաղցր նուռն, եւ քարունակի մեծապտուղ խաղող, եւ յերկայն հասած խարբզակ, որ է սեխ, որ չլինի քաղցր. եւ ըմպելի տուր սրքնճպին եւ ճուլապ:

Ծեփելիք գլխացաւու:

Ապա թե գլխացաւութիւն դիպի, ծեփելիք արա բարունաճով եւ մանիշակով եւ գարեկորկտով: Ապա թե տաքութիւն դիպի, յաւելցո՛ր ՚ի յայդ ծեփելիքդ խաշխաշի կեղեւ, եւ հազրի հունդ. եւ հազար տուր ուտելոյ՝ հում եւ խաշած, եւ ՚ի քիթսն սղուտ արա՛ մանիշակի ձիթով: Այլ հաւու ձագ մի՛ տաս ուտելոյ, եւ ոչ տուռայճ յայդ ցեղ ջերմս՝ ցուր եօթն նոպայն անցանի, զատել՝ տեսանես որ զօրութիւն վատուծել լինի. զի պատրաստութիւն զնիւթն պարկեշտ այրնէ, եւ ՚ի դուրս վաթէ: Ապա հետ երեք շաբաթու տուր հաւու ձագ, եւ տուռայճ, եւ տահուճ. ապա հետ քառասուն աւուր տուր տարեկան ոչխարի միս:

Եւ այլ այս ջերմանս սկիզբն կուրս մի՛ տաս, եւ ոչ ՚ի յայլ ջերմերոյն, զի կուրսն հաստցնէ զխլտն, եւ արգիլէ գարձակելն: Եւ այլ ՚ի գարնան աւուրքն պատեցի է որ պատրաստ կենաս ՚ի սուր դեղերոյն, զի կրկնէ զջերմն եւ երկու այրնէ. եւ իւր նշանն այս է՝ որ երկու օր հիտրաց նոպայ լինի, եւ օր մի չլինի: Եւ այլ զոր ՚ի բան տանիս ՚ի յայդ դեղերոյս՝ ՚ի հիւանդութեանն սկիզբն մի՛ տաս, մինչեւ կատարի հիւանդութիւնն, եւ ՚ի լման եփած լինի:

Այլ գիտացիր որ կան դեղեր՝ որ խասիաթով օգտեն այս ջերմանս, զոր այլ առաջինքն փորձեցին. եւ չէ այդ արմացք. զի մեր վարդապետն Գաղիանոս յիշել է, թէ փեննայն՝ երբ ՚ի բազուկն կապեն, կամ ՚ի վիզն յուխտաւորին, օգտէ. եւ այլ մենք կանք եւ տեսանեմք զմկնատիզ քարն՝ որ է խանդումանդ, որ խասիաթով գերկաթն կուքաշէ. նոյնպէս եւ կան ՚ի դեղերն՝ որ կարող են խասիաթով հակառակ գալ խառնուածոցն հիւանդութեան: Եւ այլ կանք ու տեսանենք ՚ի վայրի կենդանեացն՝ որ առնուն խոտեր եւ դնեն իւրեանց տեղեստանն, նա թշնամին որ գայ այն երէին, նա այն խոտն հակառակ գայ խասիաթով, եւ չտայ մուտ այրնել՝ ուր ինքն լինի: Եւ այլ փորձեցին որ զառաջինքն, եւ զայս շատ են փորձել, զի խոզին ոսկրն՝ երբ կտաւով ՚ի վիզն կապեն՝ որ այս ջերմն ունի, օգտէ. այլ խասիաթն առանձինն եւ իւրական գործ գործէ: Այլ երբ զհիւանդին զհանդերձին դղացկանի հազցնես, եւ այլուվայր հանես, եւ հիւանդին հազցնես՝ առանց լուանալոյ, օգտէ ՚ի յայս ջերմանս: Այլ զսարդն՝ որ զճանճն որսայ՝ կտաւով ՚ի ձախոյ բազուկն կապես, օգտէ: Այլ թէ զսարդային ոստայնն ձիթով խառնես, եւ զհիւանդին զամեն մարմինն օծանես, օգտէ այն ջերմանն՝ որ ՚ի պալղամին խորովելոյն ընծայի. օգտէ: Եւ զայդ եւ Զիմասվարայ որդին ասաց, բայց սրայելացին ասաց՝ թէ զխոզին ոսկրն փորձեցի, եւ գտայ որ օգտեց ՚ի հիւանդութեանն ՚ի վերջքն:

Մասրճուայն ասէ ՚ի նոյն պատճառդ, եթէ ընծայի այս ջերմս՝ յորժամ երեք նիւթն այրին, եւ ՚ի սաւտայ դառնան. եւ երբ բորբոսին, ապա ընծայեն զայս ջերմս՝ որ տետռատէօս ասեն: Մեկն՝ արիւնն յորժամ այրի, իւր պարկեշտն ՚ի խարտեշ մաղճն դառնայ, եւ թանձրն ՚ի սաւտայն. եւ երկրորդն խարտեշ մաղճն է որ այրի. եւ երրորդն՝ պաղղամն խորովի: Եւ իւրեանց նշանն այս է, որ երեսաց գոյնն պղտոր լինի, եւ մարմնոյն կաշին չոր եւ խոշոր լինի, եւ բնութիւն կապ լինի, եւ քիրտքն սակաւ լինի, եւ գոզն խիստ նեխահոտ լինի, եւ մաճասին երակն փոփոխական եւ անհաւասար լինի:

Իսկ իւրեանց ստածումն այս է, որ թէ ջերմանն պատճառն արիւնն լինի, երակ առ ՚ի բասիլիկէն ըստ զօրութեանն, եւ ըստ հիւանդին ուժոյն արիւն հան. ապա գարեջուր եւ սրքնճային տուր: Ապա թէ բնութիւնն կապ լինի, ա՛ռ դամոյնի եւ յունսպի ջուր, եւ շաբարով տուր. եւ ըղըրդական ջուր՝ ընդ թթու եւ քաղցր նռան ջուր ՚ի բանի պահէ: Եւ երբ նոպային օրն լինի, սրքնճային տուր տաք ջրով: Ապա թէ հիւանդին զօրութիւնն տկար լինի, կերակուր հաւու ձագ տուր՝ զիրպաճ եփած: Ապա թէ ՚ի գոզն եփելոյ նշան երեւնայ, եփած աֆթիմոնն տուր, որ զմարմինն ՚ի հիւանդարար նիւթէն սրբէ. եւ հետ այնոր տասն դրամ ՚ի շաբարէ վարդմարապայ ՚ի բանի պահէ:

Սահակն ասէ. եթէ պատճառն այրեցած մաղձն լինի՝ որ 'ի սաւտայ փոխեցաւ, իւր ստածումն այն է՝ որ գարեջուր տաս, եւ սրբնճպին տաս, եւ այլ ամենայն իրք՝ որ զմարմինն հովցնէ, օգտէ: Եւ զբնութիւն լուծէ մրգանց ջրովն, եւ ամենեւին երակ մի՛ առնուր. բայց վերաբերութիւն արա՛ սրբնճպինով եւ տաք ջրով 'ի նոպային ժամն, որ ստամոքսն 'ի հիւանդարար նիւթէն սրբէ: Եւ 'ի յայն աւուրքն՝ որ չունի զնոպայն, ազոխի ջրով մուգաւարայ տուր, եւ յամենայն բանէ՝ որ զմարմինն դատէ՝ պատրաստ կենայ, օգտակար է:

Ապա թէ պատճառն այս ջերմանս այրեցած պալղամն լինի, որ 'ի սաւտայ փոխեցաւ, եւ բորբոսեցաւ, իւր ստածումն այն է, որ 'ի յանօթուց մեղրով հին վարդմարապայ ուտէ, եւ բաղիանի ջուր սրբնճպինով 'ի բանի պահէ, եւ զբնութիւնն կակղցնէ յունապի ջրով եւ քապուլի հալիլայով. եւ յամեն 'ի պալղամի կերակրոց պատրաստ կենայ: Եւ երբ ջերմն 'ի վճարն գայ եւ 'ի յարձակելն, սակաւ սակաւ գինի տուր. եւ կերակուր՝ հաւ զիրպած եփած 'ի բանի պահէ: Ապա թէ այս ջերմանս ստամոքս վատուժ լինի, զծորին կուրսն սրբնճպինով 'ի բանի պահէ, օգտակար է եթէ Աստուած կամի:

Մասրճուայն ասէ 'ի նոյն պատճառդ եւ 'ի նոյն ջերմնդ՝ զոր տետռատեօս կոչեն, եթէ բնական սաւտայն չբորբոսի: Իսկ Բագարատ եւ Գաղենոս ասեն, եթէ բորբոսի անճարակ. զի ամենայն իրք՝ որ գիճութիւն ունի 'ի բնութիւնն, կամ 'ի յեութիւն, բորբոս ընդունի. եւ սաւտայն՝ թէպէտ եւ բնութեամբ չոր է, բայց եութեամբ կակուղ է, եւ հոսի 'ի ձեռն գիճութեան, անճարակ ընդունի զբորբոսն: Եւ իւր նշանն այս է՝ որ 'ի նոպային ժամն՝ անդամոցն խաղալն խիստ լինի, եւ 'ի ձեռն տուժելոյն՝ թուի թէ կումանտրեն զոսկերքն, եւ զատամունսն ընդ իրար կրճտէ, եւ նոպայն յերկար լինի:

Ապա պարտ է բժշկին՝ որ 'ի յայս ջերմս 'ի հիւանդութիւն աղէկ իմանայ զպատճառն եւ տեսանէ, թէ 'ի յայտ 'ի չորիցդ որն է պատճառն՝ որ զջերմն արար. արեա՛նն սաւտայն լինի պատճառն, եթէ պալղամին սաւտայն, եթէ խարտեշ մաղձին սաւտայն, եթէ ինքն՝ որ է բնական սաւտայն: Ապա թէ պատճառն 'ի յարեանն 'ի սաւտային բորբոսելոյն լինի, իւր ստածումն այս է, որ սկիզբն երակ առնու՝ 'ի բասիլիկէն, ըստ կարեացն եւ ըստ հիւանդին ուժոյն արին հանէ. ապա թէ հիւանդն վատուժ լինի, չէ պատեհ երակ առնուլ: Ապա թէ երակ կամիս առնուլ, զկնի նոպային 'ի մեկայլն օրն առ երակ: Ապա թէ բնութիւն կապ լինի, զկակուղ հուկնայն 'ի բանի պահէ. զի հուկնային գործն 'ի յայս հիւանդութեանս լաւ է եւ օգտակար քան զդեղ առնուլն: Եւ 'ի յայն օրն՝ որ ջերմանն նոպայն լինի, կերակուր չուտէ, եւ հով ջուր խմէ. եւ երբ կերակուր տաս, հաւճագ տուր եւ տուռայճ, օգտէ:

Ապա թէ պատճառն խարտեշ մաղձին սաւտայն լինի, որ բորբոսեցաւ, իւր ստածումն այն է՝ որ 'ի սկիզբն հիւանդութեան զբնութիւն կակղցնես հալիլայով եւ մանիշակի շարապով: Ապա թէ սկիզբն այս ջերմանս 'ի յամռան աւուրքն լինի, գարեջուր տուր սրբնճպինով: Ապա թէ առնուս զժռատն՝ որ է ազոխն, եւ ծեծես, պասպայիճ խառնեալ տաս, շատ օգտէ. եւ 'ի խաւարտացն հազար եւ ըղըրդական տուր:

Ապա թէ այս ջերմանս պատճառն 'ի պալղամիկ սաւտայէն լինի՝ որ բորբոսեցաւ, իւր ստածումն այս է՝ որ սկիզբն հիւանդութեան զբնութիւն կակղցնես այս դեղովս: Ա՛ռ թրպուր մաղած, եւ մագտաքէ, եւ մեղրով վարդմարապայ, տաք ջրով տորրէ, եւ տուր, օգտէ: Ապա թէ զօրութիւն հիւանդին տկար լինի, կերակուր հաւճագ տուր, եւ տուռայճ, զոր պարկեշտ համեմնով զուգած լինի. այլ օշինդրին կուրսն այս ջերմանս շատ օգտէ:

Ապա թե այս ջերմանս պատճառն բնական սաւտային բորբոսելն լինի, իւր ստածումն այս է՝ որ իւր սկիզբն թեթեւ մտպուխ տաս, յոր եփած լինի պասպայիճ, եւ աֆթիմոն, որ մարմինն 'ի հիւանդարար նիւթէն սրբի, եւ 'ի թթու կերակրոց պատրաստ կենայ: Եւ բնական սաւտային ստածումն ոճով 'ի քառասներորդ երկրորդ գլուխն գտանես, ամենովտ օգտէ մեծ թիրեաքն, եւ միթռիտոսն, մանաւանդ 'ի ձմեռնաւուրթն, օգտէ թե Աստուած կամի:

ԳԼՈՒԵ ԽԱ

Պատմութիւն նախագիտութեան վասն բնական սաւտային ջերմանն, եւ իւր ստածմանն:

Բնական սաւտային ջերմանն նշաննին այս են, որ իւր առաջին պատճառն նշաննին այս ջերմանս. եւ են նոքա գերոյ գիսառնուածքն, եւ տարիքն, կերակուրն, եւ ըմպելիքն, ժամն, եւ սովորութիւն, եւ փայծղանագաւութիւն: Եւ իւր նոպայն քսան եւ չորս պահ լինի. իսկ թե այլ կարճ լինի քան զքսան եւ չորս պահն, նա չէ բնական սաւտայն մէն, այլ խառն ունի այրած մաղձէն, կամ 'ի յայրած 'ի յարենէն. ապա թե այլ աւելի լինի նոպայն քան զքսան եւ չորս պահն՝ նոյնպէսն չէ բնական սաւտայն մէն, այլ խառն ունի յայրած պալղամէն: Ապա երբ լինի՝ որ 'ի նոպային սկիզբն ցրտանայ եւ սոսռայ, եւ 'ի հետն ցաւ լինի, զերոյ գյօղուածացն տուժիլն, եւ ոսկերացն կտրտիլն. բայց ծարաւն սակաւ լինի քան զայն՝ որ այրած մաղձէ լինի, կամ յայրած պալղամէ:

Վասն ստածման եւ բժշկութեան բնական սաւտային ջերմանն:

Ի Գաղիանոսի ասացելոցն պատեհ է 'ի յառաջի ստածումն զմարմինն տեսանել, թե արիւնն յաւելցել լինի, պարտ է երակ առնուլ. ապա թե փայծաղն հաստ լինի, վստահացիր եւ արիւն հան. ապա թե արիւնն սեւ լինի, այլ յօժարութեամբ հան զարիւնն. ապա թե կարմիր լինի եւ նօսր, առ ժամն կապէ զերակն, եւ մի՛ թողուր որ արիւն հանէ. եւ զերակն զոր կտրես՝ զկաթուղիկէն առ, կամ 'ի բասիլիկէն: Եւ կերակուր զայն տուր՝ որ քամի չընծայէ, եւ ոչ այտոց 'ի ստամոքսն. մանաւանդ զայն տուր, որ զքամին արձակէ, դիւրահալ լինի եւ մարսական, եւ բնութեանն կակղական լինի. այլ քանի կարես զբնութիւն կակուղ պահէ: Ապա թե չկակղանայ, դու կակուղ հուկնայ դիր 'ի յառաջ. եւ հետ այնոր այլ ուժով հուկնայ դիր, եւ պատրաստեցո 'ի խոզի մսէ, եւ յամենայն իրաց՝ որ թանձր դորկուտ են, եւ յուշահալ, եւ յամենայն իրաց՝ որ հով են եւ զիճային. եւ տո՛ւր գիւնի նօսր եւ սպիտակ, զոր չափաւոր տաքութիւն ունի. եւ տո՛ւր թռչնոյ միս, զերոյ տուռայճին, եւ տահուճին, եւ սալամու, եւ հաւձագ. եւ 'ի ձկանցն տուր զոր միսն քնքուշ լինի, եւ զայն՝ որ թանձր միս ունի եւ դորկուտ, մի՛ տաս. այլ զաղի ձուկն եւ մանանեխ տալ մարթի, բայց ժամ ժամ. այլ թե յերեք պղպեղեան մաճունէն, եւ 'ի չամանի մաճունէն տաս՝ պատեհ է:

Այլ զոտիցն աճըռելն, եւ զտատան այրնելն, եւ 'ի բաղնիս մտելն մի՛ արգիլես, այլ թո՛ղ լինի ըստ իւրոյ սովորութեան: Բայց 'ի բաղանիս մտելն եւ աճըռելն օգտէ՝ քան 'ի վրայն ջուր ածելն: Եւ յայն երկու օրն՝ որ հանկիստ լինի՝ 'ի ձի հեծնելն, եւ զտատան այրնելն մի՛ արգիլես: Եւ զայս զամէս՝ զոր ասացաք, պատեհ է որ հիւանդութեան սկիզբնէն մինչեւ 'ի հիւանդութեան 'ի կատարիլն լինի: Ապա երբ գիտենաս որ հիւանդութիւնն կատարեցաւ, պատեհ է որ զիւր թպտիրն այլ պարկեշտ այրնես, նոյնպէս եւ զիւր զկերակուրն՝ քան զայն՝ որ երբ էր սկիզբն, եւ քան զայն՝ որ այլ յետոյ այրնես:

Լերդին եւ փայծղան պէտ արա ծեփելով, եւ ջեռոց այրնելով, որ կակղցնեն զպնդութիւնն, զձկտիլն. եւ 'ի քան տար զդեղերն՝ որ զգոզն յորդորեն: Եւ երբ տեսանես զնշաննին, որ հիւանդութիւնն եփեցաւ, դեմն 'ի լուծման դեղերն արա՛, այն դեղերովն՝ որ

զսել մաղձն լուծանեն, եւ զայդ շատ հետեր արա. բայց 'ի յայն ժամն՝ որ հիւանդութիւնն եփած լինի:

Վերաբերութեան:

Եւ այլ տէ՛ս աղէկ եթէ չկայ պատճառ՝ որ արգիլէ զքեզ, ա՛ն սել վրացի խարբախի կոճ, եւ 'ի բողկն դիր՝ զերդ իւր ռասմն Է. ապա զբողկն տուր որ ուտէ, եւ վերաբերութիւն այրնէ: Ապա այն հիւանդն՝ որ վերաբերութիւն չկարէ այրնել, տուր լուծման դեղ, տուր զոր ուժովն լինի. եւ այլ հետ այտոր զթիրեաքն տուր՝ զի շատ օգտէ: Եւ այլ քան զամենայն դեղեր՝ որ գրեալ են, եւ զոր մենք փորձեր ենք, եւ սովոր ենք տալոյ, այն դեղն Է՝ որ անկժատ ունի, եւ ինք յակրաբադինն կայ գրած:

Իսկ այն մարդիկն՝ որ հիւանդութեան սկիզբն զայդ դեղերդ 'ի բան տանին, կամ յառաջ քան զայն՝ որ հիւանդութիւնն կատարի, զհիւանդութիւնն կրկնեն եւ երկու այրնեն, եւ շատացնեն զջերմն. եւ իւր նշանն այն Է՝ որ երկու օր նոպայն հիտրաց գան, եւ մէկայլ օրն չգան: Եւ ես տեսայ մարդ մին 'ի բժշկաց, որ ետ իւր հիւանդին թիրեաք յառաջ քան զայն՝ որ հիւանդութիւնն կատարէր. եւ ուներ մարդն այն երկու ջերմն՝ զոր ասացի, նա յաւելցան ջերմերն, եւ յիրար կցեցան, եւ եղան մի՝ ջերմ մի յար, եւ սպանին զհիւանդն:

Բայց մեծ իմաստասերն Սինայի որդին ասէ, եթէ այս ջերմն՝ որ անապակ 'ի բնական սաւտայէն լինի, որ Է արեան մրուրն, պատեհ Է որ սկիզբն կակոզնես զբնութիւնն պատատկի ջրով, եւ փենիտ շաքարով. եւ 'ի բան տար վարդմարապայն շաքարով եւ մեղրով սնուցած, զի օգտակար Է շատ:

Մատպուխ սելտայի:

Ա՛ն քապուլի հալիլայ, եւ սել հալիլայ 'ի կորզէն հանած եւ ձարձատ արարած տանն տանն դրամ. պալիլաճ, եւ ամլաճ, սենեմաքի, եւ մարուխի տակ հինգ հինգ դրամ. դամոյնաչիր քսան հատ. շէկ չամիչ 'ի հատճէն հանած քսան դրամ. դաֆէթ, հոռոմ օշինդր, եւ եզնալեզու, եւ պատրանաօյէի տերեւ, եւ պասպայիճ չորս չորս դրամ. աստախօտոս երեք դրամ. զամէնս եփէ չորս լիտր ջրով, մինչեւ մնայ կէս լիտր. ապա ա՛ն աֆտիմոն եօթն դրամ, եւ 'ի ներս 'ի մտպուխն ընկէ, խառնէ, եւ 'ի կրակէն 'ի վայր կալ, եւ պահ մին համբեր տուր. ապա աճռէ զամէնն, եւ պարզէ. եւ ա՛ն 'ի յայդ ջրէտ հարիւր դրամ, եւ դի՛ր 'ի վերայ մթխալ մի աղցած եւ մաղած սապո սուկուտորի, եւ կէս մթխալ նաւթի աղ, եւ երկու տէնկ սել վրացի կոճ. եւ հետ նոպային 'ի մէկայլ օրն տուր որ խմեն եղկ, զերդ այլ լուծման դեղի ռասմ Է:

Եւ երբ զամէնս արարեալ լինի, տո՛ւր դափտի կուրս եւ մթխալ մի ընդ երկու նուկի սրբնճային ջրախառն. եւ երբ հիւանդութիւնն եփած լինի, պատեհ Է զայս դեղերս 'ի բան տանել:

Սֆուֆ սելտայի:

Ա՛ն սել հալիլայ, եւ քապուլի հալիլայ 'ի կորզէն հանած եօթն եօթն դրամ. պասպայիճ, եւ աֆթիմոն երեք երեք դրամ. զամէնս աղա՛ եւ մաղէ, եւ ա՛ն 'ի դեղէտ երեք դրամ, եւ փենիտ շաքար երեք դրամ, յիրար խառնէ, եւ տուր որ ամնու. եւ 'ի վերայ տաք ջուր խմէ. 'ի նոպային օրն մի՛ տար, այլ 'ի մէկայլ օրն տուր. օգտէ եթէ Աստուած կամի: Ապա թէ յերկար քաշէ այս ջերմն, եւ ձմեռն 'ի վերայ հասանի, եւ եփելոյ նշանն երեւնայ, ապա պատեհ Է 'ի բան տանիս մէկ մի 'ի տաք մաճուննոյն, զերդ անզժատի մաճունն, կամ անզժատի հապն, յամէն երեք օր տուր կէս դրամ. օգտէ թէ Աստուած կամի:

Էհաննայ ասէ՛ ՚ի նոյն պատճառդ, եթէ այս ջերմս ընծայի՝ ՚ի բնական սաւտայէն՝ որ ՚ի դուրս յերակացն բորբոսի: Եւ իւր նշանն այս Է՝ որ երկու օր ընդ մէջ գայ նոպայն. եւ իւր սկիզբն խիստ դող լինի, եւ յերկար քաշէ. եւ հետ այնոր գտաբութիւնն ՚ի դուրս ցուցանէ. եւ իւր գոզն նօսր եւ սպիտակ լինի: Եւ յիւր ստածումն պարտ է որ զհիւանդն չպատրաստեցնես խիստ, որ զօրութիւնն չտկարանայ եւ անճարակէ, որ յերկար հիւանդութեանն զօրութիւն պիտի. եւ զօրութիւն ՚ի ձեռն կերակրոց լինի, որ չփչի ուժն:

Իւր ստածումն այս Է՝ որ ՚ի նոպային օրն վերաբերութիւն այրնէ, եւ կերակուր չուտէ եւ պալի երկու օրն կերակրէ եւ պարարէ զմարմինն: Ապա թէ հիւանդին զօրութիւնն տկար լինի, գառին միս եւ հաւ տուր՝ սխառամ եփած:

Սեվտայի դեղեր:

Ապա թէ հիւանդն ծեր լինի եւ սաւտայիկ բնութեամբ, կամ գէճ բնութիւն, զանգժատի մաճունն տուր, որ ձեռն մի քանի սաւտայ եւ պալղամ լուծանի: Եւ հետ այնոր սնուցած վարդ մեղրով, եւ մազտաքէ, եւ ծխանելիք, եւ անիսոն ՚ի բանի պահէ: Եւ ըմպելի մեղրաջուր տուր. եւ զդեղրանքն՝ որ զսաւտայն լուծանէ՝ ՚ի բանի պահէ, զերդ աֆթիմոնն, եւ սեւ վրացի կոճն, եւ պասպայիճն, եւ սեւ հալիլէ, եւ աստախօտոս, եւ աղարիկոն, եւ սինամաքի, եւ այլ զոր ինչ նման են սոցա ՚ի բան տար, օգտէ: Ի տաք եւ ՚ի գիճային կերակուր յարեցո, եւ ՚ի սաւտայի կերակրոց պատրաստ կալ, եւ ՚ի բաղնիս պակաս մոռ. եւ երբ հիւանդութիւնն ՚ի վճար հասնի, զթպտիրն պարկեշտ արա. օգտակար է, եթէ Աստուած կամի:

Մասուսայի որդին ասէ, եթէ այս ջերմս յայրեցած մաղձէ լինի, նոպային շրջանն պակաս լինի, եւ հիւանդն ծարաւ անկանի. ցորեկոյ կենալն եւ քաղցենալն գէն այրնէ: Եւ իւր ստածումն այն է, որ հետ եւթն աւուրն ըռեւանդին կուրսն տուր, եւ զանգժատին մաճունն, եւ զօշնդրին կուրսն, օգտէ: Սրբնճային տուր՝ որ լերդն եւ փայծաղն զօրաւոր մնայ. եւ ՚ի յամենայն շաբաթ աֆթիմոնին զհապն ՚ի բանի պահէ, որ զհիւանդութեան գլուխքն ՚ի մարմնոյն սրբէ: Եզնալեզուի ջուր, եւ ինձորի շարապ տուր, եւ ամենեւին կաթն, եւ ոսքն, եւ պախրեմիս, եւ պատընջան, եւ յամենայն իրաց՝ որ սաւտայ ընծայէն՝ պատրաստ կենայ. ապա թէ այս ջերմս զօրաւոր լինի, այլուայր աֆթիմոնին մտպուլին տուր. օգտակար է թէ Աստուած կամի:

ԽԱ

ԽԲ

Պատմութիւն եւ նախագիտութիւն վասն հիւնգօրեայ եւ վեցօրեայ ջերմերոյն, որ բնական սաւտային բորբոսելուն լինի: Ստածումն եւ բժշկութիւն հիւնգօրեայ ջերմանն:

Վասն այն երկու ջերմերոյն՝ զոր հիւնգօրեայ եւ վեցօրեայ անուանեն, մէկն ունի զնոպայն յամեն հինգ օր, եւ մէկայն զնոպայն յամեն ՚ի վեց օր. վասն այդ պատճառանացդ անուանեցին այդ անուամբդ: Եւ իւրեանց պատճառն եւ ընծայիլն հաստ եւ պինդ սաւտայէ լինի, զի որչափ նիւթնին խառնուածքն հաստ լինի եւ պինդ, մանաւանդ երբ չաքսն սակաւ լինի ՚ի մարմինն, նա իւր նոպայն այլ յուշ գայ. վասն այնոր եղաւ՝ որ իրենց նոպայն այլ յուշ գայ, զի այլ հաստ է իւրեանց նիւթն, քան զչորեքօրեայ ջերմանն:

Վասն ստածման եւ բժշկութեան հինգօրեայ եւ վեցօրեայ ջերմանն:

Պատեհ է ստածել զայս ջերմերս բնական եւ յիստակ սաւտային ջերմանն բժշկութեամբն, զոր 'ի յառաջդ յիշեցաք ամենայն իրօք. եւ սակաւ մին այլ ուժով այրնել զդեղերն, զի չորեքօրեայն՝ որ է տետռատեոսն, այլ շուտ արձակի. իսկ այս ջերմն այլ յուշ, զի իւրեանց նիւթն հաստ լինին եւ այլ պինդ: Ապա յառաջ պարկեշտացո զնիւթն, եւ յիստակէ զմարմինն ըստ ջերմանն տաքութիւնեն եւ ըստ հովութիւնեն, եւ զհիվանդին զօրութիւն եւ զկերակուրն պարկեշտ արա, եւ 'ի խառն կերակրոյ պատրաստեցո. եւ վստահացի՛ր աւելի 'ի սատակ սրբնճպինն, զոր տակերով զուգեն. եւ տո՛ւր վարդմարապայ, եւ մազտաքէ, եւ ըռազիանի ջուր, եւ դաֆեթի դփտի կուրս, եւ զոր ինչ նման են սոցա. եւ վերաբերութիւն տուր այրնել սրբնճպինով, եւ բողկով, եւ սամթի ջրով, եւ աղով, եւ զոր ինչ նման են սոցա:

Ահրիժենիոսն ասէ, եթէ երբ այս ջերմն խիստ դողացնէ, եւ 'ի հետն սակաւ մի տաքութիւն լինի, եւ 'ի վճարն 'ի նոպային 'ի մարմինն տաքութիւն երեւնայ, տուր զդեղերն՝ որ զգոզն յորդորեն, զերդ դափտին կուրսն, եւ զպզուրի սրբնճպինն, եւ զոր ինչ նման են սոցա, որ հիւանդութեան նիւթն ընդ գոզն իջանէ. եւ զկերակուրն պակաս տուր. եւ սակաւ մին քրտընցնելն օգտէ. եւ պատրաստեցո 'ի յամենայն իրաց՝ որ պալղամն այրնեն եւ սաւտայ, որ ջերմն յերկար չքաշէ. եւ կերակուր հաւու ձագ տուր՝ պարկեշտ համեմտով: Ապա թէ հիւանդին ուժն տկար լինի, գառին միս տուր կամ ուլու միս խորոված եւ տապկած, կամ մուտանջանայ, օգտէ:

Մահմատի Չաքարիայն ասէ, եթէ պատճառն այս ջերմերոյս 'ի սաւտային 'ի հաստ խառնուածոցն լինի, որ 'ի մարմինն հաւաքի. եւ նիւթն այս ջերմերոյս քան զչորեքօրեայ ջերմանն այլ հաստ լինի. վասն այդ պատճառանացո գայ իւր նոպայն այլ յուշ քան զչորեքօրեայ ջերմանն: Իսկ զոր հինգօրեայ կոչեն իւր նշանն այս է՝ որ չորս օր թողու եւ 'ի հինգերորդ օրն գայ իւր նոպայն: Եւ մեկայլն՝ որ վեցօրեայ կոչեն, իւր նշանն այն է՝ որ հինգ օր թողու, եւ 'ի վեցերորդ օրն գայ նոպայն:

Իսկ ստածումն այս երկու ջերմերոյս զերդ զտետռատեոս ջերմանն լինի, որ է չորեքօրեան. եւ այլ զօրաւոր պիտի ստածումն. զի տետռատեոս ջերմն այլ շուտ արձակի քան զայս ջերմերս, զի սոքա այլ յերկար քաշեն վասն նիւթին հաստութեանն, որ զլուխք են այս հիւանդութեանս: Իսկ կարգն եւ չաքսն այս ջերմերոյս եւ վճարն չէ յերեւան. եւ վասն այտոր պարտ է՝ որ 'ի դեղերայքն մէն չվստահնան մարդիկ, այլ ուզեն իրուիք՝ որ խասիաթով օգտեն, եւ 'ի բան տանին. օգտակար է եթէ Աստուած կամի: Ամենովտ այս ջերմերոյս ստածումն այն է՝ որ յառաջ զգլուխքն զհիւանդութեան 'ի մարմնոյն սրբէ՝ ըստ տաքութեանն, եւ ըստ հովութիւնեն, եւ ըստ հիւանդին զօրութեանն. եւ զիւր ջանքն աւելի 'ի սատակ սրբնճպինն այնէ, կամ 'ի հնդանօք սրբնճպինն, մեղրով վարդմարապայ, եւ մազտաքէ, եւ բադիանի ջուր, եւ դափթի կուրսն, եւ զոր ինչ նման են սոցա 'ի բանի պահէ. օգտակար է թէ Աստուած կամի:

Ահրիժենիոսն ասէ, եթէ այս ջերմն խիստ դողացնէ, եւ 'ի հետ իւր տաքութեանն նշան չլինի, եւ 'ի վճար ջերմանն տաքութիւն երեւնայ 'ի մարմինն: Իւր ստածումն այն դեղերն են՝ որ զգոզն յորդորեն, զերդ դափտին կուրսն, որ է դաֆեթին դուրսն, եւ սրբնճպինն հնդանօք, եւ այլ զոր ինչ նման են սոցա. եւ կերակուր պակաս կերակրին. եւ սակաւ մի քրտնին. եւ յամենայն իրաց՝ որ սաւտայ եւ պալղամ ընծայեն՝ պատրաստ կենայ, որ զայս ցաւս յերկար չիքաշէ. եւ գոզին յորդորիլն իջուցանեն զհիւանդարար նիւթն, եւ

Կերակուր հաւձագ տուր՝ տաք եւ պարկեշտ համեմտով եփած: Ապա թէ հիւանդին զօրութիւն տկար լինի, գառան միս տուր, կամ ուլոյ խորովեալ, եւ կամ մուրանճանէ. օգտէ թէ Աստուած կամի:

ԽԴ

Պատմութիւն նախագիտութեան վասն մետասանօրեայ ջերմանն. եւ վասն մետասանօրեայ ջերմանն ստածումն եւ բժշկութիւն:

Իսկ այս ջերմն յամենայն մետասան օր ապա բերէ զիւր նոպայն. եւ իւր պատճառն սաւտային նիւթն հաստութիւն լինի, որ քան զչաքսն աւելի հաստ լինի եւ պինդ. զի քանի նիւթն հաստ լինի՝ նա իւր նոպայն յուշ գայ: Իսկ քան զամենայն ջերմերոյն այս ջերմանս նիւթն այլ հաստ լինի եւ այլ պինդ. վասն այնոր յերկար քաշէ, եւ իւր նոպայն այլ յուշ գայ: Իսկ երբ ջերմն ուժով լինի, նա իւր նիւթն շատ լինի՝ ՚ի մարմինն. եւ երբ ջերմն վատուժ լինի, նա իւր նիւթն սակաւ լինի՝ ՚ի մարմինն:

Այլ բժշկապետն Ապուճարէնն ասէ, եթէ ամենայն բժշկական վարդապետացն ուրդեցաւ, որ վասն ջերմերոյն կարգին չաքսն չերեւացաւ. եւ իւր պատճառն այն է՝ որ Աստուած ամենակալն զջերմերն պատճառ արար վասն մահուան մարդկան. զի շատն այն է՝ ՚ի մարդկանէ՝ որ ՚ի ջերմերոյն մեռանին: Վասն այտոր է՝ որ ջերման կարգին չաքսն առ բազում դասս մարդկան ծածկած է. այլ իմաստասիրական վարդապետքն ամէն մէկ զիրք մի արարին, եւ քննեցին, եւ պատմեցին վասն ջերմերոյն վարդապետութիւն, եւ ստածումն ըստ իւրեանց իմաստութեան:

ԽԵ

Վասն ստածմանն եւ բժշկութեան մետասանօրեայ ջերմանն:

Պատեհ է ՚ի հիւանդութեան յառաջքն որ զբնութիւնն կակղցնես, եւ տաս աֆթիմօնն ջրով եփած, կամ պանդր ջրով եփած. եւ զայդ տուր հետ մի քանի: Ապա թէ ջերմն հին լինի, եւ իւր դողալն եւ ցրտանալն պակաս լինի, տուր զդեղերն՝ որ քրտինք բերեն, զերդ զպղպեղով ճուարիշն, եւ անկժատի ճուարիշն, եւ զոր ինչ նման են սոցա: Այլ ա՛ռ բաբունիճ, եւ թուրք եղեւին, որ է բարձուենեկ, եւ ջրով եփէ աղէկ. եւ զայն ջուրն յերկու տաշտ ած. զմէկն առջեւ հիւանդին դիր, եւ զմէկայլն յետեւն. եւ զհիւանդն ծածկէ եւ զջուրն, որ ՚ի ջրին շոգւոյն եւ ՚ի տաքութենէն մարմինն շողանայ շոյտ եւ քրտնի. եւ հետ այնոր յամենայն երկու օր ՚ի բաղնիս մտո. այլ ՚ի նոպային օրն թո՛ղ զբաղնիսն, զի ահուկէ:

Այլ բժշկապետն Սահակ ասէ, եթէ հետ այս ջերմանս դողալն չլինի, եւ ջերմն խիստ լինի, ՚ի բասիլիկէն երակ առ, կամ ՚ի սափն: Ապա թէ հետ այս ջերմանս ՚ի մարմինն տաքութիւն լինի, եւ ՚ի նոպային օրն բերանն փրփուր գայ, տուր զանգժատի մաճունն: Ապա թէ այդ նշաննիդ չլինի՝ զոր ասացաք, եւ այս ջերմն ՚ի տաք հիւանդութեանն ՚ի վերջն լինի ընծայել, իւր թպտիրն այն է՝ որ ՚ի յար զբնութիւնն լուծանես դեղերովն, որ զսաւտայն յիստակէն ՚ի մարմնոյն. եւ պատրաստեցո ՚ի յամենայն ցեղ կերակրէ՝ որ սաւտայ ընծայեն:

Մահմատի Չաբարիայն ասէ, եթէ ջերմերոյն կարգին չաքսն յերեւան չեն. վասն այտոր պիտի՝ որ մարդիկ չվստահնան ՚ի դեղերն միայն, այլ պատեհ է՝ որ յուզեն եւ պետ այրնեն զիրուին, որ խասիաթով օգտեն, այն օրինակաւն՝ որ ՚ի չորեքօրեայ ջերմանն ՚ի

ստածումն 'ի վերջքն յիշեցաք. օգտակար է թէ Աստուած կամի: Խասիւթ զհլրական եւ զառանձին գործն է 'ի ասել, զոր անուանեն յատուկ:

Ապուճերիճն ասէ 'ի Լոյն պատճառոյ, եւ 'ի Լոյն Լշանոյ. կարգով օգտեն, օգնութեամբն Աստուծոյ:

ԽԶ

Պատմութիւն Լախագիտութեան վասն չորից ժամանակացն, որով յառաջագետ լինի բժշկին զմահուն եւ զկենացն յամենայն ցեղ հիւանդութիւնք:

Չի ամենայն ցեղ հիւանդութիւն՝ թէ սուր լինի, թէ յերկարօրեայ, չորս ժամանակս ունին, եւ չորս սահմանս: Իսկ պարտ է բժշկին անճարակ՝ որ գիտենայ զչորս ժամանակսն 'ի յամենայն ցեղ հիւանդութիւնս, զի իւրովն լինի յառաջագիտութիւն կենացն եւ մահուն: Նոյնպէս եւ իւրովն գիտենայ զհիւանդութիւնն՝ որ սուր լինի, եւ զայն՝ որ յերկարօրեայ. եւ զնիւթին զեփիլն, եւ զչեփելն, որ է զլուխքն եւ Լիւթն հիւանդութեան:

Արդ առաջին ժամանակն այն է՝ որ սկիզբն լինի հիւանդութեան եւ առաջք. եւ իւր սահմանն այն է՝ որ հիւանդութեան սհոկն 'ի բնութեան 'ի գործն հասանի. եւ բնութեանն դեռ լինի սկսել զհիւանդութեանն զգլուխքն 'ի յեփել:

Այլ ասէ Մասրճուայն բժշկապետն, եթէ առաջին ժամանակն ընդ երեք բաժանի: Եւ իւր առաջին բաժինն այն է, որ դեռ Լշան եւ պատահումն չլինի երեւեցել առ հիւանդն, եւ հիւանդն չզգայ եւ չիմանայ ոչ ինչ իրք զկատարելն: Եւ երկրորդ բաժինն մինչեւ յերեք օրն լինի. եւ այս բաժինս անտիճելով եւ կողոմելով չգայ ըղորդ. զի դեռ հիւանդութիւնն զինքն 'ի լման չլինի ցցուցել: Իսկ երրորդ բաժինն այն է, որ հիւանդն իւր մարմինն զգայ եւ իմանայ՝ որ փոխեցաւ 'ի յայլ իրք: Ապա անուանեցին առաջին ժամանակս՝ սկիզբն եւ առաջքն հիւանդութեանն. զի իւր գործոյն առին եւ իւր զանունն:

Իսկ երկրորդ ժամանակ հիւանդութեանն այն է՝ որ հիւանդութիւնն սկսանի յաւելլալն: Եւ իւր սահմանն այն է, որ հիւանդութիւնն հետէն զօրանայ եւ աճէ, եւ բնութեանն զօրութիւնն հետէն վատուծի եւ պակասի. եւ ուզէ՝ որ եփէ զհիւանդութիւնն եւ արձակէ, բայց տկարանայ եւ ձանձրանայ, եւ չիկարէ 'ի լման եփել, զի հետէն աճի հիւանդութիւնն: Այլ իւր սկիզբնէն 'ի վեր բնութիւնն առաջք այրնէ՝ եփել զհիւանդութիւնն, բայց հիւանդութիւնն հետէն զօրանայ եւ աճէ, եւ հիւանդին ուժն հետէն պակասի. մինչեւ գայ երրորդ ժամանակն, որ կատարի 'ի լման: Ապա անուանեցին զայս ժամանակս 'ի յաւելլ. զի իւր գործոյն առին եւ իւր զանունն:

Իսկ երրորդ ժամանակն հիւանդութեանն այն է, որ հիւանդութիւն միացեալ դադարի, եւ այլ չաճէ, եւ Լշաննին 'ի յերեւան զան, որ բնութիւնն հիւանդութեանն յաղթեալ լինի, կամ հիւանդութիւնն բնութեանն: Իսկ յայս 'ի ժամանակս 'ի լման եփի հիւանդութիւնն, զի դադարի միացեղ՝ եւ այլ չաւելլայ. եւ 'ի հոս ցուցանէ բնութիւնն՝ զոր ինչ լինել կամի: Ապա անուանեցին զայս ժամանակս 'ի լման եւ կատարելութեան ժամանակ. զի իւր գործոյն առին եւ զիւր զանունն:

Իսկ չորրորդ ժամանակ հիւանդութեանն այն է, որ հիւանդութիւնն 'ի պակասիլ առնու. զի բնութիւնն հետէն եփէ եւ հալէ, եւ սակաւ սակաւ արձակէ 'ի մարմնոյն: Եւ իւր սահմանն այն է, որ հիւանդութիւնն հետէն պակասի, եւ հիւանդին մարմինն հետէն թէթեւութիւնն եւ դուրութիւն լինի: Եւ սկսանի այս ժամանակս երբ կատարի հիւանդութիւնն, եւ երթայ մինչեւ 'ի վճարն. որ բնութիւնն հիւանդութեանն յաղթէ 'ի

լման, եւ հիւանդն 'ի հիւանդութենէն բարով 'ի դուրս գայ: Ապա անուանեցին զայս ժամանակս 'ի պակասն. զի իւր գործոյն առին եւ զիւր զանունն:

Եւ այլ պարտ է գիտենալ, որ իւրեանցն չաքսն ըստ հիւանդութեանն զօրութեանն լինի, եւ ըստ նոպային որպիսութեանն յառաջմէ մինչեւ 'ի վճարն: Իսկ բժշկին պարտ է քննել եւ իմանալ զհիւանդութեանցն գշորս ժամանակսն. զի անճարակ բժշկին կարիք ունի նոցա գիտութիւնն վասն երկու պատճառանացն. մէկն՝ որ յառաջագետ լինի զկենացն եւ զմահուն, զերդ որ այլ 'ի յառաջդ ասացաք. եւ մէկայլն՝ որ գիտենայ զտուրն եւ զերկարօրեայ հիւանդութիւնքն: Չի հիւանդն անելի 'ի կատարեալ ժամանակն մեռանի. զի երրորդ եւ կատարեալ ժամանակն զօրաւոր է քան զայլ երեք ժամանակսն: Եւ այլ լինի որ հիւանդն 'ի յաւելնալոյ եւ 'ի յերկրորդ ժամանակն մեռանի. բայց 'ի պակասելոյ եւ 'ի չորրորդ ժամանակն չմեռանի հիւանդն. զատել՝ թէ այլ նոր հիւանդութիւնն գայ յերեւան. եւ կամ իւր թպտիրն իրք մի թոյլ եւ դալատ լինի. եւ այն դալատն կամ հիւանդն լինի, եւ կամ 'ի բժշկէն, եւ կամ 'ի հիւանդին 'ի ծառայեականացն:

Իսկ դալատն որ 'ի հիւանդէն լինի այն է, որ չլսեր 'ի բժշկէն, այլ զիւր կամսն այրնէ՝ կերակրելով եւ ըմպելով, եւ այլ ամենայն այրնելօք հակառակ գայ բժշկին, նա նոր նիւթն ընծայէ, եւ նոր հիւանդութիւն կրկնէ 'ի վերայ հիւանդին: Իսկ դալատն որ 'ի բժշկէն լինի՝ այն է, որ 'ի բժշկելն եւ 'ի ստածելն թոյլ եւ դալատ թպտիրն լինի, զերդ ահուկոյ եւ վնասակար իրք լինի տվել հիւանդին. նոյնպէս զհիւանդութիւնն նորէ եւ կրկնէ 'ի վերայ հիւանդին: Եւ կամ իրք ասեն՝ որ հիւանդին դժար թուի, կամ 'ի սիրտ հանեն, կամ վախցնեն զհիւանդն, կամ հանց մարդ մտէ 'ի վերայ՝ զոր ատէ հիւանդն: Այս ամենայն պատճառնիս եւ իւրեանց նմանիքն զհիւանդութիւնն կրկնեն եւ նորէն 'ի վերայ հիւանդին: Յորժամ հիւանդութիւնն կրկնէ եւ նորէ, շատք մեռանին 'ի հիւանդաց. մանաւանդ երբ հիւանդութիւնն դժար լինի եւ ծանր, եւ հիւանդին զօրութիւնն տկար լինի եւ վատուժ:

Ապա թէ հիւանդութիւնն թեթեւ լինի եւ հեշտ, եւ հիւանդին ուժն զօրաւոր, նա իւր ողջութիւնն եւ բարին 'ի հիւանդութեանն 'ի կատարեալ եւ 'ի երրորդ ժամանակն լինի: Ապա թէ հիւանդին զօրութիւնն տկար լինի եւ վատուժ, պատեհ է բժշկին զայն կերակուրն տայ՝ զոր ուժ տան հիւանդին. զի ուժովն կարէ զհիւանդութիւնն 'ի ծար տանել: Ապա թէ հիւանդութիւնն մահաբեր լինի, նա բժիշկն յառաջ քան զկատարելութեան ժամանակն գիտաց այրնէ եւ ասէ զմահուն: Նոյնպէս եթէ հիւանդին զօրութիւնն վատուժ լինի եւ տկար, եւ հիւանդութիւնն զօրաւոր եւ ուժով, նա բժիշկն յառաջ քան զկատարելութեան ժամանակն ասէ զմահուն՝ ըստ հիւանդութեանն եւ ըստ ուժոյն որպիսութեանն:

Այլ հիւանդին 'ի հիւանդութեանն 'ի թպտիրն այսպէս պիտի որ լինի: Յորժամ հիւանդութիւնն երրորդ ժամանակն եւ կատարեալ սահմանն հասանի, պարտ է հիւանդին պարկեշտ կերակուր տալ. զի թէ կերակուրն հաստ լինի, նա բնութիւնն յայն հաստ կերակրոյն յեփելն զբաղի, եւ հիւանդութեան եփելոյն խափանի եւ 'ի գատ կենայ: Ապա թէ գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն յերկար կամի քաշել, պատեհ է որ զկերակուրն հաստ տայ, որ հիւանդին ուժն չզլորի եւ կորնչի. զի հիւանդութիւնն ուժովն կարեն մինչեւ 'ի կատարելութեանն սահմանն եւ 'ի վճարն 'ի ծարս տանել:

Այլ ասէ Գաղիանոս վասն երեք ժամանակացն, որ են յաւելնալն, եւ 'ի լման կատարիլն, եւ 'ի պակասիլ հիւանդութեանն, եթէ զայս երեք ժամանակս ցուցանեն երեք իրք. մէկն՝ հիւանդութեան բնութիւնն եւ երկրորդ՝ պատահմունքն, որ զկնի հիւանդութեանն լինին. եւ երրորդն՝ պատահմունքն նիւթին, որ զհիւանդութիւնն արար՝ եփելն եւ չեփիլն լինի,

որ է նիւթ: Իսկ հիւանդութեանն բնութիւնն այն է, որ բժիշկն տեսանէ յայն իրուին, որ հիւանդութեանն ժողովելն 'ի նոցանէ լինի. եւ այն իրուին՝ պատահմունքն առանձինն են բնութեանն, որ է իւրական, զոր խասիաթ ասեն, զերդ 'ի ջերմերն՝ հազն, եւ շնչոյն նեղնալն: Եւ երբ տեսանէ բժիշկն՝ որ այս պատահմունքս 'ի հիւանդութեանն սկիզբն են, եւ չեն 'ի պակասել եւ ոչ 'ի յաւելնալն, ապա գիտենայ՝ որ հիւանդութիւնն դեռ 'ի յառաջին ժամանակն է եւ 'ի սկիզբն:

Ապա թէ տեսանէ բժիշկն՝ որ հիւանդութիւնն հետէն յաւելնայ, 'ի հիւանդին մարմինն ծանրութիւն անկանի, եւ հիւանդին զօրութիւնն հետէն պակասի, գիտենայ որ հիւանդութիւնն 'ի յաւելնալոյ, եւ 'ի յերկրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ տեսանէ բժիշկն, որ պատահմունքն իւրեանց զօրութիւնն 'ի լման կատարի, եւ միացեղ դադարի, գիտենայ որ հիւանդութիւնն 'ի լման եւ 'ի կատարելութեան սահմանն եւ 'ի յերրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ 'ի յայն որպիսութենէն՝ զինչ որ լինի՝ 'ի պակասիլն առնու, եւ հիւանդն յիւր մարմինն հետէն թեթեւութիւն եւ դուրութիւն իմանայ, գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն 'ի չորրորդ եւ 'ի պակասելոյ ժամանակն հասաւ, եւ 'ի պակասելն էառ:

Իսկ այն պատահմունքն՝ որ զկնի հիւանդութեանցն լինին, զերդ որ ոմանց 'ի ջերմերն զլիսացաւութիւն հանդիպի, եւ ոմանց խելքն աւերի, եւ ոմանց տքնութիւն հանդիպի, եւ ոմանց 'ի լեզուն սեւութիւն անկանի, եւ այլ զոր ինչ նման են սոցա. իսկ յորժամ տեսանէ բժիշկն՝ որ այս պատահմունքս իւրեանց զօրութիւնն յաւելնան, ապա գիտենայ՝ որ հիւանդութիւնն յաւելնալոյ եւ 'ի յերկրորդ ժամանակն լինի: Իսկ յորժամ տեսանէ՝ որ այս պատահմունքս ամենայն իւրեանց զօրութիւնն 'ի լման հասանին, միացեղ դադարեն, եւ այլ չաւելնան, ապա գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն 'ի լման եւ 'ի կատարելութեան ժամանակն հասաւ, որ է երրորդն: Իսկ յորժամ տեսանէ բժիշկն՝ որ այս պատահմունքս 'ի պակասելն առնուն, եւ հիւանդութիւնն դեմս 'ի յաղէկն դնէ, ապա գիտենայ որ հիւանդութիւնն 'ի պակասելոյ եւ 'ի չորրորդ ժամանակն հասաւ, եւ 'ի պակասելն էառ:

Ապա այն նշաննին՝ որ հիւանդութեանն եփելոյն եւ չեփելոյն լինի, այս են: Յորժամ տեսանէ բժիշկն 'ի կարուրայն, կամ 'ի ձեռնալուրայն, կամ 'ի պալլամն՝ որ 'ի կրծոցն հազալով գայ, որ եփելոյն նշաննին չունին եւ չերեւան բնով, ապա գիտենայ բժիշկն՝ որ դեռ հիւանդութեանն սկիզբն է եւ յառաջին ժամանակն: Իսկ յորժամ յեփելոյ նշաննոյն իրբ մի սակաւ երեւնայ, գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն յերկրորդ եւ յաւելնալոյն ժամանակն հասաւ: Ապա թէ եփելոյն նշաննին աղէկ եւ 'ի լման երեւան, գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն 'ի յերրորդ եւ 'ի կատարեալ ժամանակն հասաւ, եւ 'ի պակասիլն կամի սկսանիլ: Իսկ իւր պակասելոյն նշաննին այն է՝ որ հիւանդն յիւր մարմինն թեթեւութիւն իմանայ. ապա գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն 'ի չորրորդ ժամանակն հասաւ, որ է 'ի պակասիլ հիւանդութեանն:

Ապա թէ հիւանդութիւնն 'ի նոպայով ջերմերոյն լինի, պարտ է բժշկին՝ որ զայն նշաննին, եւ զպատահմունքդ՝ զոր այլ 'ի յառաջդ ասացաք, 'ի նոպային ժամանակն յուզէ եւ տեսանէ: Նոյնպէս եւ զյաւելնալոյն զչափսն, եւ զեփելոյն. նոյնպէս եւ զյերկարութիւնն ջերմանն, եւ զկարճութիւնն, եւ զթեթեւութիւնն հիւանդութեանն հիւանդին, եւ զծանրութիւնն. զայս զամենեսեան տեսանէ բժիշկն ուրիշ ուրիշ, եւ 'ի վերայ հասանէ գիտութեամբ: Յորժամ տեսանէ զջերմն, որ իւր նոպայն այլ 'ի յառաջ եւ այլ շուտ գայ քան զանցեալ նոպայն, գիտենայ որ ջերմն 'ի յերկրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ տեսանէ՝ որ ջերմանն նոպայն այլ 'ի յետ եւ այլ յուշ գայ քան զանցեալ նոպայն, գիտենայ որ ջերմն 'ի յետին չորրորդ ժամանակն հասաւ, որ է 'ի պակասիլն: Ապա թէ տեսանէ բժիշկն՝ որ ջերմանն նոպայն օր մի քանի միացեղ դադարի, որ ոչ այլ 'ի յետ գայ եւ ոչ 'ի

յառաջ՝ քան զանցեալ նոպայն, ոչ այլ աւելի եւ ոչ պակաս քաշէ, գիտենայ որ ջերմն 'ի կատարելութեան եւ յերրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ տեսանէ՝ որ հիւանդին մարմինն թեթեւութիւն եւ դուրութիւն եւ հանգիստ յաւելնայ, գիտենայ որ ջերմն 'ի չորրորդ ժամանակն հասաւ եւ 'ի յետին սահմանն:

Եւ այլ տեսանէ զջերմանն նոպայն, եթէ յերկար քաշէ քան զանցեալ նոպայն, գիտենայ բժիշկն՝ որ ջերմն յաւելնալոյ եւ 'ի յերկրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ ջերմանն նոպայն այլ կարճ քաշէ քան զանցեալ նոպայն, գիտենայ որ ջերմն 'ի պակասելոյ եւ 'ի չորրորդ ժամանակն հասաւ: Ապա թէ տեսանէ զջերմանն ժամանակն՝ որ անցաւ, որ սակաւ լինի, եւ 'ի հիւանդին մարմինն չլինի թեթեւութիւն, գիտենայ զջերմն՝ որ 'ի յերկրորդ ժամանակն է եւ 'ի յաւելն: Ապա թէ տեսանէ՝ որ նոպային ժամանակն, եւ այն ժամանակն՝ որ անցանի նոպայն, եւ հաւասար լինին, եւ հիւանդին մարմինն սակաւ թեթեւութիւն եւ հանգիստ լինի, գիտենայ որ ջերմն 'ի յերրորդ եւ 'ի կատարեալ ժամանակն հասաւ:

Եւ այլ զայս գիտենալ պարտ է՝ որ ժամանակացն չափսն ըստ հիւանդութեան յերկարութեանն եւ ըստ կարճութեանն հետեւին: Իսկ 'ի սուր հիւանդութիւնսն՝ չորս ժամանակսն կարճ լինին. զի սուր հիւանդութեանն նիւթն, որ է խլտն, պարկեշտ լինի, նա տաքութիւնն զօրաւոր լինի. վասն այդ պատճառանացոյ շուտ եփի նիւթն, եւ շուտ արձակի հիւանդութիւնն: Ապա այն հիւանդութիւնքն՝ որ յերկարօրեայ լինին, ըստ նմին եւ նոցա չորս ժամանակսն յերկար քաշեն. զի յերկարօրեայ հիւանդութեանցն նիւթն հաստ լինի, եւ տաքութիւնն վատուծ. վասն այդ պատճառանացոյ յուշ եփի, եւ յերկար քաշէ: Նոյնպէս եւ վասն այդ պատճառանացոյ լինի՝ որ հիւանդութիւնքն 'ի յամարան աւուրքն շուտ արձակին, եւ չքաշեն յերկար. զի օդոյն տաքութիւնն բնութեանն օգնական լինի, եփէ եւ պարկեշտցնէ զնիւթն զայն՝ որ զտաքութիւնն արար: Իսկ սուր հիւանդութիւնքն երբ ձմեռան աւուրքն ուրդին, յերկար քաշեն, եւ չարձակի շուտ. զի օդոյն հովութիւնն զտաքութեանն գլուխքն հով պահէ. վասն այդ պատճառանացոյ իւր եփելն յերկար քաշէ, եւ հիւանդութիւնն յուշ արձակի: Այլ վկայէ այտոր չորեքօրեայ ջերմն, որ է տետաւտեոսն, որ 'ի յամռան եղանակն՝ եւ 'ի տաք աւուրքն իւր նոպային ժամանակն կարճ լինի. իսկ 'ի յաշնան եղանակն՝ եւ 'ի ձմեռան, եւ 'ի հով աւուրքն, իւր նոպային ժամանակն այլ յերկար քաշէ:

Այլ ասէ Գաղիանոս, եթէ նշաննին՝ որ ցուցանեն զսուր հիւանդութիւնքն եւ զերկարօրեայ, երկու իրք են. մէկն այն է՝ որ բժիշկն յառաջագետ լինի զայն իրուին՝ որ հիւանդութիւնն եւ ողջութիւնն իւրովն լինի. եւ մէկայլն այն է, որ գիտենայ զհիւանդին զկերակրոյն զչափսն: Իսկ այն իրուին եւ պատճառն՝ որ ողջութիւնն իւրովն լինի՝ 'ի սուր հիւանդութիւնքն բուրհանն է. իսկ 'ի յայն հիւանդութիւնքն՝ որ յերկարօրեայ լինի, իւր ողջութեան պատճառն եփիլն է խլտին, եւ արձակիլն: Ապա պարտ է՝ բժիշկն յառաջագետ լինի եւ ասէ՝ 'ի սուր հիւանդութիւնքն զկենացն, յորժամ բուրհանն աղէկ լինի. նոյնպէս եւ զմահուն ասէ, յորժամ բուրհանն գէշ լինի: Ապա 'ի յայն հիւանդութիւնքն՝ որ յերկարօրեայ են, ասէ զհիւանդին զերծանիլն եւ զապրիլն, յորժամ եփի հիւանդութիւնն, եւ արձակիլ ամուռ: Նոյնպէս եւ զմահուն իմաց այրնէ, յորժամ չեփի հիւանդութիւնն եւ չարձակի, մանաւանդ երբ հիւանդին ուժն պակասի:

Ապա այն պատճառն՝ որ հիւանդին կերակրոյն չափսն լինի՝ այս է, որ սուր հիւանդութիւնն շուտ հասանի յերրորդ ժամանակն եւ 'ի կատարելութեան սահմանն. յայնժամ հիւանդին բնութիւնն կարիք ունի 'ի պարկեշտ կերակուր, որ ուժ ամուռ եւ զհիւանդութիւնն եփէ եւ արձակէ: Ապա թէ կերակուրն հաստ լինի, նա բնութիւնն զբարի 'ի հաստ կերակրոյն եփիլն, եւ խափանի 'ի հիւանդութեանն 'ի յեփելոյն դադարէ:

Եւ 'ի գատ մայ: Ապա այն հիւանդութիւնքն՝ որ յերկարօրեայ լինին, կարիք ունի հիւանդին բնութիւնն 'ի հաստ կերակուրն, որ 'ի յուժոյն չանկանի եւ տկարանայ. զի հաստ կերակուրն աւելի ուժ տայ քան զպարկեշտ կերակուրն. եւ վասն յերկարօրեայ հիւանդութեանն եւ յերկար քաշելոյն, կարիք ունի հիւանդն ուժ առնուլն. զի ուժովն կարէ զհիւանդութիւնն 'ի գլուխ տանել՝ մինչեւ 'ի կատարելութեան ժամանակն եւ 'ի սահմանն: Ապա երբ այդ հիւանդութիւնդ 'ի կատարեալ ժամանակն եւ 'ի սահմանն հասանի, պարտ է որ բժիշկն զկերակուրն պարկեշտ այրնէ, որ բնութիւնն զհիւանդութիւնն շուտ եփէ, եւ արձակի 'ի մարմնոյն:

Այլ պարտ է գիտենալ՝ որ սուր հիւանդութիւնքն այլ եւ այլ աստիճանք ունին. կան որ խիստ 'ի լման սուր լինին, եւ իւրեանց բուրհանն յերրորդ եւ 'ի չորրորդ օրն լինին. եւ այլ կան որ բուրհանն յեւթն օրն լինի. եւ այլ կան որ յեւթնեւտասն օրն լինի. եւ այլ կայ որ 'ի քսանեւմի օրն լինի: Ապա հոտ քսան աւուրն տկարանայ բնութիւնն, եւ չկարէ յամեն երեք օր ու կէս բուրհան այրնել, այլ յամեն երեք օր ու կէս յիմաց այրնէ. զի 'ի քսան օրէն 'ի վեր յամեն եւթն օր լինի բուրհանն մինչեւ 'ի քառասուն օրն: Այլ ամենայն հիւանդութիւն՝ որ ընդ քառասուն օրն անցանի, չանուանեն զայն սուր հիւանդութիւնք, այլ յերկարօրեայ անուանեն. եւ ամենայն հիւանդութիւն՝ որ յերկարօրեայ լինին, նոյնպէս եւ զիւր կատարելութեան սահմանն յերկար աւուրս քարշէ: Ապա այն ցեղ հիւանդութեանցն արձակիլն եւ ողջանալն բուրհանով չլինի, այլ եփելով լինի. զի հիւանդարար խլտն եփի, եւ սակաւ սակաւ արձակի 'ի մարմնոյն:

Ապա թէ այն ցեղ հիւանդութիւնքն՝ որ յերկարօրեայ լինին, չեփին եւ չարձակին, եւ հիւանդին զօրութիւնն պակասի, այն մահու նշան է, եւ զմահն ցուցանէ: Ապա զայն նշաննին՝ որ ցուցանեն զսուր հիւանդութիւնքն եւ զերկարօրեայ, կարէ գիտենալ բժիշկն 'ի հիւանդութեան 'ի ցեղէն, եւ 'ի հիւանդին շարժելոյն, եւ 'ի մաճասին երակէն, եւ 'ի կարուրայէն, եւ 'ի հիւանդին մարմնոյն եւ 'ի կերպէն. զայս զամենես կարէ ճանաչել բժիշկն եւ իմանալ զսուր հիւանդութիւնն եւ զերկարօրեայ: Իսկ գիտենալն 'ի հիւանդութեանցն 'ի ցեղէն այն է՝ որ գիտենայ զսուր եւ զայրեցող ջերմերն, զերդ զյիստակ օր ընդ մէջ ջերմն, որ է տոբիտոսն. եւ զայլ ամենայն այրեցող ջերմերն, որ 'ի մաղձին եւ յարեանն բորբոսելոյն լինի: Նոյնպէս եւ այտոցին՝ որ ցներքսէ մարմնոյն լինին, զերդ սարսամն, եւ կողացաւութիւն, եւ հեւքն, որ պատճառնին 'ի թոքէն լինի, որ է շղերոյն յիրար գալն, եւ թաշանիշն, եւ սքթայն, եւ ամենայն աւուր ջերմն՝ որ 'ի պալղամէն լինի, որ է ափիմեռիտոսն, եւ այն ջերմն՝ որ իմիտոբիտոսն ասեն. զայս զամենայն, եւ զիւրեանց նմանիքն՝ սուր անուանեն. թեպէտ եւ կայ 'ի նոցանէ՝ որ 'ի պալղամէն եւ 'ի սաւտայէ լինին: Իսկ բժշկապետքն զայս սուր անուանեն, վասն զի իւրեանց արձակիլն բուրհանով լինին. եւ զայս զամենայն ցեղ հիւանդութիւն՝ որ բուրհան չունին, յերկարօրեայ անուանեն:

Իսկ գիտենալն 'ի հիւանդին շարժելոյն այն է, յորժամ տեսանեն զհիւանդն՝ որ շուտ շուտ շարժի, եւ տաքութիւնն ուժով լինի, եւ ցաւն խիստ լինի, նա այդ ամենտ ցուցանեն՝ որ հիւանդութիւնն սուր լինի: Ապա թէ այդ ամենայն 'ի հակառակն լինի, որ հիւանդին շարժիլն յոյլ լինի եւ յուշ, եւ տաքութիւնն պակաս, եւ ցաւելն կակուղ լինի եւ պակաս, եւ ամենայն նշաննիդ ցուցանեն՝ որ հիւանդութիւնն յերկարօրեայ լինի:

Ապա այն նշաննին՝ զոր մաճասին երակն ցուցանէ, այն է՝ որ մաճասին երակն մեծ լինի եւ շոյտ, եւ իւր ոթալն յար լինի եւ 'ի կից. իսկ այս ամենայն նշաննիս ցուցանեն՝ որ հիւանդութիւնն սուր լինի: Ապա թէ մաճասին երակն փոքր լինի, եւ իւր շարժիլն յուշ լինի եւ յոյլ, 'ի յար եւ 'ի կից լինի, այս ամենայն նշաննիս ցուցանեն՝ որ հիւանդութիւնն յերկարօրեայ լինի:

Իսկ այն նշաննին՝ որ հիւանդին մարմինն եւ կերպն ցուցանէ՝ այն է, որ հիւանդն ընդ յառաջքն նիհարանայ, եւ միսքն պակասին, եւ երեսացն գոյնն փոխի՝ ՚ի կարմիրն կամ ՚ի դեղինն. այս ամենայն նշաննիս ցուցանեն՝ որ հիւանդութիւնն սուր լինի: Ապա թէ հիւանդին մարմինն ընդ յառաջքն չնիհարանայ, եւ իւր միսքն չպակասին, եւ երեսաց գոյնն չփոխի, այս ամենայն նշաննիս ցուցանեն՝ որ հիւանդութիւնն յերկարօրեայ լինի: Ապա թէ այն նշաննին՝ որ գտուրն ցուցանեն, եւ այն՝ որ զերկարօրեան, միջավայր ուրդին, եւ ՚ի միջասահմանն լինին, նա ցուցանեն զհիւանդութիւնն՝ որ ոչ սուր լինի եւ ոչ յերկարօրեայ, այլ միջավայր լինի, եւ զմիջասահմանն ունի ընդ սուրն եւ ընդ յերկարօրեան: Ապա պարտ է բժշկին՝ որ զայս նշաննիս զամենս աղէկ իմանայ, որ չխալտի՝ ՚ի հիւանդին ՚ի ստածումն եւ ՚ի բժշկելն, եւ զհիւանդն վնասէ, եւ ինքն լինի պատճառ մահուան նորա, որպէս ասացին իմաստասերքն:

Վասն եթէ քանի դիմօք մարդի բժիշկն զհիւանդն ստածել եւ բժշկել:

Պարտ է բժշկին, որ զհիւանդն ծառայէ, որ զդէմնն ՚ի տասն իրք այրնէ. առաջին դէմնն, որ յուզէ զպատճառն ցաւոյն եւ զհիւանդութեանն. եւ երկրորդն՝ զպատահմունքն, որ զկնի հիւանդութեանցն լինի. երրորդն՝ զխառնուածք մարմնոյն. չորրորդ՝ զկերպ մարմնոյն. հինգերորդ՝ զաւուրքն զհիւանդին. վեցերորդն՝ օդոյն զորպիսութիւնն եւ զերկրին. եօթներորդ՝ զեղանակն ՚ի չորից եղանակաց տարւոյն. ութերորդ՝ զաշխարհն իմանալ՝ ուստի հիւանդն է. իններորդ՝ զսովորութիւն հիւանդին. տասներորդ՝ զուժն եւ զօրութիւն հիւանդին:

ՆՈՒՄԽԱՅՔ

ԶԱՆԱԶԱՆ ՑԵՂ ԶԻՎԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԴԵՂԵՐՈՅՆ

Զապ այարիճ որ օգտէ գլխոյն եւ աչացն եւ ոսկերացն, եւ հանէ զաւելուածքն եւ զգիծութեներն ՚ի գլխոյն եւ ՚ի յամենայն մարմնոյն: Ա՛ն հինգ ազգ հալիլէ, սապռ, ըռեւանդ, կարմիր վարդ, դարիկոն, թրպուր կէս կէս դրամ. շահմ խանգալ, սակամոնի, աֆթիմոն, հնդի աղ, քիթրէ, մուխլագրախ, անիսոն մի մի տանկ. պալասանի փայտ, եւ պտուղ, ասարօն, սալիխայ, մազտաքէ, դարիսենի, սումպուլ, զաֆրան, օշինդր, հայ քար, ջիււտ քար, լազուարդ քար, սուրինճան, պուզիտան, հապսիլ կէս կէս դանկ. լոսէ զամենտ մանտր, եւ զսակամոնին խոշոր, եւ շաղէ սաթամճի ջրով, հապ արա:

Գաղիանոսի հապն խիստ աղէկ՝ որ իբրեւ զառաջինս գործէ: Ա՛ն սապռ, սակամոնի, շահմ խանգալ, հնտի աղ, աֆթիմոն, դարիկոն, սեւ հալիլէ, մազտաքէ, քիթրէ, մուխլագրախ, անիսոն ռուպ ռուպ, լոսէ, եւ շաղէ հնտիպէի ջրով:

Զապտ հապ, որ կոչի ոսկի, որ հանէ զսաֆրան ՚ի գլխոյն եւ ՚ի մարմնոյն, եւ տանի զդեղնութիւնն: Ա՛ն սապռ մի դրամ. դեղին հալիլէ կէս դրամ. կարմիր վարդ կէս դրամ. մազտաքէ, եւ քիթրէ, սակամոնի, զսաֆրան, մուխլագրախ երկու երկու տանկ. լոսէ, եւ շաղէ հնտիպէի ջրով:

Զապ գլխացաւի, երբ ՚ի հոսկէ լինի, եւ աւուրք ցաւէ. եւ աչաց եւ ականջաց: Ա՛ն սապռ մի դրամ. շահմ խանգալ ռուպ մի. սակամոնի, մոխլագրախ, դարիդօն մի մի տանկ. լոսէ, եւ շաղէ ըռագիանի ջրով, հապ արա:

Այլ գլխացաւի, թէ ՚ի հոսկէ լինի, թէ ՚ի շողոյ: Ա՛ն սապռ երկու դրամ. օշինդր մի դրամ. մազտաքէ, եւ կարմիր վարդ կէս կէս դրամ. լոսէ, եւ շաղէ ըռագիանի ջրով:

Որոյ բնութիւնն հով է, եւ ցաւէ ոսկերթն եւ գլուխն, ղուրս օգտակար է եւ գոված: Ա՛ն սպիտակ թրպուր լոսած մի դրամ. սուրինճան, եւ պուզիտան, մանիշակ, դեղին հալիլէ, դարիդօն, աֆթիմոն կէս կէս դրամ. փենատակ, զանճապիլ, անիսոն, խորընդատ, սակամոնի, հապնիլ, խորասանի մի մի տանկ. լոսէ, եւ շաղէ քարաուզի ջրով, հապ արա կամ ղուրս:

Սուրինճանին հապն՝ որ օգտէ ոսկրցաւի խիստ աղէկ: Ա՛ն սուրինճան, պուզիտան, խորընդատ, մուղլագրախ, փենատակ, սեւ հալիլէ, սապռ, թրպուր կէս կէս դրամ. սակամոնի տանկ մի, եւ արա՛ որպէս զայդ:

Յապ՝ որ հալէ զմեծ եւ զպինդ փայծաղն: Ա՛ն սապռ եւ քապրենոյ տակի կեղէւ չորցուցած կէս կէս դրամ. սեւ պղպեղ, ասարօն, զըռեւանդ յերկայն, որ է սղընկան տակն, երիաս՝ որ է մրտին տակն, սումպուլ տանկ տանկ. ու մուխլ տանկ մին. եւ տուր պզրկատունի սրբնճախնով:

Լոթին ղուրսն, որ օգտէ լերդին, եւ կալուածոցն, եւ փայծղան, եւ յայտոցէն՝ որ լինի ՚ի ստամոքբերանն, եւ ՚ի լերդն ՚ի հին տաքութեանն, ՚ի յարծուեցն՝ որ կոչի մսի արծուիք, եւ յորդէջրիեղն: Ա՛ն լոթ ընտրած, եւ տորուն, եւ անիսոն, քարաուզի հունդ, օշինդր, լեղի նուշ կեղեւած, լեղի խուստ, չոր ռասան, դարիսենի, ըռեւանդ յերկայն, դաւեթի քամութս, եւ կարմիր տակերն, աղա՛ եւ մաղէ. եւ շաղէ տաք ջրով, եւ արա՛ ճճվնի մթխալ մթխալ. առնելոյն չափն ճճու մի, տաք ջրով:

Ղաֆէթի ղուրսն, որ օգտէ ՚ի հին տաքութենէն, եւ ՚ի յարականէն, ՚ի լերդին ցաւոյն, եւ ՚ի կալուածոցն: Ա՛ն ղաֆէթի քամութս վեց դրամ. կարմիր վարդ, սումպուլ երկու երկու. ըսթար, թառանկոյն վեց դրամ. տապաշիր երեք դրամ. զթառանկոյն հալէ տաք ջրով, եւ զայլ դեղերտ աղա՛ եւ մաղէ, եւ ՚ի ներս արկ եւ շաղէ, եւ հապեր արա, եւ ՚ի շուքն չորացո, եւ ած ՚ի քո պետք:

Կթխայ՝ որ տան ուժով մարդկաց, զի մեծ է եւ ուժով: Ա՛ն թառանկոյն տասն դրամ. խիարշամպէի մէջ, թմրիկոյն հանած ՚ի կտէն տասն տասն դրամ. սիրակ նուշ հինգ դրամ. զայսոնք դի՛ր ՚ի պտկի մի, եւ ած ՚ի վերայ ջուր՝ որ ծածկի, եւ դի՛ր որ թրջի. եւ առ յունապ քսան հատ. սալորի չիր քսան հատ. սպոտան երեսուն հատ. սպիտակ չամիչ քսան դրամ. պասպայիճ քերած եւ ձարձատ այրած երեք դրամ. աֆթիմոն երկու դրամ. հնդի աղ կէս դրամ. մանիշակ, եւ նոնոֆար, վարդ, ըռագիանէ, անիսոն, հացհամեմի հունդ երկու երկու դրամ. զամէնս դիր ՚ի լրտիկ մի, եւ ա՛ծ ՚ի վերայ Յալպայ լիտր մի ջուր, եւ եփէ ինչուր իրեքէն մէկն մնայ, եւ ա՛ն ՚ի յետ՝ որ յեփչի. աճռէ եւ քամէ ՚ի սուրբ քթեթ, այս ջրովս աղէկ աճռէ զթրջած դեղերտ, քամէ ընդ ձարեմաղ ՚ի վայր. ապա ձգէ ՚ի ներք աղցած թրպուր, եւ խարիկոն կէս կէս դրամ. սակամոնի, մազտաքէ, ըռեւանդ, սենի, մուխլագրախ տանկ տանկ, եւ ձգէ ՚ի ներք շաքար՝ որ քաղցրանայ, եւ լից ՚ի վերայ երկու դգալ նշի ձեթ, եւ ա՛ն յանուն Յիսուսի Քրիստոսի:

Կթխայ փոքր, որ տան վատուժ մարդոյ: Ա՛ն թառանկոյն, խիարշամպէի մէջ տասն տասն դրամ. եւ դի՛ր ՚ի թրջոց. ա՛ն պասպայիճ ձարձատ այրած տասն դրամ. սենեմաքի հինգ դրամ. ձարիսոտ, եւ թորթ հինգ հինգ դրամ. սպիտակ չամիչ կաթփած տասն դրամ. մանիշակ, նոնոֆար, կարմիր վարդ, ըռագիանէ, հացհամեմի հունդ երկու երկու դրամ. յունապ հնգետասան հատ. սպոտան քսան հատ. սալորչիր քսան հատ. դիր զայսոնք ՚ի կճիճ մի, եւ ա՛ծ ՚ի վերայ երեք կարգ եւ կթխայ ջուր, եփէ ինչոր մէկն մնայ, եւ ա՛ն ՚ի վար՝ որ յեփչի. աճռէ եւ քամէ ընդ սուրբ քթեթ ՚ի վայր, եւ այդ ջրովդ աճռէ զթրջոցն աղէկ, քամէ ընդ ձարեմաղի, լի՛ց ՚ի վերայ երկու նուկի նշի ձեթ, տուր յանուն Քրիստոսի:

Այլ ամենայն՝ որ դեղ կամենայ առնուլ, պարտ է յայնժամ առնուլ՝ որ չլինի անելի շող կամ հով, յաշուն եւ 'ի գարուն. յառաջ պատրաստ կենայ. երեք օր խմէ մուխլ գայս: Ա՛ն յունապ, սալորչիր տասն տասն հատ. սպիտակ չամիչ տասն դրամ. քերած պասպայիճ եւ ձարձատ արած երկու դրամ. ըռագինէ, հացհամեմսի հունդ երկու երկու դրամ. տուղտ, թորթ, ձարխոտ, մանիշակ, նոնոֆար, կարմիր վարդ մի մի դրամ. եփէ ու քամէ 'ի վերայ կոշկոռ մի շաքարի. եւ ա՛ծ 'ի վերայ դգալ մի նշի ձեթ, եւ խմէ: Եւ զմարմինդ ջեր պահէ այդ երեք օրտ. եւ 'ի յամեն անկ կերակրոց պատրաստ կալ, 'ի թթուէ, 'ի կծուէ եւ յաղի իրաց. հաւ եփած կամ խորված, շշկի միս, կամ գառան, կամ ուլոյ, զօմին եւ բանջար, եւ անարատ գինի, բայց պարկեշտ ուտել եւ խմել, եւ ոչ անելի: Որ զդեղն առնուլ կամենայ՝ որովայնսն սպրկիկ պիտի, որ հովութիւն չլինի յորովայնսն, ո՛չ խոցտուկ, ո՛չ մաղձարժ, զի մահուչափ վնասէ՝ թէ յառաջ յորովայնսն արատ կենայ. եւ դեղին հետ 'ի հովէ պատրաստ կենայ. եւ թէ ժամն ջերմն լինի, զմարմինն անելի չպիտի խողիրել. եւ երեք օր գայդ պատրաստ կերակուրդ կեր հետ դեղին, զատ 'ի բանջրեն՝ եւ ջեր կենալ:

Եւ թէ դեղն փակուց այրնէ, նշանն այն է՝ որ փորն չկապի, եւ դեղին համն 'ի ստամոքացն գայ. պարտ է մինչեւ սրբի դեղն 'ի ստամոքացն՝ 'ի կից կից տաք ջուր խմել եւ շրջել՝ որ փակոյցն 'ի վեր գայ, եւ հետ շող ճուլապ խմէ, եւ պահ մի կենայ՝ որ փակոյցն 'ի վայր ելնէ: Եւ թէ խոստուկ ունենայ, ա՛ն հինգ դրամ մանիշակ, եռցո, եւ քամէ 'ի վերայ տասն դրամ շաքարի. եւ թէ լուծութիւն ունենայ հետ խոցտուկին, դգալ մի պզրղատուն եւ ըռահնի հունդ բովիրէ, եւ հետ մանիշակ ճուլապին տուր որ խմէ: Եւ թէ կապի կարիք չկայ, մանիշակ ճուլապդ մէն տուր, որ խմէ. եւ զոտքն եփած մախրըջուրն դնել՝ կապէ: Զակթի դեղնուցն, եւ 'ի ներք սակաւ մի կիր, որ զերդ փաղաղ լինի, եւ 'ի վերայ փոքր փորոյն կապէ. եւ թէ հով դիպի, կամ խոցտուկ շարժի, կամ կրկնակի լուծումն լինի, գայդ կապերտ արա: Այլ յառաջ ջրէ պատրաստ կենայ պարտ է՝ որ չսնկի յայտ, զի մահօրն 'ի մօտ է:

Շարապ եւ մաղձդեղ, որ քաղէ զսաֆրան եւ զդեղնութիւնն: Ա՛ն երեք դրամ դարիսենի, ջնջիւէ եւ ձգէ 'ի նուկրայն. եւ երեք դրամ անիսոն. սումպուլ, մագտաքէ երեք երեք դրամ. մուխլագրախ երեք դրամ. աղա 'ի հաւանն ընդ իրար, եւ ձգէ 'ի նուկրայն, լից 'ի վերայ երկու հարիւր դրամ ջուր, եւ եփէ որ երեքէն մէկն մնայ. ա՛ն 'ի յետ եւ դիր 'ի գատ, եւ քամէ, եւ խառնէ յայդ ջուրտ հարիւր չորս դրամ սերկելիլի ջուր. եւ ձգէ 'ի ներք երկու հարիւր դրամ շաքար, եւ եփէ՝ զերդ որ այլ շարապի ռասմ է, ինչ մնայ ամենտ երկու հարիւր դրամ. եւ ապա ձգէ 'ի ներք քսան դրամ վարդեջուր, եւ առ 'ի գատ՝ որ հովնայ. եւ ձգէ 'ի ներք տասն դրամ սակամոնի. առնելոյն տասն դրամ:

Նշանք լուծման մաճունի այս է, որ օգտէ կոլնջի, եւ ամենայն ցեղ մաղձոյ: Ա՛ն սերկելիլ կամ խնձոր, կտրէ եւ եփէ գինուով. ծեծէ՝ որ ընդ մաղն 'ի վայր ելնէ, դրամակշեռ երեք հարիւր. ա՛ն մեղր եւ եփէ, եւ զուֆրն ա՛ն վերհարիւր դրամակշեռ. ա՛ն թրպութ, հալիլէ քապուլի եւ դեղին, եւ պալիլաճ 'ի կտէն հանած, սեւ հալիլայ, շիրամլաճ, մանիշակ, յամեն մէկէ քսան դրամ. աֆթիմոն տասն դրամ. անիսոն, մագտաքէ, զանճապիլ, քիթիէ հինգ հինգ դրամ:

Այս ուրիշ է: Ա՛ն սումպուլ, խարանֆուլ մի մի դրամ. դարաֆուր, որ է դարապղպեղ, երեք դրամ ըռուպ. ալսուս հինգ դրամ. պասպայիճ քսան դրամ. սուրինճան տասն դրամ. պուզիտան տասն դրամ. դարիղօս քսան դրամ. փեննայ հինգ դրամ. զաֆրան մի դրամ. պղպեղ երեք դրամ. դարիսեն հինգ դրամ. աղա՛ եւ մաղէ՛. եւ եփէ զմեղրն եւ զխնձորն ընդ իրար, մինչեւ 'ի թանձրութիւն դառնայ, եւ ա՛ն դիր 'ի հովն. եւ նշի ձիթով մշիւէ զայս լոսած դեղերս, եւ 'ի ներս լից, եւ խառնէ ինչոր հովնայ, որ չկուտկտի դեղերս.

Եւ տո՛ւր ամէն կարեց վեց դրամէն մինչեւ 'ի տասն՝ ըստ ուժոյն. ապա այլ աւելի մի՛ տար:

Վասն մաճունի՝ որ լուծումն առնէ, եւ հանէ գթամին յաղեցն, եւ սրբէ զստամոքսն 'ի պալղամէ, եւ օգտէ կուրնջի, եւ հալածէ զթուխմայն, եւ զբորբոսն՝ որ լինի 'ի ստամոքացն 'ի բերանն, եւ 'ի պալղամէ սրբէ: Ա՛ն ամրաւ ընտրած վաթսուն դրամ. դիր 'ի աման, եւ լից 'ի վերայ բարկ քացախ գինւոյ վաթսուն դրամ. եւ դի՛ր օր մի եւ գիշեր մի 'ի թրջոց. եւ ձեռօքդ աճռէ, եւ ընդ խոշոր մաղ 'ի վայր անցո. եւ քանի դիր չաքդ՝ սպիտակ մեղր ա՛ն 'ի յինքն խառնէ՛, եւ զանճապիլ, դարիսէն, պղպեղ երեք երեք դրամ. սատափի տերեւ չորս դրամ. նուշ կեղեւած չորս դրամ. սակամոնի երկու դրամ եւ կէս, սպիտակ թրպուր՝ քերած գդրուցի կեղեւն, երկու դրամ. զայս դեղերս ծեծէ եւ զնուշն՝ ուրիշ ուրիշ, եւ յայտ մեղրտ եւ ամրաւդ խառնէ, եւ շաղէ՛ որ միաւորի, եւ յաման դիր. երբ 'ի պէտս անկանի ոք յայս ցաւերս, առցէ 'ի սմանէ ըստ ուժոյն, թէ պիտի լուծման՝ առնու ուժով, հինգ դրամ, եւ ոմանք չորս. եւ թէ կուիինջն ուժով լինի, դու եօթն դրամ ա՛ն. օգտէ Աստուծով:

Սփուփ վասն արեան եւ խիստ լուծման: Ա՛ն քահրիպար, եւ յատպէ, ճուլինար, եւ աղբրաց արիւն, գղթոր, քաղցր նռան քիթ, սեւ չամչի կուտ կամ խաղողի, աղընծէ զինքս, եւ լեսէ՛ խիստ մանտր. եւ եթէ ոք յայս ցաւերս անկանի, դու տո՛ւր զինքս թերխորով հաւկթով, կամ խնձորի շարապով, կամ հապալասի. եւ թէ հետ կերակրոյ կարես տալ՝ զինչ եւ իցէ կերակուրն, երկու կամ երեք տարպայ. թէ չօգտէ, դու այլ մի՛ մնար հիւանդին: